


ԱՐԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ  
ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 10

ԱՌԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԸ ԵՄ ՄԵԵ ԵՂԵՌԻՆԸ



ՄԱՍ 10 - րդ

ԼՈՍ ԱՆՃԵԼՍ - 2002

AVETIS PAPAZYAN

THE ARMENIAN QUESTION AND THE GENOCIDE

LOS ANGELES, 2002 PART -10

Աւարտին է մօտենում 2001 թուականը եւ շուտով կը սկսուի նոր Տարին, 2002 թուականը: Այս օրերին, մարդ ազնայ ընկնում է մտորումների մէջ, թէ ի՞նչ յիշարժան իրադարձութիւններ տեղի ունեցան անցած տարուայ ընթացքում եւ ինչպիսի՞ յոյսերով եւ երազներով մուտք պիտի գործենք 2002 թուականը: Ուստի նախքան ամանորեայ մաղթանքներին անցնելը, ուզում եմ կանգ առնել անցնող տարում Աշխարհում եւ մեր Հայրենիքում տեղի ունեցած մի քանի կարեւոր իրադարձութիւնները վրայ: Ամբողջ աշխարհը միահամուր ցաւակցելով դատապարտեց այդ ահաւոր օդահենային ահաբեկչական գործողութիւնները եւ պահանջեց պատժել յանցագործներին:

Այսօր այդ հրեշտակն ոճիրի պատասխանատուները պատժուել են եւ պատժուում են: Բնականաբար այդ քստմնելի արարքը իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ միջազգային յարաբերութիւններին տնտեսական եւ քաղաքական միջաբեկ յոլորտների վրայ:

Սեպտեմբեր 11-ի ծանրագոյն ողբերգութիւնը խորը վիշտ պատճառեց նաեւ հայ ժողովրդին, թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում: Հայաստանի կառավարութիւնը անմիջապէս արձագանգելով, իր աջակցութիւնը յայտնեց միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի գործում: Բնականաբար, այս տխուր իրադարձութիւնը ինչ որ չափով իր ազդեցութիւնը ունեցաւ նաեւ Հայաստանում նախապատրաստուող տրեւիսական տարելիցների վրայ:

Յայտնի է, որ Սեպտեմբերի 21-ին լրացաւ Հայաստանի 3-րդ Հան-

րապետութեան յոբելիական տասնամեակը: Այն ըստ պատշաճի նշուեց «կարէն Տէմիրճեան» մարզամշակութային համալիրում: Իր ելույթում Հայաստանի, Հանրապետութեան նախադահ Ռոպէրթ Գոչարեանը մատնանշեց, որ բազում դժուարութիւններով հանդերձ կատարուում են որոշակի քայլեր ժողովրդի կենսամակարդակը բարելաւելու ուղղութեամբ:

Այնուհանդերձ ցաւալի էր, որ նման տարեդարձը նշուեց տնտեսական դժուարութիւնների եւ շարունակուող չարաշահումների ու անօրինակաւութեան պայմաններում: Այնպէս որ ժողովրդին համակեց տօնական բարձր տրամադրուածութիւնը:

Սեպտեմբերի 22-ին էջմիածնի մայրավանքում տեղի ունեցաւ միւռոնօրհնէքի աւանդական արարողութիւնը հայ եւ օտար հոգեւոր պետերի մասնակցութեամբ: Իսկ յաջորդ օրը Երեւանի կեդրոնում նորակառուց Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարում կատարուեց եկեղեցւոյ օծումն ու պաշտամունքի բացումը, որը նուիրուած էր Հայաստանում Քրիստոնէութիւնը Պետական կրօն Հռչակելու 1700 յոբելիական ամեակին: Այս կապակցութեամբ տարբեր քաղաքներում տեղի ունեցան այլ հանդիսութիւններ եւս:

Հարկ է նշել, որ անցնող տարուայ ընթացքում թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում շատ մեծան հոսեց այսպէս կոչուած «Հայ-թրքական հաշտութեան յանձնախումբի» գործունէութեան շուրջ: Եղան բաւականաչափ թուով քննադատական սուր յղումներ, ուր բացայայտ նշում էր այդ յանձնաժողովի վնասակար գործունէութիւնը հայ ժողովրդի հանդէպ:

Վերջապէս, Դեկտեմբերի 11-ին հիմքից խախուտ այս յանձնաժողովի գործունէութիւնը առկախուեց հայ անդամների կողմից:

Այո՛, հիմքից խախուտ, որովհետեւ նման հանդիպումների նախաձեռնութիւնը նախ պէտք է, որ տեղի ունենար պետական մակարդակով, իսկ երկրորդ ամենակարեւորը՝ թուրքիայի կողմից հայոց ցեղասպանութեան փաստը պաշտօնապէս ընդունելուց յետոյ: Մինչդեռ թրքական կառավարութիւնը շատ հեռու էր հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու մտադրութիւնից:

Այսօր թուրքիայում ոչ միայն ժխտում են հայոց ցեղասպանութիւնը, այլ բացայայտ ձգտում են հակառակը ապացուցել՝ որ հայերն են կոտորել թուրքերին: Վերջերս լոյս տեսած «հայերի ցեղասպանութիւնը թուրք քաղաքական գործիչների յուշագրութիւններում» իմ գրքի առաջարկումն են մատնանշել էի, որ «թուրք պետական գործիչները իրենց անհիմն քարոզչական ծրագրերը իրականացնելու համար տեւապէս միլիոններ են ծախսում եւ դիմում՝ ամէն մի նենգ միջոցի կազմակերպում են գիտաժողովներ: Հրատարակում են կեղծիքներով լի գրքեր: Նկարահանում են բազմասերիանոց ֆիլմեր...»:

Յառք, հայերի ցեղասպանութիւնը հերքելու եւ ընդհանրապէս հայ ժողովրդի պատմութիւնը աղաւաղելու գործընթացը առաւել խորացաւ վերոյիշեալ «հայ-թուրքական հաշտեցման յանձնաժողովի» մէջտեղ գալուց առաջ եւ յետոյ: Մամուլից յաճախ տեղեկանում էինք թէ ինչպիսի նոր թափով են շարունակում հակասական զրպարտիչ գրքերի լոյս ընծայումը թուրքիայում: Բերենք մի երկու օրինակ.

Դեռեւս 2001 թ. սկզբում «Նոր թուրքիա» խորագրով թուրքիայում հրատարակուող հանդէպի թիւ 37 (Յունուար-Փետրուար) եւ թիւ 38 (Մարտ-Ապրիլ) հատորները նուիրուած էին յատկապէս «Հայկական Հարցի» պատմութեան: Առաջին հատորի առաջաբանում հրատարակիչ-խմբագիր՝ Կիւլեւր Էրէնը աղաւաղելով պատմական ճշմարտութիւնը գրել է, «իրականում մի ցեղասպանութիւն եղել է, բայց այդ ցեղասպանութիւնը կատարուել է հայերի կողմից մահմեդական թուրքերի, քրդերի եւ արաբների հանդէպ: (Տես «Ակօս» շաբաթաթերթի թուրքերէն միջուկը, թիւ 265, Ապրիլ 27, 2001 թ.):

Թուրք լրագրող Սեֆա Բունջունը իր հեղինակած «Հայերի Յեղասպանութեան կոմեդիան եւ Տոն Քիչոզի արկածախնդրութիւնը» գրքում, մատնանշում է, որ «մենք՝ թուրքերս մէկ հայ անգամ չենք ոչնչացրել, բայց անընդհատ ասում են սպաննել էք, սպաննել էք»:

Այստեղ հարց է առաջանում, իսկ ինչո՞ւ այսօր թուրք ժողովրդից գաղտնի է պահւում եւ լատինատառ չէ հրատարակում 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի կուսակցութեան եւ կառավարութեան պարագլուխների դատավարութեան արձանագրութիւնները, որոնք իր ժամանակին լոյս են տեսել «Թաքվիմ-ի վեքայի» (Իրադարձութիւնների օրացոյց) թուրքական պաշտօնաթերթի լաւեղաձուծում, արաբատար թրքերէնով: Չի հրատարակուելու որովհետեւ այնտեղ բերուած թրքական փաստաթղթերը, ծածկազիր հեռագրերը, նամակները, ակնանտեսի վկայութիւնները լիովին հաստատում են որ արեւմտահայութեան ցեղասպանու-

թիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ սեղական բնույթ չեն կրել այլ եղել են կանխամտածուած եւ իրականացուել են բացարձակապէս կուսակցութեան կեդրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յստուկ կեդրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով:

Այնպէս որ հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու մեր պահանջատիրութիւնը անսակարկելի են: Ներկայի թրքական կառավարութիւնը ժառանգորդն է ու պատասխանատուն կատարուած այդ ծայրագոյն յանցագործութեան եւ պէտք է ճանաչի հայերի ցեղասպանութիւնը ու արդար հատուցում տայ նրա արեան, հողային ու նիւթական պահանջատիրութեանը:

Գոհունակութեամբ պիտի նշենք, որ Նոր Տարուան նախաշեմին հայնապաստ լուր ստացուեց Չուիցերիայից: Ժընեւի նահանգի կառավարութեան բոլոր անդամները միահամուր մի յայտարարութիւն ստորագրելով պաշտօնապէս ճանաչեցին հայոց ցեղասպանութիւնը:

Ահա եւ իմ մաղթանքները 2002 թուականի նախաշեմին:

1. Նախ Չերմօրէն շնորհաւորում եմ հայրենակիցներին Ամանորն ու Սուրբ Ծնունդը, բարեմաղթելով բոլորին քաջառողջութիւն, գործի, ուսման յաջողութիւն եւ բարի իղձերի իրականացում: Թող որ 2002 թուականին իրենք առաւելի միասնական, իրար հանդէպ բարեսցակամ, սիրով եւ յարգանքով:

Լցունք Աստուծոյ յոյսով, հաւատքով եւ Յիսուս Քրիստոս լուսեղէն պատգամներով:

2. Աշխարհին խաղաղութիւն եւ ժողովուրդներին համերաշխու-

թիւն: Թող որ հիմքից արմատախիլ լինի աննեղ մարդկանց ցաւ ու տառապանք պատճառող անարեւելութեան պատուհասը:

3. Մաղթենք, որ առաւել խորանայ եւ ամրապնդուի Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւնը:

Հայրենիքը վերաշինող մեր քուրերին եւ եղբայրներին ցանկանում եմ հոգու տոկոսութիւն, աներեր կամք, ի փառս մեր հայրենիքի տնտեսութեան բարգաւաճման եւ հզօրացման:

4. Թող որ 2002 թ. Հայաստանում հուժկու թափառնեն նոր աշխատատեղիների բացման նախաձեռնութիւնները, որպէսզի մարդիկ աշխատեն եւ սպասուեն իրենց ընտանիքի ապրուստը: Այդպիսով մեր առօրեայ խօսակցութիւնից դուրս կը մղուեն գործազուրկ եւ արտազաղթ բառերը:

5. Թող որ եկող տարուան ընթացքում կատարելապէս վերականգնուի 1988 թ. աղէտալի երկրաշարժից տուժած շրջանների աներիչ հետքերը:

6. Բարեմաղթենք, որ վերջապէս իր արդարացի լուծումը գտնի Արցախի հարցը:

7. Բարեմաղթենք, որ պատշաճ յաջողութեամբ ընթանան «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆոնդի-հեռախօսային մարաթոն դրամահաւաքի աշխատանքները, որպէսզի առաւել բարգաւաճի մեր Հայրենիքը:


8. Ողջունում ենք Արժանիքն ու ստեղծուած Հայաստան վերադարձողներին աջակցող յանձնախումբի հայրենասուէր գործունէութիւնը: Բարեմաղթում ենք, որ նոյն

չարժուճը տարածուի նաև Սփիւռքահայ միւս գաղթօճախներում:

9. Մի քանի տարի առաջ Փրոֆ. Ռազմիկ Մաղոյեանը շատ կարեւոր հարց բարձրացրեց մամուլում: Այն վերաբերում էր Լուս Անճեղքում հայկական մնալուն թատրոնի շէնք ունենալու գաղափարին: Բնականաբար, որպէս մշակույթի տուն, այն մեծ դեր կը խաղար նաև հայ արուեստի այլ ճիւղերի զար-

գացմանը: Մաղթենք, որ 2002 թ. հայ բարերարները ուշադրութիւն դարձնեն այս յոյժ կարեւոր հայանպաստ առաջարկին:

10. Առ այսօր աշխարհի 12 պետութիւններ ճանաչել եւ դատապարտել են հայոց ցեղասպանութիւնը: Տայ Աստուած, որ յառաջիկայ տարում դրանց թիւը առաւել շատանայ, որպէսզի միջազգային չափանիշով ճանաչուի հայերի ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում ստանայ նրա պահանջատիրութիւնը:



Կոմիտաս

### ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ ՀԱՆԳԷ ԷԴԻՔԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

2001 թ. Փետրուարի 23-ին Կ. Պոլսում հրատարակուող «Ակօս» շաբաթաթերթի թուրքերէն բաժնում, խմբագիր՝ Հրանդ Դինկը լրյս էր ընծայել թուրք գրականագէտ Հալիդէ Էդիբի Mor Salkimli ev (Մանուշակադոյն թիթեռնածաղիկներով տունը) խորագրով գրքից Կոմիտաս Վարդապետին վերաբերող յուշագրութիւնը: Բնականաբար նիւթը ուշադրաւ էր եւ հետաքրքիր, ուստի որոշեցիք այն թարգմանել, որպէսզի հայ ընթերցողը եւս ծանօթանայ բովանդակութեան հետ:

Նախ մի երկու խօսք հեղինակի եւ հայութեան հետ առնչուող նրա տեսակէտների մասին:

Հալիդէ Էդիբ Ադըվարը (1884-1964) 20-րդ դարասկզբի թուրքիայի մշակութային եւ քաղաքական կեանքում կարեւոր դեր խաղացած առաջին կին գործիչն է: Սկզբնական կրթութիւնը ստացել է Սկիւտարի Ամերիկեան Գոլէճում, իսկ այնուհետեւ տնային պայմաններում վարձուած ուսուցիչներից սովորել է անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուները: Նրա գրական եւ հրապարակախօսական գործունէութիւնը սկսում է 1908 թուականից յետոյ, երբ նա դառնում է «Իթթիհատ վե թերաքքի» (Միութիւն եւ առաջդիմութիւն) կուսակցութեան գործուն քարոզիչներից մէկը: Նա թարգմանութիւններ եւ առանձին յօդուածներ է հրապարակել «Վաքըթ», «Ակչամ», «Թանին» թուրքերէն թերթերում:

Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ թրքական բանակում անդամագրուել է «Կարմիր մահիկ» բժշկական օդնութեան կազմակերպութեանը, իսկ այնուհետեւ Սիրիայում Ջեմալ փաշայի գլխավորութեամբ մասնակցել է որբանոցների կազմակերպման աշխատանքներին: Նրա գրչին են պատկանում մի շարք վէպեր, որոնցից առաւել հանրայայտ է «Ateşten gömlek» (կրակէ շապիկ) վերնագիրը կրող հատորը:

Ուշադրութեան արժանի է նաև նրա յուշագրութիւնների գիրքը, որը լրյս է տեսել անգլերէն լեզուով: (Տէն Memoires of Halide Edip, New York - London): Հակառակ իրեն արդարացնելու միտու-

մին, Հալիդէ Էդիբը եւս հայկական հարցի նկատմամբ ունեցել է բացասական դիրքորոշում: Ամերիկեան հասարակայնութեան շրջանում ի շահ թուրքերի կարծիք ստեղծելու նպատակով 1920-ական թուականներին շրջագայել է Ամերիկայի Միացեալ Նահանգներին խոշորագոյն քաղաքներում, նենգաբար տարածելով այն միտքը, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում իբր հայերն են բռնութիւն գործադրել թուրքերի վրայ:

Հատ ժամանակակիցների վկայութեան Հալիդէ Էդիբը քիչ դեր չի խաղացել նաեւ Սիրիայում եւ Լիբանանում գործող հայ որբ երեխաներին մահմեդականացնելու եւ թրքացնելու գործում:

Ստորեւ բերուած գրութեան մէջ, չնայած Հալիդէ Էդիբը, որպէս տաղանդաւոր երաժշտի բարձր է գնահատել եւ դրուատանքով խօսել Կոմիտաս Վարդապետի մասին, այնուհանդերձ այնտեղ խեղաթիւրուել են նրա հայ ազգութեան պատկանելիութեան եւ ընդհանրապէս հայ ժողովրդի պատմութեան վերաբերող մի շարք հարցեր: Այսպէս՝

Հալիդէ Էդիբը նշում է, որ «բիւզանդական ժամանակաշրջանի նուաճումներին դիմակայող ցեղախմբի երեխաներին քրիստոնէացրել են»: Առաջ քաշած իր այս տեսակէտի վրայ հիմնուելով հաւանական է համարում, որ Կոմիտասի ծնողները թուրք են եղել:

Նախ նշենք, որ սելճուկ-թուրքերը 11-րդ դարում երեւացին Փոքր Ասիայում: 1047 եւ 1048 թուականներին նրանք ներխուժեցին Հայաստանի տարածքը, ամենուրեք աւերելով եւ գերեվարելով հայ ժողովրդին: Իսկ 1071 թ. երբ Մանազկերտ քաղաքի մօտ տեղի ունեցաւ վճռական ճակամարտ բիւզանդացիների եւ սելճուկների միջեւ բիւզանդիայի բանակը լիակատար պարտութիւն կրեց եւ ամբողջ Հայաստանը մտաւ սելճուկեան պետութեան կազմի մէջ: Այնպէս որ հայերի եւ այլ ժողովուրդների թրքացման քաղաքականութիւնը սկսուեց սելճուկ-թուրքերի Հայաստանի գաւթումից յետոյ:

Այնուհետեւ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան շրջանում, «Դեվլիբմէ»ի (Մանկահաւաք) միջոցով ենիչերիական զօրաբանակի համար հպատակ ժողովուրդների երեխաներից զինուոր հաւաքելու քաղաքականութիւնը կատարեալ մի պատուհաս դարձաւ հպատակ ժողովուրդների համաձուլման եւ թուրքացման խնդրում:

Այստեղ տեղին է յիշատակել 16-րդ դարի թուրք պատմագէտ Մուստաֆա Սեյանիկ Էֆէնտիի եզրակացութիւնը Դեվլիբմէի մասին: Նա իր «պատմութեան» մէջ գրել է. «Ժամանակի իշխողները տղաների Դեվլիբմէի գործում անխիղճ են եղել եւ նուէրի անուան տակ մեծ կաշառքներ վերցրել, ինչպէս դայլն է յարձակում ոչխարի հօտի վրայ, այնպէս էլ նրանք աղահօրէն յարձակուել են՝ երկրի ուայաների վրայ: Հարուստ ուայաներից խել են անթիւ անհամար հարստութիւն, իսկ աղքատ ուայաներից նրանց գաւակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»: (Տէս թրքական աղբիւրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի միւս ժողովուրդների մասին, կազմեց Արամ Սաֆրաստեան, հատ. Բ., Երեւան, 1964, էջ 137):

Բացի այդ, այլ երկրներ նուաճելու ընթացքում գերեվարութեան միջոցով թուրքերը մահմետականացրել են բազմաթիւ մարդկանց եւ երեխաներին Այս մասին եւս 16-րդ դարի թուրք պատմագիր Իրահիմ Փեչեւիւն գրել է. «Օսմանցիները սկսեցին կողոպտել եւ թալանել Երեւան քաղաքն ու երկիրը: Այնտեղի բոլոր ոսկեզօծ եւ գեղեցիկ կառուցուած պալատներն աւերեցին եւ գետնին հաւասարուեցին: Գեղազարդ եւ ոսկեփայլ կամարներն ու ծածկերը խորտակուեցին եւ 20 հազարից աւելի կանանց ու երեխաների գերի տարան»: (Տէս թրքական աղբիւրները, հատ. Ա., Երեւան, 1961, էջ 46-47):

Մահմետականացման եւ թրքացման քաղաքականութիւնը յատկապէս լայն ընդթ կրեց հայոց Մեծ Եղեռնի տարիներին: Յայտնի է, որ Մեծ Եղեռնի օրերին Սիրիայում եւ Լիբանանում գործող որբանոցներում հազարաւոր հայ որբեր մահմետականացան եւ թրքացան: Այնպէս որ շինժու միջոցներով Կոմիտասին թրքացնելը սխալ է եւ անհիմն: Կոմիտասը եղել է եւ մնում է գտարիւն հայ եւ հայկական ազգային երաժշտագիտական դպրոցի հիմնադիրը:

Հալիդէ Էդիբի վերոյիշեալ սխալ տեսակէտից է բխել նաեւ Աւետարանի թուրքերէն թարգմանութեան եւ մի շարք վայրերում պատարագը թուրքերէն կատարելու հարցը: Իրականութիւնն այն է, որ Աւետարանը թուրքերէնի են թարգմանել ոչ թէ քրիստոնէացած թուրքերը, այլ թրքախօս հայերը: Այս խնդրում պէտք է նկատի ունենալ թէ դարերի ընթացքում ինչպիսի ծանր պայմաններում են

գտնուել ոչ-մահմետական ժողովուրդները Օսմանեան կայսրութիւնում:

Բազմաթիւ փաստեր կան ոչ մահմետական ժողովուրդների նկատմամբ տեղի ունեցած հողային, հարկային, դաւանափոխութեան, եկեղեցիների քանդման, կրօնական ծիսակատարութիւնների սահմանափակման, ազգային տարազի արդելման եւ այլ ճնշումների ու խտրականութեան մասին:

Թուրք պատմաբան Ահմէդ Ռեֆիկի հրատարակած 18-րդ դարի սուլթանական հրովարտականքից իմանում ենք թէ ինչպիսի կրօնական սահմանափակումներ են կատարուել: Ահա մի հատուած սուլթան Սուլէյմանի (1520-1566) գահակալութեան ժամանակաշրջանում Կ. Պոլսի կատիին ուղղուած հրովարտակից.

«...իմ բարձր հրամանագիրը առնելուդ պէս, քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինութիւնը: Միեւնոյն ժամանակ թոյլ չտաս իրենց հնագոյն եկեղեցիներում ծնծղայ խփելու, բարձր ձայնով երգելու եւ գինի խմելու: Պէտք եղածի պէս զգուշացրու յիշեալ վանքի քահանաներին, որ այսուհետեւ շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ, եթէ որեւէ շինութիւն կառուցեն, նոյնպէս ենթարկուելու է քանդման»: (Հրամանը վերաբերում է Կ. Պոլսի Սուլու-Մանաստրի (Ս. Գէորգ) հայկական եկեղեցուն: Տես Ahmet Refik, on altinci asirda Istanbul Hayati, 2-ci basim, Istanbul, 1935, S, 27):

Պարզում է, որ նոյնիսկ 19-րդ դարում Փոքր Ասիայի խառը բնակչութիւն ունեցող շատ վայրերում քրիստոնեայ բնակիչները մոլեռանդ մահմետականների զայրոյթից խուսափելու համար գաղտնի կերպով են կատարել իրենց կրօնական ծէսերը:

Փաստական շատ կարեւոր վկայութիւններ կան Փ. Զիխաչովի «Նամակներ Թուրքիայի մասին» խորագիրը կրող յուշագրութեան մէջ: Հեղինակը 19-րդ դարի կէսերին երկար ժամանակ գտնուելով Թուրքիայում, ակնատես է եղել քրիստոնեաների իրաւագուրկ եւ թշուառ վիճակին: Ահա նրա վկայութիւններից մէկը դաւանանքի խտրականութեան մասին:

«Գիրեսունի եւ Տիրեպոլուի, ինչպէս նաեւ Տիրեպոլուի եւ Գիւմուշ-

խանէի միջեւ գտնուող յետամնաց գիւղերի բնակչութիւնը, իրենից ներկայացնում էր բաւականին հետաքրքիր մի երեւոյթ: Այդ գիւղերի ազգաբնակչութիւնը խառն է, բացէիբաց յարում է մահմետականութեանը եւ հասարակական վայրերում խօսում է միայն թուրքերէն: Սակայն գաղտնի կերպով հետեւում է յունական արեւելեան եկեղեցու ծիսակատարութեանը: Տանը խօսում է յունարէն, եւ իւրաքանչիւրը կրում է երկու անուն: Այսպէս՝ եթէ նրանցից մէկը առաւօտեան դուրս է եկել սպիտակ կամ կանաչ չալմայով եւ կրում է Ահմեդ կամ Սելիմ անունները, երեկոյեան աղքատ խրճիթում կամ գաղտնի քարայրում միանում է իր դաւանակիցներին, որպէսզի թաքուն կատարի քրիստոնէական կրօնի ծիսակատարութիւնը քահանայի առաջնորդութեամբ, որը դրանից մի քանի ժամ առաջ արդէն հանդէս էր եկել որպէս մոլլա՝ մզկիթում» (տես Փ. Ա. Չիխաչով, նամակներ Թուրքիայի մասին, Մոսկուա, 1897, էջ 23, ռուսերէն):

Դեռեւս, կարելի է շատ փաստեր եւ վկայութիւններ բերել ոչ-մահմետականների նկատմամբ կատարուած խտրականութեան եւ ճնշումների մասին, հասկանալու համար թէ ինչու Աւետարանը Թուրքերէնի է թարգմանուել, սակայն բաւարարուենք այսքանով: Հալիդէ էդիրի գրութեան վերաբերող մեր միւս դիտողութիւնները տրուած են ստորեւ բերուած թարգմանութեան ծանօթագրութիւններում:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

**ՀԱԼԻՂԷ ԷԳԻՔ ԱԳՐՎԱՐԻ  
«ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՅՆ  
ԹԻԹԵՌՆԱԾԱՂԻԿՆԵՐՈՎ ՏԱՆ»  
ԿՈՄԻՏԱՍԸ**

Ակօս-ի ընթերցողներին ց եւ քարեկամներից՝ Փրոֆ. Հիւսէյն Հաթեմին, անցած շարաքների ընթացքում թերթերից մէկի մէջ նկատելով կոմիտաս վարդապետի նկատմամբ արտայայտուած տգեղ յարձակումները, յիշեցրեց մեզ թէ Հալիղէ էդիբ Աղըվարը, իր «Մանուշագոյն թիթեռնածաղիկներով տունը» խորագիրը կրող գրքում, ինչպիսի հիացմունքով է խօսել կոմիտասի մասին: Ուստի, նա խնդրեց մեզանից, որպէսզի այդ հատուածը ծանօթացուի Ակօս-ի ընթերցողներին:

Մտորհակալութիւն յայտնելով մեր քարեկամի համակրանքին եւ ցանկութեան, ստորեւ ընթերցողին նմէ ներկայացնում կոմիտասին, Հալիղէ էդիբի գրութեամբ:

Այդ տարիներին «Թրքական օճախ»<sup>1</sup> վարչութիւնը ամէն տեսակ ելոյթների եւ ճառերի համար արտօնութիւն էր տալիս, իսկ իր դահլիճում մեր մշակոյթի զարգացման համար էլ կազմակերպում էր ներկայացումներ եւ համերգներ: Կանանց եւ սղամարդկանց միատեղ ներկայացումների դիտումն ու ելոյթների ունենդրումը առաջին անգամ սկսուեց տեղի ունենալ «Թրքական օճախ»ի ներսի դահլիճում:

Այդ դահլիճում ունենդրեցի նաեւ հայ նշանաւոր երգահան եւ դաշնակահար կոմիտաս վարդապետ անունով մի կրօնականի:

Այդ օրերին նկատեցի, թէ ինչպէս «Թրքական օճախ»ում շաբաթական կազմուող ծրագրերի նկատմամբ հասարակական կարծիքը բաժանուեց երկու մասի: Մէկ կողմը ցանկանում էր, որ միմիայն թուրքերի կատարմամբ թրքական ստեղծագործութիւններ կատարուեն, իսկ միւս կողմը առաջ էր քաշում այն միտքը, որ մեր մշակոյթը առաւել կը զարգանայ, եթէ մեր հետ կատարուեն նաեւ այլ ազգերի ստեղծագործութիւնները:

Այս վերջինը յաղթանակ տարաւ:

Այնուհանդերձ կոմիտասը մեր երկրի ծնունդն էր: Հայ լուսաւորչական հնագոյն հոգեւոր երաժշտութեան վերաբերող կտորների հետ, երկար տարիների ընթացքում հաւաքել էր նաեւ Անատոլիայի<sup>3</sup> ժողովրդական երգերը:

Եթէ տեսնէինք նրա երկար կրօնական սքեմը, թիաղէմ, հանդարտ դիմագծով կատարեալ անատոլիական կերպարանքը, նոյնպէս Անատոլիայի բնակչին յատուկ տրտում դէմքը եւ տեւապէս տարօրինակ կարօտի զգացում արտայայտող սեւ աչքերը եւ եթէ լսէինք նրա հօր ձայնի ներդաշնակութիւնը, ապա անմիջապէս զուգահեռ կ'անցկացնէինք Անատոլիայի ժողովրդական երգերի հետ:

Եղանակը, իմ քեռիներից լսած էրզրումի եւ Կեմախի երգերն էին յիշեցնում: Սակայն նա այդ բոլորը կատարում էր որպէս զուտ հայերէն երգ: Ես լեզուին այնքան էլ կարեւորութիւն չէի տալիս: Մեր հայրենիքի անբնակ լեռնային արօտավայրերը յիշեցնող, այդ ներսից բխած, յուզմունք եւ կարօտ արտայայտող մեղեդիները լսելիս ես ուշաթափուում էի:

Կոմիտասը գալիս էր նաեւ իմ տունը: Ժամերով նուագում էր եւ երգում: Այս այցելութիւնները շարունակուեցին նաեւ հայերի եւ թուրքերի միջեւ տեղի ունեցած սպանութիւնների ընթացքում եւս: Այդ իրադրութիւնը երկուսիս մէջ էլ իրար չգոհաբերելու միտումով զու էր առաջացնում:

Հակառակ իրենց ազգայնականութեան, մարդկային ոգով լցուած նրան լսելու համար երբեմն գալիս էին նաեւ Եահիա Քեմալը եւ Մեհմէդ Էմինը: Չնայած որ Եուսուֆ Ակչուրան այս երաժշտութիւնից եւս բաւականութիւն էր ստանում, սակայն առարկում էր, որպէսզի Անատոլիայի ուսուցիչները հայ չլինեն: Ինձ համար, լինի հայերէն, թուրքերէն եւ կամ Անատոլիայում խօսուող լեզուներից որեւէ մէկը, միեւնոյն է այդ երաժշտութիւնը արտացոլումն է թրքական Անատոլիայի:

Կոմիտասը Քեոթհասիայի մի աղքատ հայ ընտանիքի զաւակն էր: Մայր լեզուն եղել է թրքերէնը, բայց մեծանալուց յետոյ սովորել է նաեւ հայերէն: Ըստ իմ յիշողութեան կոմիտասը երկար տարիներ երգեհոն է նուագել Փարիզի Աստուածամօր տաճարում: Գուցէ եւ ընտանիքն էլ բնիկ թուրք եղած լինի:

Բանը նրանում է, որ բիւզանդական ժամանակաշրջանի նուաճումներին դիմակայող ցեղախմբի երեխաներին քրիստոնէացրել են: Այնուհետեւ, սահմանամերձ շրջաններում ապստամբած եւ հարաւային սահմանազծում տեղաւորուած այս քրիստոնեայ թուրքերը գուցէ եւ տարածուել են Անատոլիայի զանազան վայրերում:

Իրենց լեզուով, ցեղով եւ մշակոյթով Անատոլիայի թուրքերը համարուողներին, հանդուցեալ ձամի պէյը դէմ էր, որ Լոզանի քոնֆերանսի պայմանագրով նրանց նկատմամբ անձադրային փոփոխութիւն կատարուի: Եթէ քրիստոնեայ թուրքերը մի առանձին եկեղեցի ունեցած լինէին, եւ ազգայնականութիւնն էլ չխառնուէր նրանց կրօնական գործերին, ապա, անկասկած մեր հայրենիքը չէր կորցնի իր շատ կարեւոր այդ մարդկային

տարրերին: Բանը նրանում է, որ հայ կամ յոյն եկեղեցիներէ քաղաքական ազդեցութեան ենթարկուելու վաղ ժամանակաշրջանում, բառիս բուն իմաստով նրանք եղել են թուրքեր: Այլ տեղերի նման, Քոնիայի քրիստոնեայ եկեղեցում եւս պատարագը թուրքերէն էր կատարուում: Նոյնիսկ, հնուց ի վեր թարգմանուած թուրքերէն աւետարաններ ունէին: Աթէնքում ուսում առած մի

երիտասարդ քահանայ, վերադառնալուց յետոյ երբ սկսում է եկեղեցում յունարէն քարոզ կարգալ, բոլոր ներկաները միաբերան բացազանչել են «հօրդ լեզուով խօսիր»:

Հաւանաբար, կոմիտասի գեղեցիկ ձայնը գրաւել է Քեոթահայի հայ եկեղեցու ուշադրութիւնը, քանի որ երիտասարդ հասակում ուսումնառութեան համար նրան ուղարկել են Հոռոմ: Երաժշտական տաղանդը ժառանգել էր իր ծնողից: Ինձ ասել է.

- Որպէս ժառանգութիւն ծնողիցս ինձ մնաց մի գոյգ կարմիր հողաթափ եւ մէկ էլ երգը: Հողաթափը ժառանգեցի հօրիցս, իսկ երգը՝ մօրիցս: Խօսքերը եւ եղանակները պատկանում են մօրս: Խօսքի նիւթ՝ դարձած երկու սպիտակ աղաւնի երգը, կատարում էր թրքերէն, այն էլ իսկական Անատոլիայի բարբառով:

Որպէս մարդ եւ արուեստագէտ կոմիտաս իսկպէս որ ուշադրութիւն գրաւող մի անձնաւորու-

թիւն էր: Նրա պարզութիւնը, չափաւորութիւնը, մի քիչ միատիկ եւ ինքնամփոփ տեսքը, մարդուն ինչ որ չափով խորհրդածել էր տալիս:

Մի օր, Յ-րդ դարում ստեղծուած «Աւէ Մարիա»<sup>6</sup> երգեց: Բնական է, որ այս մէկը ժողովրդական կարօտալի եւ յուզումնալի երգերից տարբերուելով, խորը հաւատքի ազդեցութիւն թողեց: «Ակամայ հարցրի.

- Սաղմոսարանից մի կտոր երգեցի՞ք:
- Այո, ասաց:
- Եթէ յոգնած չէք, կը շարունակէիք արդեօ՞ք:
- «Աւէ Մարիայից» յետոյ իրեն նետեց բազկաթուի վրայ, դէմքից երեւում էր, որ յոգնած է: Առանց տեղից շարժուելու սկսեց երգել, սակայն այդ երգում կրօնական հեզութիւնից աւելի զայրոյթ, դառնութիւն եւ ըմբոստութիւն կար: Երգի վերջի հանգերում, կամաց-կամաց ոտքի կանգնեց, աչքերը կրակով լցուած, ձայնը երկնային ամպրոպի նման էր: Ինձ թուաց, որ Ֆառուսի՛ Մեֆիստոֆելը կենդանացաւ:

Յետագայում Սաղմոսարանը կարդալու ընթացքում հասկացայ, որ իր կատարած երգը մի հզօր ըմբոստութիւն էր բռնապետների դէմ ուղղուած:

1915-ին «Օճախը» նրան ազատեց քաջորից: 1916 թ. նա ունեցաւ ուղեղի մթազնում: Բժիշկ Ադնանը, Թալեաթ փաշայից թոյլտուութիւն վերցրեց, որպէսզի կոմիտասը բուժուի Փարիզում: Ամենայն հաւանականութեամբ նա մահացաւ այնտեղ մի հոգեբուժական հիւանդանոցում:

Ես կարծում էի, որ ազգայնականութիւնը ստեղծելու<sup>8</sup> է համերաշխ, փոխըմբռնումով մի երկիր: Սակայն ազգայնականութիւնը իր չափը կորցնելու ժամանակ տեսայ թէ ինչպէս տեղտեղ մարդկանց մղեցին իրար սպաննելու եւ երկիրը վերածեցին մի սպանդանոցի: Բոլոր դէպքերում, թէկուզ աջ կամ ձախ՝ գաղափարախօսութեամբ, իրենց չափը կորցնելով ազգայնականութիւնը թողեցին ստուերում եւ ստեղծեցին առաւել արիւնոտ եւ առաւել ողբերգական մի երկիր:

Պարզում է, որ մարդիկ իրար հասկանալու, իրար հետ հաշտ ու խաղաղ ապրելու համար հնարաւոր չէ հիմնուել այս կամ այն սկզբունքի, այս կամ այն գաղափարախօսութեանը: Այստեղ ուզում եմ յիշել կանտի<sup>9</sup> հետեւեալ խօսքերը:

«Աշխարհի թատերաբեմում մարդկանց յայտնուելը հնարաւոր չէ դիտել առանց խորը ատելութեան, քանի որ մարդկանց իրար հանդէպ կատարած դաժանութիւնը, բնութեան գործադրած աղէտից էլ աւելի շատ է»:

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. "Mor Salkimli ev". «Հօգկիւր» հրատարակութիւն, էջ 212-216: Salkim բառը քացի թիթեռնածաղկից, որը փաթաթուող մի ըոյս է, ունի նաև հետևեալ իմաստները 1. ողկոյզ (խաղողի), 2. Ակացիա:

2. Նկատի ունի 1914-1915 թթ. կոմիտաս վարդապետը գործում մասնակցութիւն է ունեցել թրքական մշակութային կեանքում: Երգեր է յօրինել թուրք քանաստեղծների խօսքերով: դասախօսութիւններ կարդացել և համերգներ է տուել «թրքական օնախում», (թրքական ազգայնական մշակութային և լուսաւորութեան միութիւն):

3. Անատոլիա,- յունարէն՝ նշանակում է արեւել: Բիւզանդական կայսրութեան փոքրասիական տիրոյթներին տրուած անունն էր, որը յետագայում թուրքերի կողմից իմաստափոխուեց: Թուրք պատմաբանները նենգափոխելով համաշխարհային քանաչում ստացած պատմական դէպքերը, փորձեցին ժխտել հայ ժողովրդի ինքնորակ հանդիսացող պատմական Հայաստանի գոյութիւնը, այն անուանելով Արեւելեան Անատոլիա: Իրականում միջնադարի թուրք աշխարհագիրները իրենց երկերում օգտագործել են Արմենիա անուանումը: Օր. 17-րդ

դարի թուրք հանրայայտ աշխարհագիր Քեաթիր Չելեքին, իր «Ջիհան Նիւմա» աշխատութեան 41-րդ գլուխը վերնագրել է «Արմենիա երկրի մասին»: Այնպէս որ այստեղ խօսքը վերաբերում է պատմական Հայաստանի տարածքին:

4. Այստեղ պետք է կենսագրական հետևեալ նշումը կատարել: Կոմիտասը (Սողոմոն Գեորգի Սողոմոնեան, 1869-1935) 1881 թ. որքանալով, Քեոթախիայի հայկական եկեղեցին նրա գեղեցիկ ձայնի և երաժշտական ունակութիւնների համար ուղարկել է էջմիածին: Այստեղ 1893 թ. արարտել է էջմիածնի Գեորգեան Հոգևոր ձեմարանը և նշանակուել ձեմարանի երաժշտութեան ուսուցիչ և խմբավար: 1894 թ. ձեռնադրուել է կուսակրօն արեղայ և նրան շնորհուել է 7-րդ դարի քանաստեղծ ու երաժիշտ՝ կոմիտաս Կաթողիկոսի անունը: 1895 թ. դարձել է վարդապետ և այնուհետև կոչուել կոմիտաս վարդապետ: 1896-1899 թթ. ուսումը շարունակել և արարտել է Պերլինի Արժունական համալսարանը: 1910-ին էջմիածնից տեղափոխուել է Կ. Պոլիս:

5. Հաւանաբար նկատի ունի կոմիտասի «Կախաի երգը»:

6. Հրեշտակների անտունը կոյս Մարիամ Աստուածածնին:

7. 16-րդ դարի սկզբում քանահիսուած, գերմանական ասանդագրոյցի հերոս, գիտնական, որը դեւի (Մեֆիստոֆել) հետ դաշն էր կնքել յանուն քիտութեան, հարստութեան և աշխարհիկ վայելքների:

8. Խօսքը վերաբերում է Երիտթուրքների կառավարութեանն ու «Իթթիհատ վէ թերաբէի» կուսակցութեանը, որոնք կազմակերպեցին հայերի տեղահանութիւնն ու կոտորածը:

9. Իմանուիլ կանտ (1724-1804), գերմանացի փիլիսոփայ և գիտնական: Գերմանական դասական փիլիսոփայութեան հիմնադիրը:



• ՀԱՐԱՔ ՆԵՊՏԵՄԲԵՐ 8, 2001

• ՀԱՐԱՔ ՆԵՊՏԵՄԲԵՐ 15, 2001

# «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ՈՒ «ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ» ՄԻԵՒՆՈՅՆ ԻՄԱՍՏՆ ՈՒՆԵՆ

Սփիւռքի մտաւորականները յաճախ իրենց առօրեայ մասնագիտութեան զուգահեռ անշահախնդիր զբաղուում են նաեւ հայ ժողովրդի պատմութեան, Հայոց Յեղասպանութեան, Հայաստանի արդի տնտեսական եւ քաղաքական իրավիճակին վերաբերող հարցերով, յայտնում իրենց կարծիքն ու տեսակէտները, երբեմն գնահատելով, երբեմն էլ սուր քննադատելով: Մի խօսքով հրապարակախօսային յօդուածներով ձգտում են իրենց լուծման ներդնել եւ օգտակար դառնալ մեր ժողովրդին յուզող հարցերին:

Բնականաբար այս երեւոյթը արժանի է գնահատանքի եւ ամէն տեսակի քաջալերանքի: Օրինակները շատ են, բայց այստեղ ես պիտի անդրադառնամ յարգարժան Տոքթ. Յակոբ Այնթապլեանի կողմից առաջ քաշուած «Մեծ Եղեռն»ը «Յեղասպանութիւն» չի նշանակեր հարցին: (Տե՛ս «Նոր Օր» շաբաթաթերթ, Նոյեմբեր 3, 2001 թ. էջ 3): Բնականաբար ըստ արժանւոյն գնահատելով նրա կատարած հրապարակախօսային աշխատանքները, տուեալ դէպքում տարակարծիք եմ եւ չեմ կարող համաձայնուել նրա այդ տեսակէտին:

Տոքթ. Յակոբ Այնթապլեանի վերոյիշեալ տեսակէտի շուրջ նման մօտեցում էր ունեցել նաեւ Պրն. Երուանդ Ակիչեանը՝ նշելով «յարգանքով եւ գնահատանքով ընդունելէ ետք Տոքթորին տարած խղճամիտ, նախապատրաստական աշխատանքը, սոյն յօդուածը լաւագոյնս հրամցնելու համար ընթերցող հանրութեան, չեմ կրնար հաշտուիլ հոն յայտնուած կարգ մը գաղափարներուն եւ պարզաւոր տեսութիւններուն հետ»: (Տե՛ս «Նոր Օր» Յունիս 24, 2000, էջ 3):

Նշենք որ Տոքթ. Յակոբ Այնթապլեանի առաջին յօդուածը այս հարցի շուրջ լոյս տեսաւ «Նոր Օր» շաբաթաթերթում «Եղեռն» թէ Յեղասպանութիւն» խորագրով, դեռեւս Յունիս 10, 2000 թուականին:

Հեղինակը հիմնականում յենուելով մի շարք հայերէն-անգլերէն եւ անգլերէն-հայերէն բառարանների վրայ եզրակացնում է, որ «Եղեռնը Յեղասպանութիւն չի նշանակեր»: Հետեւաբար առաջարկում է օգտագործել միայն Յեղասպանութիւն բառը:

Այսպէս՝ իր առաջին յօդուածում նշում է. «Եղեռն - փորձանք, չարիք, ոճիր, ողբ, ցաւ՝ ըստ «Հրաչեայ Աճառեանի Արմատական բառարան»:

Սպանդ, ջարդ, կոտորած, յանցագործութիւն, ըստ այլ բառարաններու»:

Եթէ ընդունում ենք, որ Եղեռն նշանակում է սպանդ, ջարդ, կոտորած եւայլն, ուրեմն այն իր խորքի մէջ սերտօրէն առնչուում է Genocide (Յեղասպանութիւն) բառի հետ: Յայտնի է, որ Genocide բառը առաջին անգամ օգտագործուել է լեհ իրաւաբան, ծագումով ամերիկացի հրեայ Ռաֆայէլ Լէմկինի կողմից 1944 թ. հրատարակած Axis Rule in Occupied Europe (Առանցքային կանոնադրութիւն նուաճուած Եւրոպայում) գրքի մէջ: Այն կազմուած է յունարէն-γενոս- տոհմ, ցեղ եւ լատիներէն caedo - սպանել բառից:

Յեղասպանութիւն բառը ստացաւ միջազգային իրաւական կարգավիճակ՝ որպէս մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութիւն Յունուար 12, 1951 թուականից սկսած:

Մինչ այդ եթէ հայ պատմաբանները 1894-96 թթ. Սասունի կոտորածները, 1909 թ. Ատանայի կոտորածները եւ յետագայում 1915-23 թթ. Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայ ազգի ի սպառ բնաջնջման կոտորածները որակում էին եղեռն կամ Մեծ Եղեռն, սկսեցին նաեւ որպէս հոմանիշ օգտագործել Յեղասպանութիւն բառը:

Այդպէս եմ վարուել նաեւ ես Մեծ Եղեռնին նուիրուած իմ աշխատութիւններում: Թէեւ Մեծ Եղեռնին վերաբերող իմ գրքերի խորագրերում տեղ է գտել Յեղասպանութիւն բառը, բայց բովանդակութեան մէջ հաւասարապէս միեւնոյն իմաստով օգտագործել եմ նաեւ Մեծ Եղեռնը:

Այս նոյն ձեւը պահպանուել է նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի ցեղասպանագէտ պատմաբանների կողմից: Դրանց թիւը շատ է: Բերենք մի քանի օրինակներ:

Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանը «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» փաստագրական ժողովածուի (Երեւան, 1991),

նախաբանում գրել է. «Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցաւ մարդկութեան մեծագոյն ողբերգութիւններից մէկը: Իշխանութեան գլուխ անցած ազգայնամոլ «Երիտասարդ Թուրքերի» կուսակցութիւնը կազմակերպեց հայերի անօրինակ ցեղասպանութիւն եւ ծխացող անապատի վերածեց ամբողջ Արեւմտեան Հայաստանը: ...Ուստի, երբ խօսք է լինում Մեծ Եղեռնի մասին, ապա պէտք է նկատի ունենալ ոչ միայն 1915-1916 թթ. համընդհանուր կոտորածը, այլեւ 19-րդ դարի վերջերի եւ 20-րդ դարի սկզբի զանգուածային ջարդերը»:

Ակ. Մկրտիչ Ներսիսեանը որպէս հոմանիշ այս բառերը օգտագործել է նաեւ «Հայոց 1915-1916 թթ. Յեղասպանութիւնը, մատենագիտական աշխատութեան առաջաբանում: Այսպէս.

«Արեւմտահայերի 1915-1916 թթ. Յեղասպանութեան Մեծ Եղեռնի վերաբերեալ գոյութիւն ունի բաւական հարուստ գրականութիւն» (Երեւան 1995, էջ 5):

Պատմ. Գիտութիւնների Դոկտ. Ռուբէն Սահակեանը «Յեղասպանութեան պատմութիւնից» (Երեւան, 1990) շահեկան աշխատութեան սկզբում (էջ 3) գրել է.

«Գրքում ի մի են բերուած Հայոց Եղեռնի պատմութեանը վերաբերող հեղինակի ուսումնասիրութիւնները: Ժամանակագրական առումով դրանք հիմնականում ընդգրկում են Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին եւ պատերազմի տարիներին Հայաստանում ծաւալուած իրադարձութիւնները՝ հայ ժողովուրդի 1915-ի Յեղասպանութեան դրդապատճառները վերհանելու տեսանկիւնից»:

Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի Փրոֆ. Աշոտ Մարգսեանի եւ Արարատ Յակոբեանի «Հայոց Պատմութիւն» հատորի (Երեւան, 1997), «Հայոց Մեծ Եղեռնը» գլխում (էջ 198-199) կարդում ենք.

«1915 թ. հայ ժողովուրդն ապրեց իր բազմադարեան պատմութեան ամենաողբերգական էջերից մէկը: Երիտթուրքական կուսակցութեան ու կառավարութեան պարագլուխները, օգտուելով պատերազմական խառնակ իրավիճակից ու հայերին մեղադրելով անհաւատարմութեան ու դաւաճանու-

թեան մէջ, կազմակերպեցին ու իրագործեցին Հայոց Մեծ Եղեռնը՝ արեւմտահայութեան զանգուածային կոտորածները: Եղեռնը կամ Յեղասպանութիւնը միջազգային իրաւունքի տեսանկիւնից համարում է մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութիւն»:

Միջազգային չափանիշով հանրաճանաչ պատմաբան-ցեղասպանագէտ Փրոֆ. Վահագն Տատրեանի գրքերը հիմնականում անգլերէն են հրատարակ-

ւած եւ բնական է, որ օգտագործուած է Genocide (Յեղասպանութիւն) բառը: Այնուհանդերձ, իր հայերէն երկերում նա նոյնպէս օգտագործել է Եղեռն բառը միեւնոյն իմաստով: «Հայկական Յեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով» գրքի ներածականում (էջ 6) գրուած է. (Տէն Պայքար հրատ. Ուոթըրթաուն, ԱՄՆ, 1998:

«Պատերազմական Ատեանը հաստատեց որ Հայկական Եղեռնը կանխամտածուած, ծրագրուած եւ հսկողութեամբ իրագործուած ոճիրի մը հանդամանքը ունէր, որ իր լրումին հասաւ գլխաւոր մեղակցութեամբ կառավարութիւնը իր ձեռքը առած եւ զայն իր թաքուն եւ քրէական նպատակներուն համար շահագործած Իթիհատ կու-

սակցութեան կեդրոնական կոմիտէին եւ նահանգներուն մէջ գործող իր արջանեակներուն»:

«Մեծ Եղեռն» եւ «Յեղասպանութիւն» բառերը համազօր օգտագործուած են նաեւ հայ մեծանուն բանաստեղծների, արձակագիրների եւ գրականագէտների երկերում: Այդպէս է նաեւ Հայաստանում հրատարակուած երեք տարբեր հանրագիտարաններում (Տէն Հայկական Սովետական Հանրագիտարան՝ Երեւան, 1981, հատ. 7, էջ 423-431: Հայկական հարց, հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 303-327: Հայկական համաօտ հանրագիտարան, Երեւան, 1999, հատ. 3, էջ 661-667):

Անցած 86 տարիների ընթացքում լոյս են տեսել վերապրողների, ջարդերի անմիջական ականատեսների բազմաթիւ յուշապատումները, որոնց վերնագրերը սկսում են «Եղեռն»ով, կամ «Մեծ Եղեռն»ով, բայց բովանդակութեան մէջ որպէս հոմանիշ օգտագործուել է նաեւ Յեղասպանութիւն բառը: Նոյնիսկ 1960-ական թուականներից սկսած

Անթիլիասի մայրավանքի տպարանը լոյս է ընծայել «Մատենաշար Ապրիլեան Եղեռնի» խորագրով պարբերականը, 13 հատորներով:

Եթէ այսօր ուշադրութիւն դարձնենք հայ մամուլին կը նկատենք, որ «Մեծ Եղեռն»ի հետ առնչութիւն ունեցող բոլոր յօդուածներում երկու բառերն էլ օգտագործուած են որպէս հոմանիշ: Հարկ է գոհունակութեամբ նշել, որ առ այսօր աշխարհի 12 պետութիւնների խորհրդարաններ պաշտօնապէս ճանաչել եւ դատապարտել են Հայերի Յեղասպանութիւնը: Ամերիկայի Միացեալ Նահանգների մօտ 13 նահանգային խորհրդարաններ նոյնպէս ճանաչել են եւ Ապրիլ 24-ը յայտարարել «Հայ նահատակների յիշատակման օր»: Համանման որոշում են կայացրել նաեւ աշխարհի մի շարք մեծ քաղաքների խորհուրդները: Այս եւ այլ միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնները, վեհաժողովները Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման խնդրում երբեք հարց չեն բարձրացել, որ հայերը Մեծ Եղեռն են ասում թէ՞ Յեղասպանութիւն, որովհետեւ 1915-23 թթ. Օսմանեան կայսրութիւնում երիտթուրքերի հետապնդած հայաջինջ քաղաքականութիւնը, որին մենք Մեծ Եղեռն ենք ասել որակուել է որպէս Յեղասպանութիւն:

Այսպէս 1985 թ. Օգոստոսի 27-ին ժընեւում ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքների Ենթայանձնաժողովը 1915-1917 թթ. Թուրքիայում տեղի ունեցած հայերի շարժերը որակեց որպէս Յեղասպանութիւն: Իսկ 1987 թ. Յունիսի 18-ին Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում Եւրոպական Խորհրդի կողմից ձայների մեծամասնութեամբ ընդունուած որոշման մէջ նշուած էր, որ «Օսմանեան կայսրութեան տա-

րածքի վրայ հաստատուած հայերի հետ 1915-1917 թթ. կապուած իրագործութիւններն իրենցից ներկայացնում են Յեղասպանութիւն «Յեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու և դրա համար պատժելու» այն պայմանագրի համաձայն, որը ընդունուել է ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլիայի կողմից 1948 թ. Դեկտեմբերի 9-ին:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս նկատեցինք վերոյիշեալ փաստարկներից հայ ժողովուրդը «Մեծ Եղեռն» եւ «Յեղասպանութիւն» բառերը օգտագործել է եւ օգտագործուած է միեւնոյն իմաստով: Այո՛, Եղեռն բառը ըստ բառարանային տուեալների նշանակել է սպանդ, ջարդ, կոտորած եւայլն, բայց յետագայում անհրաժեշտութիւնից ելնելով տեղի է ունեցել բառի իմաստի լայնացում, այսինքն. ստացել է Յեղասպանութեան նշանակութիւնը:

Ահա այս հանգամանքը պէտք է, որ նկատի առնուէր բառարանագէտների կողմից:

Յուալի է, որ նոյնիսկ մի շարք անգլերէն-հայերէն, հայերէն-անգլերէն բառարաններում ընդհանրապէս բաց են թողնուած Մեծ Եղեռն եւ Յեղասպանութիւն բառերը: Այդ թւում նաեւ 1984 թ. Երեւանում մեծ տպաքանակով հրատարակուած եւ լայն գործունէութեան մէջ գտնուող անգլերէն-հայերէն մեծածաւալ բառարանում: (Հեղինակներն են՝ Հ.Ա. Ասմանկուլեան եւ Մ.Ի. Յովհաննիսեան):

Բոլոր դէպքերում խիստ գնահատելի է, որ Երեւանում հրատարակուած հանրագիտարանների հեղինակները լայն տեղ յատկացնելով «Մեծ Եղեռն» եւ «Յեղասպանութիւն» բառերին տուել են ճիշտ եւ համազօր բացատրութիւն:

Իրականում «Մեծ Եղեռն»ը «Յեղասպանութիւն» իմաստով այնպէս է մտել մեր ժողովրդի գիտակցութեան մէջ, որ հնարաւոր չէ այն դուրս մղել: Նոյնիսկ Եղեռն բառը լսելով մենք պատկերացնում ենք առ աւելի մեծ աղէտ, մեծ ոճիր, մեծ սարսափ, ծանր ողբերգութիւն, որը լիովին համընկնում է Ռաֆայէլ Լեմկինի գործունէութեան մէջ դրած Genocide - Յեղասպանութիւն բառի իմաստի հետ:

Հենց այս պատճառով Հայաստանում, աշխարհի հայահոծ գաղութներում, եկեղեցիների կից կամ այլուր կանգնեցուած բոլոր յուշարձան-կոթողների, խաչքարերի, ցայտաղբիւրների վրայ դրոշմուել է Մեծ Եղեռն բառը: Եւ ոչ մէկի մտքովն անգամ չի անցնի գեղարուեստական բարձրաճճ ձեւաւորումով կերտուած յղկուած այդ մարմարեայ կամ պղնձեայ յուշարձանները սրբազրել, քանի որ այդ կը լինի սրբապղծութիւն:

Մեր ապ ու պապերը «Եղեռն», «Մեծ Եղեռն» ասելով հեռացան այս աշխարհից, եւ մեզ էլ աւանդ թողեցին այդ ձեւով միշտ յիշել եւ յարգել բերաւոր անմեղ գոհերի յիշատակը:

Ահա թէ ինչու ամէն տարի Ապրիլ 24-ին, խորը կսկիծով միասնաբար յարգում ենք «Մեծ Եղեռն»ի նահատակների յիշատակը:

# ԿԻԼԻՉԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԻԼԻՍ

## ՐԱԽՕՍՍՈՒԹԻՒՆ

Գեղինակ՝ ԱԼԻՇԱՆ Ա. ՊԱՅՐԱՄԵԱՆ

Երևան, 2001 - 268 էջ

Վերջին տարիներին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտը բեղուն աշխատանք է կատարում Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրների եւ ժողովուրդների պատմութեան, լեզուի եւ գրականութեան խնդիրներին նուիրուած թեմաների ուսումնասիրութեան եւ հրատարակման գործում:

Տարեկան հրատարակում են մօտ 20-25 ակադեմիական բարձր մակարդակով հագեցած գրքեր: Ի գուր չէ, որ 2000 թ. Օգոստոսի 27-ից Սեպտեմբեր 2-ը Մոնթրէալում տեղի ունեցած արեւելագէտների համաշխարհային գիտաժողովի վերջում ԵՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքոյ գործող արեւելագիտական եւ ասիական ուսումնասիրութիւնների միջազգային միութեան որոշմամբ Արեւելագիտութեան ինստիտուտը դարձաւ այդ հեղինակաւոր միութեան անդամ:

Գոհունակութեամբ պիտի նշենք, որ այս տարուայ Մարտ ամսին Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լոյս տեսաւ նաեւ կլենտէյլաբնակ արեւելագէտ-պատմաբան Փրոֆ. Ալիշան Պայրամեանի «Կիլիգա. Հայկական Քիլիս» խորագրով մենագրութիւնը, որը նուիրուած է դաշտային Կիլիկիայում գտնուող հայ ժողովրդի հնագոյն բնակավայրերից մէկի՝ Քիլիսի հայ համայնքի ազգային, եկեղեցական, կրթա-մշակութային լեզուական եւ հասարակական-քաղաքական կեանքի պատմութեան, վաղ միջնադարից մինչեւ 1922 թ. Այսինքն Կիլիկիայի հայութեան վերջնական հայաթափումը իր բնօրրանից:

Հարկ եմ համարում հենց սկզբից նշել, որ Փրոֆ. Ա. Պայրամեանը իր այս արժէքաւոր աշխատութիւնը նուիրել է իր հօր ու Պայրամեան տոհմի նախնիներին, ինչպէս նաեւ Հայկական Քիլիսի կրթա-

մշակութային կեանքի երախտաւորների յիշատակին: Խրախուսելի է եւ գնահատելի, որ զիրքը լոյս է տեսել հեղինակի զաւակների նիւթական միջոցներով:

Ինչպէս նշեցինք, Քիլիսը դաշտային Կիլիկիայի քաղաքներից է: Այն գտնուում է Այնթապից հարաւ, Թուրքիա-Սիրիա սահմանագծի մօտ: Քիլիսը ունեցել է խայտաբղէտ բնակչութիւն: Բացի հայերից եւ թուրքերից Քիլիսում եւ շրջակայքում ապրել են նաեւ յոյներ, արաբներ, քրտեր, հրեաներ, թուրքմէններ եւ այլն:

Քիլիսի հայ հոգեւոր կեանքում շատ մեծ դեր է խաղացել Ս. Յովհաննէս Մայր Եկեղեցին, որը կառուցուել է նախկին Գետնափոր վանքի տեղը 1856-ից մինչեւ 1872 թ. պոլսեցի Յակոբ Խալֆէ ճարտարապետի կողմից: Եկեղեցու շէնքը եղել է հոյակապ մի կառույց, որը շատ գեղեցիկ տեսք է տուել քաղաքի ընդհանուր համայնապատկերին: Դժբախտաբար, այս հոյակերտ եկեղեցին ուժանիւթով պայթեցուել է 1925 թ. քեմալական թուրք իշխանութիւնների կողմից, որպէսզի ոչ մի հետք չմնայ հայերի դարաւոր գոյութիւնից:

Հարկ է նշել, որ Քիլիսի Ս. Յովհաննէս հոյակերտ եկեղեցին եղել է ոչ միայն աղօթատեղի, քրիստոնէական հաւատքի տաճառ, այլեւ որպէս դպրատուն, գրչատուն-ուսումնարան, մշակութային կենտրոն, ուր ապրել եւ ստեղծագործել են մեծ թուով վանականներ, եկեղեցական հայրեր, ուսուցիչներ: Յատկանշական է նաեւ, որ Սուրբ Յովհաննէս եկեղեցու վանականներից որպէս աթոռակալ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական գահին են հասել Յովհաննէս Գ. Կաթողիկոս Քիլիսեցի, Կայծակն մականունով (1525-1539 թթ.) եւ Սահակ Ա. Կաթողիկոս Քիլիսեցի Մէլիսանէճեանը (1674-1686 թթ.) եւ բազում այլ հոգեւորական եւ աշխարհական գործիչներ, որոնք իրենց խորը նուիրածութեամբ որոշակի հետք են թողել Քիլիսի հայոց կրթա-մշակութային կեանքում:

19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին Քիլիսում բացուել են մի շարք կրթա-մշակութային վարժարաններ, այդ թւում՝ «Արուսեակ», «Լեւոնեան Դպրոցասիրաց», «Հայկազեան» եւ «Լուսասիրաց» վարժարանները:

Քիլիսի ազգային-եկեղեցական, ինչպէս նաեւ հայ համայնքի կրթամշակութային կեանքում խիստ կարեւոր ներդրում են ունեցել հայ Առաքելական, Աւետարանական (բողոքական) եւ կաթողիկէ եկեղեցիների հոգեւոր առաջնորդներն ու ամբողջ կղերականութիւնը:

Ինչպէս հեղինակն է հաստատում հայաբնակ միւս քաղաքների նման, Քիլիսի մէջ եւս առօրեայ կեանքի ու քաղաքակիրթ կենսամակարդակի ստեղծողները, անհրաժեշտ կենսամիջոցներ մատակարարողները հայերն են եղել, այդ թւում՝ բժիշկները, դեղագործները, ուսուցիչները, փաստաբանները եւ համարեա բոլոր արհեստաւորները:

Փրոֆ. Ալիշան Պայրամեանը պատշաճ գովասանքով է խօսում իր ծննդավայր Քիլիսի բոլոր հայ արհեստաւորների, այդ թւում եւ շինարարների մասին, մատնանշելով որ «այդ համեստ ու անանուն «Եաբուճի» շինարարները Քիլիսում կառուցել են բազմապիսի շէնքեր, եկեղեցիներ, մզկիթներ, դպրոցներ, գործարաններ, բաղնիքներ եւ այլ կառույցներ...»:

Այստեղ ակամայ ուզում եմ անդրադառնալ նորոգ հանդուցեալ, ծնունդով քիլիսեցի, հանրայայտ գրականագէտ-մանկավարժ Սարգիս Եափուճեանի թուրք մտաւորական Ալի էրթեմին գրած նամակի (Յունիս 2000 թ.) հետեւեալ տողերին, ուր մատնանշում էր հետեւեալը.

«...իմ տոհմը Եափուճի (շինարար) են կոչել կնքել ձեր եւ իմ երբեմնի հայրենակիցները, այն բանի համար, որ պապիս հայրը, ապա՝ պապս ու հայրս Քիլիսում բնակութեան տներ, խաներ ու բաղնիքներ են կառուցել: Կառուցել են ամրահիմն ու գեղեցիկ: Կառուցել են սիրով եւ չկասկածելով երբեք, որ մի օր, չգիտես ինչո՞ւ, իրենց ու իրենց զաւակներին սեփական տներից, արհեստանոցներից, արտ ու այգիներից, դպրոցներից ու աղօթատներից կը հանեն դուրս բռնութեամբ ու կը նետեն սիրիական անապատների մահաստանները... Այո՞, չեն կասկածել, բայց ինչքան էլ անհաւատալի, եղել է այսպէս: Մանրամասնութիւնները արիւն սառեցնելու չափ զարհուրելի են»:

Քիլիսում կուսակցական գործունէութիւն են

ծաւալել թէ հնչակեանները եւ թէ Դաշակցութիւնը: Փրոֆ. Ա. Պայրամեանի բերած տուեալներից պարզուում է, որ Քիլիսի մէջ հայ բնակչութեան ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու ուղղութեամբ գործուն աշխատանք են ունեցել յատկապէս Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղի անդամները: Յետագայում նրանցից թովմաս թովմասեանը եւ Յակոբ Պասմաճեանը, իրենց ազատատենչ պայքարի համար 1915 թ. Յունիսի 15-ին նահատակուեցին Կ. Պոլսոյ Սուլթան Պայազետի հրապարակում իրենց գաղափարակից միւս 18 հնչակեան նուիրեալների հետ:

Մեծ Եղեռնի օրերին մարդկային եւ նիւթական ծանր կորուստներ ունեցաւ նաեւ Քիլիսը: «Ընդհանուր հաշուով» գրում է Ա. Պայրամեանը. Քիլիսի հայութեան մէկ չորրորդը աւելի քան 1500 անձ կորած, մեռած, նահատակուած էր աքսորի ճամբաներին վրայ: Իսկ Քիլիսի հայութեան հրած նիւթական վնասները տեղահանութեան եւ Եղեռնի հետեւանքով անչափելի ու անհաշուելի էին» (էջ 209):

Այնուհետեւ 1918 թ. Հոկտեմբերի 30-ի Մուզրոսի գինադադարից յետոյ Եղեռնից վերապրած հայերը, երբ վերադարձան իրենց ծննդավայրը, տեսան թէ ինչպէս թալանուած ու կողոպտուած էին իրենց տները, եկեղեցիները, դպրոցները, խանութները...:

Այս ուշադրաւ գիրքը ընթերցելիս, նկատեցինք, որ հեղինակի տեսադաշտում միմիայն Քիլիսը չէ: Պատմական դէպքերի իրադարձութիւնների նկարագրութիւնները շաղախուած են հարեւան հայաբնակ քաղաքների, Կիլիկիայի հայ թագաւորութեան եւ

ընդհանրապէս հայ ժողովրդի պատմութեան առանձին կարեւոր դրուագների հետ: Փրոֆ. Ալիշան Պայրամեանը մանրամասն անդրադարձել է նաեւ Օսմանեան կայսրութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան հետ առնչուող հարցերին, ինչպէս օրինակ ենիչերների եւ ճելալիական ապստամբութեան մասնակիցների գործադրած բռնութիւններին, թանգիմաթի բարեփոխութեան քաղաքականութեանը, թուրք-ֆրանսիական յարաբերութիւններին, հայոց Մեծ Եղեռնի համատարած ողբերգութեանը եւ այլ հարցերին:

Ի միջի այլոց, շատ տեղին է հեղինակի վրդովմունքով լի դատողութիւնը, որ «Հայկական Սովետական Հանրապետարան»-ի մէջ զարմանալիօրէն բաց է թողնուած «Քիլիսի» մասին որեւէ տեղեկատուական յիշատակում: Մինչդեռ, ընթերցելով գիրքը նկատում ենք, թէ Քիլիսը իր եկեղեցիով, մշակոյթով եւ ազգային հասարակական կեանքով ինչպիսի կարեւոր դեր է խաղացել հայ ժողովրդի տուեալ տարածքաշրջանի պատմութեան համար:

Ահա, Քիլիսի հայութեան դարաւոր անցեալի պատմութիւնը կորստից փրկելու նպատակով Փրոֆ. Ալիշան Պայրամեանին յաջողում է իր կողմից պատրաստուած «Քիլիս» բառօրուածը Արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանի միջոցով ընդգրկել Երեւանում հրատարակուող «Հայկական Համաօր Հանրագիտարանի» 4-րդ հատորում:

Եզրակացնելով նշենք, որ «Հայկական Քիլիս» գիրքը Փրոֆ. Ալիշան Պայրամեանի երկար տարիների քրտնաշան աշխատանքի արդիւնքն է, շարադրուած գիտական պատշաճ մա-

կարգակով, համոզիչ վերլուծութիւններով եւ եզրահանգումներով: Հեղինակը ամենայն բժախնդրութեամբ օգտագործել է Քիլիսի հետ առնչուող սկզբնաղբիւրները (վաղ միջնադարից սկսած), փաստագրական նիւթերը, ականատեսները, դէպքերի անմիջական մասնակիցների գրի առած պատմութիւնները, ինչպէս նաեւ իր անձնական յուշերը:

Այն հայկական Քիլիսի ամբողջական պատմութիւնն է եւ կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ: Ի գուր չէ, որ Արեւելագիտութեան Ինստիտուտի անօրէն Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը «գրուատանքի արժանի ուշագրաւ ուսումնասիրու-

թիւն» վերնագիրը կրող երկու խօսքի վերջում, հետեւեալ գնահատականն է տուել:

«Ալիշան Պայրամեանի սոյն երկասիրութիւնը, որը գրուած է բանիմացութեամբ, սիրով ու ջերմութեամբ, պարունակում է առատ, ինքնատիպ եւ օգտակար նիւթ հայկական Քիլիսի պատմութեան, մշակութային եւ քաղաքական կեանքի, կոտորածների եւ Յեղասպանութեան, ինչպէս նաեւ յարակից այլ հարցերի վերաբերեալ: Հաւատացած ենք, որ սոյն ուշագրաւ աշխատութիւնը կը ծառայի մեր հոգեւոր-մշակութային արժէքները եւ պատմութեան առանձին էջերը մոռացութիւնից փրկուելու ազնիւ գործին»:

ՆՈՐ ՕՐ • ՀԱՐԱԹ, ՅՈՒՆԻՍ 14, 2001

ՆՈՐ ԿԵԱՆՔ, ԻԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 40, ՍԵՊՏ. 20, 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐԼԵՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վաստակաշատ արևելագետ, մեծաբան դոկտ. փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանին. Արևելագիտության ինստիտուտի Ձեր նախկին գործընկերները սրտանց շնորհավորում են Հայաստանի անկախության 10- ամյակի կապակցությամբ Ձեզ շնորհված ՄՈՎԱԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ պետական բարձր շքանշանի առթիվ:

Իրոք որ Ձեր գիտական խորիմաստ ուսումնասիրություններով, դասախոսական և կազմակերպչական ժրջան աշխատանքներով, դուք լիովին արժանի եք մեծ Պատմահոր անունը կրող այդ բարձր պարգևին:

Ձեզ բարեմաղթում ենք քաջաողջուցուն, գիտական ստեղծագործական նորանոր հաջողություններ, պահպանելու և բազմապատկելու հայ արևելագիտության բարձր համբավը:

Առիթը օգտագործելով մեր շերմագին ողջույններն ենք հղում նաև մեզ համար միշտ հարգատ ինստիտուտի հին ու նոր մեր բոլոր գործընկերներին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հոբելյանական 20-րդ հատորի գիտական ամենաբարձր մակարդակով հրատարակության առթիվ:

Հոկտեմբեր 12, 2001 թ.

Լոս Անջելես

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ  
ԱԼԻՇԱՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ  
ՍՎԻՏ ԶՈՒԼԺՅԱՆ  
ԵՐՎԱՆԻ ՄԱՐԳՍՅԱՆ  
ՄԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏՈՎ ԱՊՐՈՂ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Ողջոյնի խօսք բանաստեղծ Գեորգ Քրիստինեանի  
երկու հատորների շնորհանդէսի առթիւ)

Գեկտեմբերի 6-ին, 2001 թ. Կլեմտէյլի հանրային գրադարանի սրահում տեղի ունեցաւ բանաստեղծ-գրականագէտ՝ Գեորգ Քրիստինեանի վերջերս հրատարակած «Անսա իմ Ձայնին» եւ «Գրականութիւնը Հայրենիք է» երկու հատորների շնորհանդէսը (Նայիրի հրատարակչութիւն, Երեւան):

Գլխաւոր բանախօսներն էին Դոկտ. Փրոֆ. Վահագն Մկրտչեանը եւ բանաստեղծ Գարուշ Հայրենացը: Հանդիսավարն էր ասմունքի վարպետ Նունէ Աւետիսեանը: Եղան նաև ողջոյնի եւ մաղթանքի խօսքեր:

Ստորեւ ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում մեր աշխատակից՝ Փրոֆ. Աւետիս Փափագեանի ողջոյնի խօսքը:

Սիրելի Հայրենակիցներ,

Կարծում եմ, որ սխալուած չեմ լինի եթէ ասեմ, որ Հայ գիրն ու գրականութիւնը ծաղկում եւ վերելք են ապրում Լոս Անճելըսի Հայահոծ գաղութում: Փաստ է բազմաթիւ թերթերի, ամսագրերի, հանդէսների եւ գրքերի լոյս ընծայումը:

Ահա այդ գրքերից երկուսի շնորհանդէսի համար ենք այսպէս խուռներամ հաւաքուել այս երեկոյ:

Ուստի, հենց սկզբից սրտանց շնորհաւորում եմ այս երկու արժէքաւոր հատորների շնորհանդէսի հեղինակին, մեծատաղանդ բանաստեղծ եւ ներհուն գրականագէտ Գեորգ Քրիստինեանին, բարեմաղթելով բաջաւոյժութիւն, բեղուն գրիչ, ստեղծագործական նորանոր յաջողութիւններ եւ իր Հայրենասիրական բերդեղային երազների իրականացում:

Ես միշտ հետաքրքրութեամբ կարդացել եմ մամուլում լոյս տեսած նրա բանաստեղծութիւններն ու հրապարակախօսային յօդուածները, բայց անձամբ ծանօթացել եւ մտերմացել եմ Լոս Անճելըսում իմ առաջին գրքի լոյս ընծայումից յետոյ, երբ այն սիրով նուիրել եմ նրան: Բնականաբար յետագայում միւս գրքերս եւս, նկատի

ունենալով ընդհանրապէս գրքի մասին նրա հետեւեալ գնահատականը: «Գիրքը Միակ արժանի իրն է այս աշխարհում»:

Եւ նա ինքնաբերաբար գրախօսականներ է գրել միմիայն, այո՛, միմիայն Հայոց Յեղասպանութեան նուիրուած իմ գրքերի մասին, որովհետեւ ինքը իր հերթին գրչի սուր ծայրով տեւապէս անարգանքի սիւնին է գամել 20-րդ դարի սկզբին Հայ ժողովրդի նկատմամբ գործադրուած առաջին Յեղասպանութեան յանցագործներին:

«Տիեզերական չափումներ են հարկաւոր Հայոց կորուստների, Հայոց վշտի ու ցաւերի սահմանները որոշելու համար,- գրել է Գ. Քրիստինեանը: Այդ մեծ բեռը մեր վիրտն ու ցաւը ես իբրեւ Հայ բանաստեղծ բարձում եմ անցեալի ու ներկայի թուրք ջարդարարների եւ իշխանաւորների վրայ, հոգու վրայ: Եւ նրանցից պահանջում եմ միայն մեր սուրբ գերուած երկիրը, մեր Մուշն ու Սասունը, մեր Վանն ու Կարինը, մեր Արարատն ու Անին, մեր հողն ու ջուրը, մեր հայկական լեռնաշխարհը»:

Գեորգ Քրիստինեանը անցել է կեանքի փորձութեան մեծ բովով: Նա եղել է ուսուցիչ, դասախօս, թարգմանիչ, խմբագիր, տնօրէն եւ տարիների մեղուաջան աշխատանքով ընթերցողի սեղանին է գրել բանաստեղծութիւնների, պոէմների, հրապարակախօսային յօդուածների բարձրարժէք մի շարան: Միեւնոյն ժամանակ նա խորապէս քաջատեղեակ է Հայ ժողովրդի պատմութեան բոլոր ծալքերին: Ի զուր չէ, որ «գրականութիւնը Հայրենիք է» հատորը սկսում է մեծ պատմահայր Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» նուիրուած լայնիմաստ ուսումնասիրութեամբ:

Այս հատորի բազում էջերում խորը ուժգնութեամբ շօշափուում է, ոգեկոչուում է նաև Հայոց Մեծ Եղեռնի թեման: Այնպէս՝ որ Քրիստինեանը ոչ միայն բազմաբնոյթ, այլեւ եղեռնագէտ բանաստեղծ է բառիս բուն իմաստով:

«Եղեռն, ինչ սահմուկեցուցիչ բառ, քստմնելի երեւոյթ, ազգերի եւ ողջ մարդկութեան դէմ ուղղուած ոճիր: Եւ ճակատագիրը, Աստուած թէ՛ սատանայ, ո՛վ տնօրինեց ու սաղրեց աշխարհաբաղաբական այն տիեզերական քառուր, որին զոհ դարձաւ քրիստոնէութեան ջահակիրը Հայ ժողովուրդը,- գրել է Գ. Քրիստինեանը վերոյիշեալ գրքի 239-րդ էջում...»:

Նշուած հատորում կան Հայ անուանի գրողների,

գրականագէտների, պատմաբանների, արձակագիրների, մշակույթի գործիչների երկերին նուիրուած գրախօսութիւններ, մեծարանքի գրութիւններ եւ մեր ժողովրդին յուզող զանազան բնոյթի յօդուածներ, որոնք շարադրուած են խորը վերլուծութեամբ, հետաքրքիր մեկնաբանութիւններով եւ գնահատանքներով:

1996 թ. Գ. Քրիստինեանի հետ ծանօթանալուց յետոյ, նրա դէմքին յաճախ նկատել եմ խորը թախիծ, տխուր աչքեր: Իմ մօտ այն տպաւորութիւնն էր ստեղծուել, որ այդ բոլորի հիմնական պատճառը հայրենիքի կարօտն է, որովհետեւ յաճախ էի կարդում հայրենիքին նուիրուած նրա բանաստեղծութիւնները:

«Հայրենական հող, կարօտել եմ էեզ,  
կարօտել եմ էո թիւր ծաղիկներին...  
Բոպիկ ոտքերս ծակող, արիւնդ  
Փշերիդ անգամ կարօտել եմ ես...»:

Այնուհանդերձ, աստիճանաբար ծանօթանալով նրա միւս բանաստեղծութիւններին, պոէմներին, քառեակներին, ամէն ինչ պարզ դարձաւ ինձ համար, որ նա խորապէս տառապել եւ տառապում է նաեւ իր հարազատներէ՝ վաղաժամ կորստի խորը ցաւով: Օրինակները շատ են. բաւարարուենք միայն հետեւեալ տողերով.

«Կորած իմ սէր, կորած իմ նրզ,  
Առաւօտս տարար էեզ հետ.  
Իրիկեացաւ իմ կեանքը հեզ,  
Ու ես՝ պիտի կորչեմ անհետ...»: (էջ 123):

Այս օրերին, երբ թերթեցի Գ. Քրիստինեանի «Անսա իմ Չայնին» հատորը, մի շարք բանաստեղծութիւններում ուշադրութիւնս գրաւեցին մեր պատմութեան վերաբերող նրա հեռատես եւ իմաստուն հաստատումները: Ահա մի երկու օրինակ: Առաջինը «Հայաստան աշխարհ» վերնագիրը կրող բանաստեղծութեան հետեւեալ տողերն են.

«Ի՛նչ գարմանալի աշխարհ է, Աստուած,-  
Հողը փորձում են՝ գիր է դուրս գալիս...  
Հողից ու քարից գրեր են պեղում,  
Հողին ու քարին մեր սէ՛րն է ծաղկում»:  
(էջ 8):

Բնականաբար, ես չեմ զարմանում, որ այդ իրօք այդպէս է: Ուղղակի զարմանում եմ այս օրերին էլ կրկնուող նման զուգադիպութիւնների վրայ: Մի քանի օր առաջ մամուլից տեղեկացանք, որ Հայաստանում նոր գրերի եւ քարէ տաճառների յայտնագործութիւններ են կատարուել: Այսպէս, Արագածոտնի մարզի Ագարակի հնավայրում պեղումներից յայտնաբերուել է հազարամեակներ

առաջ կառուցուած քաղաք-տաճար, այդ թւում՝ խեցեղէն արձանիկներ, պրոնզէ առարկաներ, արծաթէ դրամ: Իսկ մի այլ հաղորդման մէջ նշուած էր, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գիւղի կիսաւեր Ս. Աստուածածին եկեղեցւոյ (կառուցւած 1321 թ.) վերանորոգման աշխատանքների ընթացքին, պատի մէջ յայտնաբերուել է Արտաշէսեան դարաշրջանին պատկանող սահմանաքար հինգ տող արամերէն արձանագրութեամբ: Ահա այս զուգադիպութեան վրայ եմ զարմանում:

Երկրորդ օրինակը կրկին զուգադիպում է մեր օրերում կատարուող դէպքերի հետ, բայց տխուր է: Այն հեղինակի երկխօսութիւնն է Եղիշէ Չարենցի հետ, որն սկսում է հետեւեալ տողերով.

«Դարձեալ խաբուեցինք, սիրելի՛ Չարենց,  
Տեսնո՞ւմ ես՝ որքան դիրքին ենք խաբոււմ,  
Տեսնո՞ւմ ես՝ մերձմէ՛ չեասկացան իրար,  
Խաղաթո՞քերը խառնեցին կրկին...»:

Կարդալով այս տողերը անմիջապէս աչքիս առաջ է գալիս «հայ-թրքական հաշտեցման յանձնաժողով»ին վերաբերող տիրահաշակ պատմութիւնը, որի գործունէութեանը ծանօթ ենք բոլորս: Իսկ Գէորգ Քրիստինեանի նման խիզախ հայորդին չէր կարող լուռ մնալ այդ ազգամիաս գործարքի նկատմամբ: Եւ յայտնեց իր վճռական կարծիքը «հաշտարարները» վերնագիրը կրող վերջերս հրատարակուած յօդուածում: Ահա մի հատուած.

«Հաշտարարների գործունէութեան հակահայ բնոյթն անժխտելի է...: Քաղաքական սնանկացումն ակնյայտ է: Հայ ժողովուրդը եւ հայկական պետականութիւնը այսօր կանգնած են նորանոր անկակալների շեմին: Մթափուէնք...»: (Տէն «Ասպարէզ», Նոյեմբեր 6, 2001 թ.):

Շնորհանդէսին ներկայացուած «Գրականութիւնը հայրենիք է» գիրքը աւարտուում է մեծանուն

արձակագիր Յակոբ Կարապենցի իր ժամանակին Գէորգ Քրիստինեանին ուղղուած մի շարք նամակներով, ուր տեղ է գտել այսպիսի ծանրակշիռ մի գնահատական.

«Սիրելի Գէորգ Քրիստինեան,

Ամէն անգամ, որ դուք գրում էք, գերազանցում էք ձեզ: Եւ այսպէս շարունակաբար, օրից օր, գրքից գիրք, յօդուածից յօդուած եւ բանաստեղծութիւնից բանաստեղծութիւն...» (էջ 271):

Շատ ճիշդ է ասուած եւ իսկապէս, որ այդպէս է: Կարգացէ՛ք Գէորգ Քրիստինեանի Հայրենասիրական ոգով շարադրուած ստեղծագործութիւնները եւ դուք այնտեղ կը գտնէք մեծ խորհուրդ եւ ուսանելի շատ դասեր:

Բոլոր դէպքերում կրկին անգամ շնորհաւորելով գրչակից բարեկամիս, խօսքս պիտի աւարտեմ նրա «Նամակ Լոս Անճելըսից» մի զգայացունց բանաստեղծութեան ազդեցութեան տակ յօրինուած իմ հետեւեալ ձօնով:

«Նամակ Հայաստանից»

Իմ լաւ ընկեր, իմ լաւ բարեկամ,

Անունդ է՝ Գէորգ Քրիստինեան:

Քեզ չենք նախատում, հասկանում ենք քեզ - Դու ոտից գլուխ սէր ես ու թախիծ:

Բաւ է տանջուեալ հողիդ կարօտով,  
Եւ անկողմնացոյց թափառես մոլոր,  
Թո՛ղ օտարութեան փշերը ձեռքիդ՝  
Արի՛ միացիր օջախիդ սիրով:

Լոս Անճելըս, Դեկտեմբեր 1, 2001

ՆՈՐ. ՕՐ • ԸԱՐԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, 2001.

Նոր Հայաստան. Օրաթերթ

ՅՈՒՆԻՒՍ. 26, 2002.

### ԲԱՑ ՆԱՄԱԿ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՕՐԱԹԵՐԹԻՆ

(«ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅՑ» ԳՐՔԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԼՈՑՍ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԹԻՒ)

Անցնող տարուայ ընթացքում, ձեր օրաթերթում պարբերաբար հրատարակեցիք երկու Հայանպաստ գրքեր: Աւելի ճիշդ, դրանք Հայոց Յեղասպանութիւնը ականատեսի վկայութիւններով եւ փաստագրական նիւթերով Հաստատող գրքեր էին:

Առաջինը՝ Մեվլան Զատէ Ռիֆաթ, «Թուրքական յեղափոխութեան մութ ծալքերը», երկրորդը՝ «Դատարարութիւն Թալեաթ Փաշայի» (սղագրական զեկուցում):

Բնականաբար, այս գրքերը ինձ լաւ ծանօթ էին, այնուհանդերձ, կրկին հետաքրքրութեամբ կարդալով, տուեալ նիւթը խնամքով առանձնացրել եմ թերթի իւրաքանչիւր Համարից եւ պահել՝ ամբողջութեամբ, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում վերանայնեմ: Համոզուած եմ, որ ընթերցողներից շատերը նոյնպէս պահած կը լինեն, քանի որ այս երկուսը Հազուադէպ ճարտող գրքերից են:

Մի խօսքով, երկու կարեւոր գրքեր նուիրեցիք ձեր ընթերցողներին: Իսկ ԳԻՐՔ-ը բանաստեղծ Գէորգ Քրիստինեանի ընտելագրութեամբ՝ «միակ արժանի իրն է այս աշխարհում»: Ուստի, յայտնում ենք մեր գոհունակութիւնն ու խորին շնորհակալութիւնը ձեր այս օգտակար նախաձեռնութեան համար:

Միմիայն մասնագէտներին ու պատմաբաններին ծանօթ այսպիսի փաստագրական գրքերը, գոնէ 20-30 տարի անց կրկին պէտք է հրատարակուեն, որպէսզի ժողովրդի մէջ միշտ վառ մնան Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը հաստատող փաստերն ու արդարութեան ախտիան հերոս զուակների առնական կերպարն ու պայծառ յիշատակը: Հասկանալի է, որ Սողոմոն Թեհլիրեանի կողքին նկատի ունեմ նաեւ Արշալիր Շիրակեանին, Արամ Արկանեանին, Պետրոս Տէր-Պողոսեանին, Արտաշէս Գէորգեանին, Յակոբ Մելքունեանին, Միսաք Թոռակեանին եւ միւսներին:

Այս գրութեանս մէջ յատկապէս կանգ եմ առնելու 1921 թուականին Միխիթարեան տպարանում հրատարակուած «Դատարարութիւն Թալեաթ Փաշայի» վերնագրի Հարցի շուրջ, նկատի ունենալով, որ Թալեաթ Փաշան դեռեւս հեռակայ կարգով դատի էր տրուած 1919 թուականին:

Բնականաբար, ընթերցողը նկատեց, որ այս դատարարութիւնում, որպէս ամբաստանեալ, խօսքը գնում է միայն Սողոմոն Թեհլիրեանի մասին: Ուստի, այն պէտք է վերնագրուէր «Դատարարութիւն Սողոմոն Թեհլիրեանի»: Այսպիսով, տեսնուէս կը յիշուէր եւ կը հնչէր արդարութեան խորհրդանիշ՝ Սողոմոն Թեհլիրեանի անունը:

Այնուհանդերձ, Հարկ եմ համարում նշելու, որ վերոյիշեալ վերնագիրը տուեալ ժամանակ ոչ թէ թիրիմացաբար է տրուած, այլ գիտակցօրէն, որպէսզի շեշտուի եւ ցցուն կերպով երեւայ Հայերի քնաջնջումը իրագործող գլխաւոր յանցագործի անունը: Ուստի, հրատարակիչները վերոյիշեալ վերնագրից յետոյ անուանաթերթում գրել են. «Սղագրական զեկուցում Թալեաթ Փաշան սպաննելու համար ամբաստանուած ուսանող Սողոմոն Թեհլիրեանի դատարարութեան, որ տեղի ունեցաւ Պեռլինի նահանգային Գ. Դատարանին առջեւ, 2-3 Յունիս, 1921»:

Այնպէս որ, «Նոր Հայաստան» օրաթերթում եւս փակագծերում պէտք է նշուէր այս մասին կամ տրուէր մէկ վերնագիր՝ «Դատարարութիւն Սողոմոն Թեհլիրեանի»:

Այստեղ անհրաժեշտ եմ համարում մի երկու խօսք ասել Թալեաթի իրական դատարարութեան մասին: Այսպէս:

Օսմանեան Կայսրութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ ներքաշելու եւ Հայերի բռնի տեղահանութիւնն ու կոտորածը

կանխամտածուած կազմակերպելու համար, 1919թ. Ապրիլի 28-ին դատական պատասխանատուութեան ենթարկուեցին Երիտթուրքական կառավարութեան ղեկավարներն ու «Միութիւն եւ առաջադիմութիւն» (Իթթիհատ վէ Թերաքքի) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամները: Դատական նիստերը տեղի ունեցան 4 Պոլսում, Սուլթան Մահմետ 6-րդ վահիտտիի կայսերական հրամանով կազմուած ռազմական արտակարգ ատեանի կողմից: Յետագայում, ռազմական արտակարգ ատեանի 1919թ. Յունիսի 5-ի ընդունած դատավճռով, Թալեաթը եւ նրա յանցագործ միւս գործընկերները Հեռակայ կարգով դատապարտուեցին մահուան: Այս արդար դատավճիռը չգործադրուեց, քանի որ գլխաւոր յանցագործները գտնուած էին փախուստի մէջ:

Այնպէս որ Պեռլինում կատարուած Հաշուեյարդար արդարացի էր, ուղղակի Սողոմոն Թեհլիրեանը իրականացրեց այդ դատավճիռը:

Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեան մասին շատ է խօսուել, մեկնաբանուել եւ զնահատուել թէ՛ առանձին գրքերում, թէ՛ հրապարակային յօդուածներում:

Ստորեւ, մենք նպատակայարմար գտանք բերելու գերմանացի սպայ Հայնրիխ Ֆիրրիխտերի «Հայաստան 1915» գրքից մի գլուխ, ուր շատ տեղին գնահատական է տրուած Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեանը:

Նշեք, որ Հայնրիխ Ֆիրրիխտերը 1914թ. Թուրքիայում գերմանական զինուորական առաջելութեան գերագոյն հրամանատար, մարշալ Լիման Ֆոն Սանդերսի անձնական թարգմանն է եղել: Լ.Ֆ. Սանդերսը նոյնպէս վկայութիւն տուեց Սողոմոն Թեհլիրեանի պեռլինեան դատավարութեան ժամանակ:

Հայնրիխ Ֆիրրիխտերը ականատես է եղել Հայերի նկատմամբ կատարուած ահաւոր կոտորածների եւ Գերմանիա վերադառնալուց

յետոյ հրատարակել է «Հայաստան 1915» գիրքը, ուր լիովին հաստատուած է Երիտթուրքերի կողմից Հայերի նկատմամբ գործադրուած բարբարոսային բնաջնջման ծրագիրը:

**ՀԱՅԵՐԻ ՎԻՆԵՄ ՏԵԼԸ**

1921 թուականի Մարտի 15-ին, Հայ ուսանող Թեհլիրեանը Շառլոտենբուրգի (Բեռլին) Հարդենբերգ փողոցում զգեստնեց նախկին մեծ վեզիր Թալեաթ Փաշային:

Երիտթուրքերի ամենաազդեցիկ առաջնորդը, Թուրքիայի նշանաւոր պետական գործիչը, վրիժառուութեան բացայայտ զոհ դարձաւ: Մահափորձի Հեղինակը, որին զազազած ամբողջ ծեծելով արիւնլուիկ արեց, առանց դիմադրութեան յանձնուեց, թոյլ տուեց, որ իրեն ձերբակալեն:

1921 թուականի Յունիսի 3-ին, Բեռլինի երզուեալների ատեանը, երկու օրուայ դատավարութիւնից յետոյ, անպարտ հռչակեց նրան, ով Հաշուեյարդար էր տեսել Թուրքիայի ռազմական քաղաքականութեան երբեմնի ամենահզօր ղեկավարի Հետ: Այս դատավճիռը գերմանական արդարադատութեան պատմութեան փառաւոր էջն է: Առանց որոշակիօրէն ձեւակերպելու, յաղթեց այն անսովոր մտայնութիւնը, որ ոչ թէ յանցագործը, այլ զոհն է մեղաւորը եւ Հենց նման Հանդգմունքն էլ արդարացման հիմք դարձաւ: Ատեանը Հասկացաւ այն մարդու հոգեվիճակը եւ տուայտանքները, որը գլխին ստացած ծանր հարուածից յետոյ երկու օր ընկած է մնացել եղբօր դիակի վրայ, լսել քոյրերի յուսահատ ու ցաւատանջ ճիչերը, երբ նրանց բռնաբարել են Թուրք զինուորները:

Դատարանի դահլիճում, արգելապատի միւս կողմում կանգնած էր ոչ թէ վտիտ, ոչնչով աչքի չընկնող մի երիտասարդ Հայ, այլ ամբողջ կործանուած ազգը, անսահմանօրէն տարա-



Սողոմոն Թեհլիրեան

ծուած Բանկրեզսի- ոգին, խողխողուած աւելի քան մէկ միլիոն տղամարդկանց, կանանց ու երեխաների ուրուականը: Ու նրանք իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում մոռացութեան, ամօթի դէմ, որն իր խարուսիկ մշուով քողարկում է այն անսահման խորխորատները, որոնք պիտի բացայայտուեն վաղը:

Գժուար է դատաւարազի վիճակը: Համաշխարհային հռչակ ունեցող այնպիսի դատապաշտպաններ, ինչպիսիք են Քերթաուէլը, Ֆոն Գորդոնը եւ Քիլի Համալսարանի իրաւագիտական բաժնի պրոֆէսոր Նիմայերը, պայքարում էին մեղադրեալի կեանքի համար:

Թեհլիրեանը Թալեաթ Փաշային համարել է Հայ ժողովրդի բնաջնջման գլխաւոր յանցագործը: 1915 թուականի կոտորածներից, որոնց զոհ էր գնացել իր ամբողջ գերդաստանը, միայն ինքն էր փրկուել: Տարիներ շարունակ

Պարսկաստանում, ապա ամայացած Հայրենիքում ղեգերելուց յետոյ, նա վերադարձել էր ծննդավայրը՝ Երզնկայ, որի 20 հազար ազգաբնակչութիւնից մի քանի ընտանիք հազիւ էին շարդից ազատուել: Հայրենի տունը չաւերակողտի էր վերածուել: Մի անգամ, ինչպէս ինքն է պատմում, մայրը յայտնուում է երագում, հրամայում՝ ոճրագործից վրէժ լուծել: Տեսիլքն ու ձայնը Հետապնդում են նրան մինչու այն օրը, երբ Թալեաթին իր գնդակներից զետիւն է տապալում:

\* Տես՝ Հայնրիխ Ֆիրրիխտեր, «Հայաստան 1915», Երևան-1995, էջ 7-8: Թարգմ. Գրիգոր Զանկեանի:



# ԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՋԵՐԸ ՄՈՌԱՅՈՒԹԻՒՆԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՎԵՋ ԳՈՐԾԻՆ ՆՈՒԻՐԵԱԼ ՓՐՈՖ. ԱԼԻՀԱՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ

Քիլիսի Հայրենակցական Միության Վարչության կազմակերպությամբ տեղի ունեցավ շնորհանդես մը՝ նուիրուած Փրոֆ. Ալիշան Պայրամեանի «Կիլիկա, Հայկական Քիլիսը» գիրքին հրատարակութեան առթիւ: Հոկտ. 14-ին, Կլենտէյլի Կեդրոնական Գրադարանին մէջ կատարուած ձեռնարկին խօսք առած էր նաեւ Փրոֆ. ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆը, որու սրտի խօսքը կը ներկայացնենք ահաւասիկ:

Ձեզանից շատերին յայտնի է, որ սրանից մօտ երեք տարի առաջ այս նոյն սրահում տեղի ունեցաւ Փրոֆ. Ալիշան Պայրամեանի «Ալեքսանտրէի ՍանՂաքի Հարցը եւ Միջազգային Դիւանագիտութիւնը» (1936-1939) աշխատութեան առաջին հրատարակութեան շնորհանդէսը: Գոհունակութեամբ պիտի նշեմ, որ այս առաջին եւ յետագայում 1999 թ. Անթիլիասի մայրականքում լոյս տեսած հրատարակութիւնները լաւ ընդունուեցին եւ բարձր գնահատուեցին ոչ միայն Հայաստանում, Լոս Անճելըսի հայահոծ գաղութում, այլեւ արաբական մի շարք երկրներում, քանի որ այն դեռեւս 1993 թ. լոյս էր տեսել նաեւ արաբերէն լեզուով Դամասկոսում հայ բարերար Վարուժան Սալաթեանի նախաձեռնութեամբ:

Բնականաբար այդ յաջողութիւնները նոր լիցք ու եռանդ տուին Ալիշան Պայրամեանին, որպէսզի նա բուռն կերպով շարունակի իր գիտահետազոտական աշխատանքները: Եւ ահա սեղանի վրայ է «Կիլիկա, Հայկական Քիլիս» նոր աշխատութիւնը, որի շնորհանդէսի համար կրկին հաւաքուել ենք խուռներամ ըստ արժանւոյն գնահատելու այն:

Փրոֆ. Ալիշան Պայրամեանի այս մենագրութիւնը նուիրուած է դաշտային Կիլիկիայում գտնուող հայ ժողովրդի հնագոյն բնակավայրերից մէկի՝ Քիլիսի հայ համայնքի ազգային, եկեղեցական, կրթա-

մշակութային ու լեզուական եւ հասարակական-քաղաքական կեանքի պատմութեանը:

Այս գիրքը են Ա. Պայրամեանի երկար տարիների քրոնաջան աշխատանքի արդիւնքն է, շարադրուած գիտական պատշաճ մակարդակով, համոզիչ վերլուծութիւններով եւ եզրահանգումներով: Հեղինակը ամենայն բժախնդրութեամբ օգտագործել է Քիլիսի հետ առնչուող սկզբնաղբիւրները, փաստադրական նիւթերը, ակնատեսների, դէպքերի անմիջական մասնակիցների գրի առած պատմութիւնները, ինչպէս նաեւ իր անձնական յուշերը: Եւ արդիւնքում ստացուել է ուշագրաւ եւ բարձրարժէք մի աշխատութիւն, որը ծառայելու է մեր ժողովրդի պատմութեան շատ կարեւոր էջերը մուտքութիւնից փրկելու վեճ գործին:

Մի խօսքով՝ սրտանց շնորհաւորում եմ Ալիշան Պայրամեանին, ինչպէս նաեւ նրա ազնուազարմ կողակցին՝ Տիկ. Միլվիային, որը մշտապէս նեցուկ է կանգնում իր ամուսնուն: Միեւնոյն ժամանակ ամենայն գովասանքի եւ խրախուսանքի են արժանի հայկական շնչով լեցուած նրանց զաւակները, քանի որ նրանց հովանաւորութեամբ է, որ լոյս աշխարհ եկաւ այս գիրքը:

Իմ աւագագոյն գործընկերոջ՝ Ալիշան Պայրամեանին բարեմաղթում եմ կատարեալ առողջութիւն եւ թէկուզ այս ծերունազարդ տարիքում էլ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ: Վարձքը կատար:

Ես ցանկանում եմ մի երկու խօսք ասել նաեւ Ա. Պայրամեանի հայրենասիրական, մարդասիրական մի շատ կարեւոր ասպետական արարքի մասին: Այս տարուայ սկզբին նա 1000 տղար նուիրեց Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրինութեան: Այստեղ տեղին է մատնանշել, որ այդ գումարը ծառայեց մի շատ կարեւոր եւ խիստ անհրաժեշտ ձեռնարկի կազմակերպման: Բանը այն է, որ այս տարուայ Յունիսի 7-8-ին ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի նախաձեռնութեամբ, Երեւանում տեղի ունեցաւ Երիտասարդ Արեւելագէտների Հանրապետական 22-րդ գիտական նստաընթացը, ուր զեկուցումներով հանդէս եկան Երեւանի գիտական բարձրագոյն հաստատութիւնների 42 երիտասարդ գիտաշխատողներ: Ինստիտուտի տնօրէն Փրոֆ. Նի-

կողայ Յովհաննիսեանի ուղարկած շնորհակալութեան նամակում նշուած էր, որ այդ գիտա-  
 փողովի կազմակերպման բոլոր ծախսերը այդ  
 թուում ծրագրի, հրաւիրատուի, թէզիաների  
 գրքոյկի, գեկուցողներին յանձնուած դիպլոմներին  
 ընդունելութեան եւ հիւրասիրութեան ծախսերը  
 կատարուել են Ալիշան Պայրամեանի տրամադրած  
 գումարով: Եւ դեռ աւելին, օրերս հեռախօսային  
 գանգով Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը ինձ  
 յայտնեց, որ ինստիտուտի 12 երիտասարդ գի-  
 տաշխատողների գեկուցումները Հոկտ. վերջերին  
 լոյս են տեսնելու առանձին գրքով կրկին Ալիշան  
 Պայրամեանի մեկենասութեամբ:

Անկեղծ ասած, ես անմիջապէս խոստացայ այդ  
 գիրքը ստանալուս պէս գրախօսական գրել, որպէս-  
 զի խրախուսուեն երիտասարդ գիտաշխատողները:  
 Ի միջի այլոց թէզիաների բովանդակութեան  
 ծանօթանալով, մարդ լիովին պատկերացում է  
 կազմում թէ ինչպիսի գիտական բարձր մակար-  
 դակով են պատրաստուում այդ գեկուցումները:  
 Երիտասարդների լեզուների իմացութիւնը, օգ-  
 տագործուած հարուստ աղբիւրների վերլուծութիւ-  
 նը, համոզիչ եզրակացութիւնները, ուղղակի հիաց-  
 նում են ընթերցողին:

\*\*\*

Իմ ողջոյնի խօսքը ուզում եմ աւարտել հե-  
 տեւեայով Ա. Պայրամեանի այս բարձր որակով եւ  
 շքեղ ձեւաւորումով լոյս տեսած գրքի համար  
 սրտանց շնորհաւորում եմ նաեւ այսօրուայ շնոր-  
 հանդէսը կազմակերպող Լոս Անճելըսի Քիլիսի  
 Հայրենակցական Միութեան վարչութեան բոլոր  
 անդամներին, ինչպէս նաեւ տարբեր երկրներում  
 բնակւող քիլիսցիներին եւ նրանց ժառանգներին:  
 Յատուկ շնորհակալութիւն պիտի յայտնեմ նաեւ  
 Միութեան ատենապետ Պրն. Գրիգոր Շէնեանին:

Մի քանի օր առաջ Երեւանից փոստով ստացայ  
 Արեւելագիտութեան Ինստիտուտի գիտական մա-  
 տենաչարի «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի  
 երկրներ եւ Ժողովուրդներ» խորագրով, 20-րդ  
 յորեքեանական հրատարակութիւնը: Հարկ է նշել,  
 որ խորհրդային կարգերի փլուզումից յետոյ միւս  
 հանրապետութիւնների արեւելագիտական հիմ-  
 նարկներում ընդհատուել էին նման մատենա-

չարերի լոյս ընծայումը: Միայն Հայաստանի Արե-  
 ւելագիտութեան Ինստիտուտն է, որ հայ բարե-  
 ըրարների հովանաւորութեամբ շարունակում է  
 հրատարակել այդ մատենաչարը: Այստեղ տեղին է  
 մատնանշել, որ մատենաչարի վերջին 18-19-20 էրեք  
 հատորները լոյս են տեսել «Արմէն եւ Բերսաբէ  
 Ճերեճեան հիմնադրամի» նախագահ Արսէն  
 Ճերեճեանի հովանաւորութեամբ: (ԱՄՆ):

ՆՈՐ ՕՐ • ԸԱՐԱՊ ԳՈԿՏԵՄԲԵՐ 27, 2001

### ՓՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔԸ

Ալիշան Պայրամեանի «Կիլիզա, Հայկական  
 Բիլիս» գրքի շնորհանդէսի կազմակերպիչներին եւ  
 մասնակցողներին,

Յարգելի տիարք եւ տիկնայք,  
 Ուրախ եմ Ալիշան Պայրամեանի նոր գրքի  
 շնորհանդէսը կազմակերպելու համար: Այս գիրքը  
 եւ նրա հեղինակը միանգամայն արժանի են նման  
 ուշադիր վերաբերմունքի եւ պատուի: Շնորհան-  
 դէսը մի առիթ է, որպէսզի արժանին հատուցուի  
 հեղինակին: Եւ ես չեմ կասկածում, որ հենց  
 այդպէս էլ կը լինի:

Ես հպարտ եմ, որ իմ լաւ բարեկամ Ալիշանի  
 այս երկրորդ գիրքը նոյնպէս հրատարակել ենք  
 մենք՝ Հայաստանի Գիտութիւնների Ազգային  
 Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի  
 մակնիշով, մի Ինստիտուտի, որն իր գիտական  
 ուղղութիւններով եւ բարձր փրոֆեսիոնալիզմով,  
 անմրցելի է համայն հայ իրականութեան մէջ եւ  
 կանգնած է համաշխարհային արեւելագիտական

կենտրոնների կողքին հաւասարի իրաւունքով:

Թող կանգուն մնայ Հայաստանի համար մեծ  
 կարեւորութիւն ունեցող այդ հաստատութիւնը:

Թող երկար ապրեն եւ ստեղծագործեն Լոս  
 Անճելըսում հանգրուանած Արեւելագիտութեան  
 Ինստիտուտի աշխատակիցները, որոնց մենք  
 գնահատում, յիշում եւ կարօտում ենք:

Եւ թող ձեզ բոլորիդ համակի լաւ տրամադրու-  
 թիւն ուրախ եւ բարձր մակարդակով անցկաց-  
 նելու շնորհանդէսը:

Իսկ քեզ եւ քո պատուական ընտանիքին, սիրե-  
 լի Ալիշան, ցանկանում եմ իմ եւ հայ արուես-  
 տագէտների անունից ամենայն բարիք:

Ողջ լեւուք:

Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեան  
 ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան  
 Ինստիտուտի տնօրէն

# ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

## 1. ԸԱԿԱՐԱՅ ՆՈՐ զՐՔԵՐԻ ԸՌՏԱՐԱԿՈՒՄԸ ԹՈՒՔԵԱՅՈՒՄ

Ֆրանսայի Հանրապետության Խորհրդարանը Հայոց Յեղասպանության փաստը ընդունելուց յետոյ, թուրքիան աշխուժացրեց իր անհիմն քարոզչութիւնները անուրանալու ասպարէզում եւ սկսեց ակելի «Գործնական» քայլեր կատարել հայոց Յեղասպանութիւնը ժխտելու ուղղութեամբ:

Առաջին հերթին թուրքիայի խորհրդարանին առընթեր ստեղծուեց գիտական մի խորհուրդ, իսկ Անգարայի, Ստամպուլի եւ իզրուլի մէջ հիմնուեցին հայկական հարցի ուսումնասիրութեան կեդրոններ:

«Հայկական հետազոտութիւններ» այդ հիմնարկներում ընդգրկուեցին թուրք պատմաբաններ, գիտնականներ, պաշտօնաթող դիւանագետներ եւ այլ մասնագէտներ, որոնք զբաղուելու էին իբրեւ թէ հայկական հարցին վերաբերող ճշմարտութիւնը համաշխարհային հանրութեանը իրազեկ դարձնելու համար:

Կարճ ժամանակ անց 2001 թ. Յունիսի վերջերին թուրքիայի խորհրդարանի նախաձեռնութեամբ հրատարակուեց «Հայերը Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանում» խորագրով մի գիրք, անդէրէն լեզուով: Գիրքը պատրաստուած է տեղացի եւ օտար մասնագէտների հեղինակութեամբ: Խմբագիրն է Փրոֆ. Թուրքբայա Աթաօլը: Թուրքիայի խորհրդարանի նախագահ Էօմէր Իզկին Յունիսի 27-ին կանգնակերպունձ գրքի շնորհանդէսի արարողութեան բացման ակցում նշեց.

«Այս գիրքը վկայակոչում է, որ թուրքերի կողմից հայ համայնքի նկատմամբ որեւէ ցեղասպանութիւն գործադրուած չէ»: (Տես «Ալօս» շաբաթաթերթի թիւրքերէն բաժինը, Յունիս 29, 2001, էջ 1): Բնականաբար այս գրքին յաջորդեցին հակահայնպատակադրուածութեամբ եւ ցեղասպանութեան փաստը ժխտելու միտումով գրուած գրքերի մի նոր շարան, որոնք նոյնութեամբ կրկնում էին թուրքական պատմագրութեան 87 տարիների ընթացքում արտայայտած սխալ տեսակէտները:

2001 թ. լոյս տեսած այդպիսի գրքերից մէկն էր նաեւ թուրք պատմաբան Էրտալ Իլթերի «Թուրք-հայկական կապերի մատենագիտութիւն» խորագրով գիրքը: Նշենք, որ այն դեռեւս առաջին անգամ հրատարակուել էր 1997 թ. 300 էջ ծաւալով: Հեղինակը այս վերջինը ընդարձակել է հակահայկական այսպէս ասած նոր նիւթերով եւ մատենագիտութեամբ, դարձնելով այն 421 էջ: Ըստ «Ալօս» շաբաթաթերթի թուրքերէն բաժնում տրուած տեղեկութեան, գիրքը սկսուած է հայերի հասցէին ուղղուած հետեւեալ գրպարտիչ խօսքերով.

«Հայերը 19-րդ եւ 20-րդ դարերում կատարուածի նման, այսօր էլ բազմաբնոյթ քարոզչութիւններով, վարպետօրէն շարունակում են իրենց դերակատարութիւնը աշխարհի հանրային կարծիքը թիրիմացութեան մէջ զցելու ուղղութեամբ, որ իրենք մի խեղճ քրիստոնեայ ժողովուրդ լինելով, ենթարկուել են թուրքական դաժանութիւններին, ճնշումներին եւ ցեղասպանութեան» (Տես,

«Ալօս», Դեկտեմբեր 7, 2001, էջ 8): Հայութեան տեղահանութեան եւ կոտորածների մասին իր նախորդ գրքի առաջաբանում էրտալ Իլթերը արտայայտել էր հետեւեալ չարամիտ տեսակէտը, որը յաճախակի կրկնուել է կրկնում է միւս թուրք պատմաբանների կողմից եւս.

«Օսմանեան կառավարութիւնը հայերի ապստամբութիւնները կանխելու համար հետեւեալ միջոցառումը ձեռնարկեց: Մայիս 27, 1915 թուականին որոշում կայացրեց Անատոլիայի պատերազմական գօտիներում բնակող հայերին ժամանակաւորապէս տեղափոխել Սիրիա եւ Պաղեստին: Այս տեղափոխութեան ընթացքում Օսմանեան կառավարութիւնը մեծ ջանքեր գործադրեց, որպէսզի հայերը որեւէ վնաս չկրեն» (Տես Erdal İter, Türk-Ermeni İlişkileri Bibliyografyasi, Ankara, 1997, S. 14):

Էրտալ Իլթերից հետ չի մնում նաեւ մի այլ թուրք պատմաբան Յուսուֆ Հալաճողլուն, որի գրքի վերնագիրն է «Հայութեան տեղահանութիւնն ու ճշմարտութիւնը (1914-1918):

Յուսուֆ Հալաճողլուն ահա թէ ինչպիսի յայտնագործութիւն է կատարել իր գրքում: Նա գրում է. «Ինչպէս որ պնդում է, եթէ մէկուկէս միլիոն մարդ կոտորուած լինէր, դրանք պէտք է, որ թաղուած լինէին հաւաքական գերեզմանների մէջ: Արդեօք, որտե՞ր են գտնուած այդ հաւաքական գերեզմանները: Թուրքերին վերաբերող հաւաքական գերեզմանները ի յայտ եկել այնպէս, ինչպէս վան քաղաքի հրդեհումն ու ակերակների առկայութիւնը իր ամբողջական տեսքով: Հասցա ինչո՞ւ հայերին վերաբերող ոչ մի հաւաքական գերեզման ի յայտ չի գալիս»: (Տես «Ալօս», Նոյեմբեր 16, 2001, էջ 8):

Հաւանաբար Յուսուֆ Հալաճողլուի այս նենգամիտ տեսակէտը նկատի ունենալով է, որ թուրք լրագրող Սեֆա Քոյունջուն իր հեղինակած «հայերի ցեղասպանութեան կոմողիան եւ Տօն Քիչոզի արկածախնդրութիւնը» գրքում, մատնանշել է, որ «Մենք՝ թուրքերս մէկ հայ անգամ չենք ոչնչացրել, բայց անընդհատ ատուեմ են սպաննել էք, սպաննել էք»: («Ալօս», Յունիս 28, 2001):

Հայերի ցեղասպանութեան ժխտման ուղղութեամբ առաւել «մեծ յայտնագործութիւն» է կատարել «Նոր թուրքիա» խորագրով հանդէսի հրատարակիչ-խմբագիր՝ Կիլիշ Իրենը, որը հայկական հարցին նուիրուած համարում այսպիսի եզրակացութիւն է արել.

«Իրականում մի ցեղասպանութիւն եղել է, բայց այդ ցեղասպանութիւնը կատարուել է հայերի կողմից մահամտական թուրքերի, քրդերի եւ արաբների հանդէպ» («Ալօս», Ապրիլ 27, 2001):

Այսպիսի անհիմն տեղեկութիւններով լոյս են տեսել այլ գրքեր եւս, որոնք յաճախակի օտար լեզուների թարգմանուելով առաքւում են այլ երկրների գիտահետազոտական հիմնարկներ եւ գրադարաններ: Մի խօսքով անցած 87 տարիների ընթացքում թուրքական պատմագրութիւնը շարամտօրէն աղաւաղել է նենգափոխել է իրականութիւնը, եւ այսօր էլ շարունակում է նոյնը կատարուել թէ՛ պատմաբանների եւ թէ՛ պետական գործիչների կողմից: Իսկ ո՞րն է ճշմարտութիւնը:

Ճշմարտութիւնը այն է, որ 20-րդ դարի սկզբին մարդկութեան դէմ ուղղուած այդ ծանրագոյն ողբերգութիւնը ապացուցուած է բազմաթիւ փաստագրական նիւթերով,

այդ թւում՝ հաւաստի վաւերագրերով, հեռագրերով, նամակներով, բարձրաստիճան դիւանագէտների գեկոյցներով, ակնատեսների վկայութիւններով, վերապրողների յուշագրութիւններով, անկողմնակալ պատմաբանների ուսումնասիրութիւններով, պետական բարձրաստիճան գործիչների հաստատումներով, նոյնիսկ 1919 թ. թուրքական ռազմական արտակարգ ատենանի մեղադրական եզրակացութիւններով եւ դատավճիռներով:

Երիտթուրքերի այս դատավարութիւնների ընթացքում բերուած ծածկագիր հեռագրերը եւ հրահանգները ապացուցում են, որ արեւմտահայութեան բռնի տեղահանութիւնը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ տեղի է ունեցել բացարձակապէս «իթթիհատ վէ թերաքքի» (Միուլթիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան կեդրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ եւ վճռուել է նրա գաղտնի նիստերից մէկում ձայների մեծամասնութեամբ: Փաստերը վկայում են, որ հայութիւնը տեղահանուեց այնպիսի շրջաններից, դիւղերից եւ քաղաքներից, որոնք ճակատամերձ բոսորց շատ հեռու էին գտնուում: Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը ի սպառ բնաջնջելու ճանապարհը: Եւ պատերազմը ամենապատեհ առիթը հանդիսացաւ գործադրելու իրենց այդ դիւալին ծրագիրը:

«Միուլթիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտօնեաների դատավարու-

թեան մեղադրական եզրակացութեան մէջ մատնանշուած է, որ «ընդունուած յատուկ օրէնքի համաձայն, այլ վայրեր տարագրուող հայերի քարանձանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական ջանքադրժ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել է» (Տես Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) No. 3586 Կ. Պոլսում հրատարակուող թուրքական պաշտօնական թերթ, օսմաներէն (արաբատա թուրքերէն)):

Վերելում խօսք եղաւ հաւաքական գերեզմանների մասին: Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ «Միուլթիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամների դատավարութեան առաջին մեղադրական եզրակացութիւնից բերուած հետեւեալ հատուածը ակներեւ ցոյց է տալիս, որ դրանք ոչ թէ թուրքերի, այլ հայերի հաւաքական գերեզմաններ են եղել «Քաստամոնուլի նահանգի մահմետականները շրջակայ վայրերում տեղի ունեցող դէպքերին վերաբերուել են ատելութեամբ: Նոյնիսկ մի օր, մի խումբ մեծամեծներ եւ աւագանիներ իրենց միւլթիլի (կրօնապետ) հետ դիմել են քաղաքազլուխ Ռեշիտ փաշային հետեւեալ խօսքերով. «Շրջակայ վիլայեթներին հայերին իրենց երեխաներով միասին մորթուող անատունների նման քշում են դէպի լեռները եւ այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր նահանգում այդպիսի բան կատարուի: Մենք վախենում ենք Աստու ցասումից: Պետութիւնը ոչ թէ դաժանութեամբ է կառավարուում, այլ բանականութեամբ: Ոնդրում ենք, որպէսզի մեր

վիլայեթում այսպիսի կոտորած տեղի չունենայ»: (Տես Takvim-i Vekai, 27 Nisan, 1335 (1919) No. 3540): Ահա մէկ փաստ եւս այս նոյն մեղադրական եզրակացութիւնից.

«Լիովին ապացուցուած է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր եւ Ճեմալ Պէյերի անմիջական հրամաններով եւ գիտութեամբ (գործ 11): 1331 (1915) Յուլիս 21-ի թուագրութիւնը կրող Թալեաթ Պէյի ծածկագիր հեռագիրը, որն ուղղուած է Տիարպէքիլի, Ուարբերդի, Ուրֆայի եւ Տէր Զօրի վալիներին եւ մութասարրիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքեալ գոյքը վառելու եւ ընդհանրապէս դիակները ձորերը, գետերը եւ լճերը չձգելու մասին:

Չորրորդ բանակի հրամանատար Ճեմալ Պէյի 1331 (1915) Յուլիսի 1-ի թուագրութեամբ Տիարպէքիլի վալիին ուղղուած մի այլ հեռագրից ենթադրուում է, որ եփրատ գետի հարաւային մասում, Չրի երեսին յայտնուող դիակները կարող են ապստամբական շարժման (խօսքը վերաբերում է հայերի ինքնապաշտպանական կռիւներին, Ա. Փ.) ընթացքում սպանուած հայեր լինեն, ուստի պահանջուում է, որ դրանք հաւաքուեն եւ թաղուեն իրենց բնակավայրերում (գործ 11, փաստաթուղթ թիւ 3):

Ի պատասխան Ճեմալ Պէյին, 1331 (1915) Յուլիս 3-ի թուագրութեամբ «անձամբ» նշումը կրող հեռագրում ասուած է. «Եփրատը անընդուն չունի մեր վիլայեթի հետ, հաւանական է, որ այդ դիակները գալիս են էրզրումի եւ Ուարբերդի կողմերից: Այստեղ, ապա-

տամբութեան ընթացքում սպանուածների դիակները գցուած են ամալի վայրերում գտնուող խոր քարայրները կամ էլ այլուում են: Թաղելը բացառուած է»:

Մի ցաւալի իրականութիւն էլ կայ, հայերի հաւաքական գերեզման չունենալու մասին: Այն առնչուած է ծովափնեայ շրջանների հայերին ծովում խեղդամահ անելու դաժան արարքի հետ:

Տրապիզոնի նահանգի եւ Սամսոնի գաւառի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի դատավճռում նշուած է, որ «Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին իբրեւ թէ պաշտպանելու պատրուակով տեղաւորել են հիւանդանոցներում եւ տէրվիշների տներում: Այնուհետեւ, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նաև երեք եւ տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են Չուրը եւ խեղդելով ոչնչացրել բոլորին: (Տես Takvim-i Vekai, 27 Mayıs, 1335 (1919) No. 3616) :

Այնպէս որ 1915-1923 թ. հայերի ցեղասպանութեան պատմական ճշմարտութիւնը հաստատող այս եւ նման միւս բոլոր փաստերը վճռաւորէն հերքում են ժամանակակից թուրք պատմաբաններին եւ պետական գործիչներին, որոնք նոյնիսկ անտեսելով ժամանակի թուրքական փաստերը աշխատում են քողարկել եւ խեղաթիւրել Արեւմտեան Հաստատում եւ առհասարակ ամբողջ Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանութիւնը:

2. «ԳԵՐԵՉՄԱՆԸ ՊԵՏԷ Է ԲԵՐՈՒԻ ԹՈՒՐԵԱ»

Թրքական Aydınlık (լուսաւորութիւն ) հանդէսի 2001 թ. Նոյեմբեր 25-ի համարում, Ստանպուլի համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախօս՝ Փրոֆ. Արսլան Թերզիօղլուն մի յօդուած էր հրատարակել վերոյիշեալ խորագրով, ուր ձգտելով արդարացնել երիթուրքական գործիչ Դոկտ. Պէհաէտտին Շաքիրին, առաջարկում էր նրա աճիւնը Պեր լինից տեղափոխել Թուրքիա: Նախքան այս յօդուածի հրատարակումը, իր այս տեսակէտը յայտնել էր նաեւ Ազգային հեռուստատեսութեանը տուած մի հարդրումով:

Ստորեւ թրքերէնից թարգմանաբար բերում ենք Փրոֆ. Արսլան Թերզիօղլուի առաջարկութիւնից մի հատուած:

«Թեշքիլիսթ-ը մահաւանդ» (յատուկ կազմակերպութեան) եւ Պէհաէտտին Շաքիրի (հայերի) տեղահանութեան ընթացքում կատարած կոտորածների մասին ոչ մի փաստագրութիւն չունի...: ...Ստամպուլում կազմուած ռազմական արտակարգ ատեսանը դատաքննութիւն սկսեց «Իթթիհատ վէ թերաքքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան ղեկավարների նկատմամբ: Այդ դատաքննութիւնների ընթացքում Պէհաէտտին Շաքիրը մեղադրուած էր «Թեշքիլիսթ-ը մահաւանդ»-ի գործունէութեան հետ կապ ունենալու պատճառով, սակայն իսասակցութիւն կա, որ այդ մասին փաստեր գոյութիւն չունեն: Մինչդեռ 1922 թ. Ապրիլի 17-ին նա սպանուեց հայերի կողմից Պերլիսում: Գերեզմանը դեռեւս Պերլիսում է: Մեր պատմութիւնը կերտող

այս անձնաւորութեան գերեզմանը անհրաժեշտ է տեղափոխել Թուրքիա»: (Տես «Ալլոս» շաբաթաթերթի թրքերէն բաժինը: Նոյեմբեր 30, 2001 թ. էջ 3):

Հենց սկզբից նշենք, որ այստեղ իրականութիւնը դիտումնաւոր կերպով աղաւաղուած է եւ խեղաթիւրուած: Թրքական եւ օտար փաստաթղթերում եւ ականատեսների վկայութիւններում կան բազմաթիւ սպառնալիցներ, որ Պէհաէտտին Շաքիրը հայերի ցեղասպանութեան գլխաւոր յանցագործներից մէկն է:

Ակնյայտ երեւում է, որ Փրոֆ. Արսլան Թերզիօղլուն տեղեակ չէ 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած ռազմական արտակարգ Ատեանի արձանագրութիւններին:

1915 թ. թուրքական երրորդ բանակի հրամանատար Վեհիպ փաշան, Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատեանին տուած իր վկայութեան մէջ նշում է, որ «հայերի նկատմամբ կատարուած վայրագութիւններն ու կոտորածները, նրանց ունեցուածքի թալանն ու կողոպուտը որոշուած էր «Միութիւն եւ առաջադիմութիւն » կուսակցութեան կետրոնական կոմիտէի կողմից: Եւ այդ կոտորածների, ինչպէս նաեւ բոլոր զազանութիւնների իրագործման համար, Պէհաէտտին Շաքիր Պէյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է յատուկ մարդասպաններ եւ անձամբ ղեկավարել նրանց»: (Տես Takvim-i Vekai, 27 Nisan, 1335 (1919) No. 3540):

1919 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի դատավարութեան ընթացքում Պէհաէտտին Շաքիրը հեռակալ կարգով մեղադրուեց արեւմտահայութեան տեղահան

ութեան եւ կոտորածների մտայնացման ու հիմնական կազմակերպիչներից մէկը լինելու ծանր յանցանքով:

Այս մասին իարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող 1920 թ. Յունուարի 13-ի դատավճռում նշուած է. «կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամ մեղադրեալ Տօքթ. Պէհաէտտին Շաքիր Պէյը, որպէս «յատուկ կազմակերպութեան» նախագահ, Ստամպուլից դուրս գալով սկսել է շրջապայել Տրապիզոնի, էրզրումի եւ այլ վիլայէթներում: Միեւնոյն ժամանակ բանտերից դուրս բերուած ոճրագործներից եւ այլ յանցագործների կազմուած հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում կոտորել է տեղահանուած հայերին եւ նրանց ունեցուածքը ենթարկել

կողոպուտի»: (Տես Takvim-i Vekai, 13 Ocak, 1336 (1920) No. 3771:

Այնուհետեւ դատավճռում մէկ առ մէկ բերում են նրա կողմից առաքուած ծածկագիր զաղտնի հրահանգներն ու հեռագրերը հայութեան բնաջնջման մասին:

Պէհաէտտին Շաքիրը իր կատարած ծանր յանցագործութեան համար հեռակալ կարգով դատապարտուեց մահուան, վերոյիշեալ իարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող դատավճռով:

Պէհաէտտին Շաքիրը եւ Տրապիզոնի նահանգապետ Ճեմալ Ազմին ահաբեկուեցին 1922 թ. Ապրիլի 17-ին Պերլիսում ժողովրդական վրիժառուներ Արամ Երկանեանի եւ Արշաւիր Շիրակեանի կողմից:

Ահա այս է ճշմարտութիւնը եւ այն կոծկել հնարաւոր չէ:



ՍԱՍԻՍ ԷՋ 18 - ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 27, 2002

ՆՈՐ ՕՐ • ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 20, 2002

Դեռևս 1994 թվականին «Մասիս» շաբաթաթերթի Ապրիլ 30-ի համարում կարդալով Տիրան Քէչիշեանի «Երբեք Չխամրող Ճարեթիւ» վերնագրով յօդուածը, բովանդակութեան մէջ նկատել էի սխալ եւ անհիմն դատողութիւններ 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի կառավարութեան ղեկավարների եւ «Իթիթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների դատավարութեան վերաբերեալ Ուստի, անմիջապէս որոշեցի խմբագրութեանը յայտնել ճշմարտութիւնը այդ առթիւ, որը ի պատիւ այդ ժամանակուայ խմբագիր Դոկտ. Յարութիւն Սաղրեանի, առանց յապաղելու հրատարակեց «Մասիս» շաբաթաթերթում:

Կարծում էի, որ Տիրան Քէչիշեանը, մեր ժողովրդի շահերից ելնելով հաշուի կառնի մասնագէտի նկատառումները: Բայց աւաղ սխալուել էի:

Ի միջի այլոց նշեմ, որ իր ժամանակին յիշեալ դատավարութեան նիւթերը, որպէս միակ օսմանագէտ-պատմաբանի ինձ էր բաժին ընկել արաբատառ թուրքերէնից առաջին անգամ թարգմանելու, ծանօթագրելու եւ առաջաբան գրելու:

Եւ այդպէս գիրքը հրատարակուեց Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 1988 թ., 75,000 տպաքականով: Գիրքը անմիջապէս սպառուեց, միեւնոյն ժամանակ մեծ անհանգստութիւն պատճառելով Թուրքիայի կառավարող շրջաններին:

Բնականաբար գիրքը թարգմանուեց եւ հրատարակուեց նաեւ անգլերէնով, իրաւաբան Վարդգէս Եղիայեանի նախաձեռնութեամբ Լոս Անճելըսում: Այնուհետեւ այն թարգմանուեց եւ հրատարակուեց արաբերէն լեզուով Դոկտ. Ռոբերտ Ճեպեճեանի նախաձեռնութեամբ 1992 թ. Հալէպում:

Հակառակ մասնագէտների տուած դրական գնահատականներին Տիրան Քէչիշեանը միակն էր, որ Մեծ Եղեռնին նուիրուած իր յօդուածներում ամէն կերպ ձգտում էր նսեմացնել եւ թերազնահատել երիտթրքական յանցագործների նկատմամբ կատարուած այդ դատավարութիւնը, այն պիտակելով որպէս «բեմականացուած դատավարութիւն» (տե՛ս «Մասիս» շաբաթաթերթը, Ապրիլ 26, 1997 թ. էջ 7):

Այս տարուայ «Մասիս» շաբաթաթերթի Ապրիլ 27-ի համարում տպագրուեց «Ճշմարտութիւնը Հայոց Յեղասպանութեան մասին» խորագիրը կրող իմ յօդուածը, ուր Կ. Պոլսի դատավարութեան թրքական փաստաթղթերով ես յօդս էի ցնդեցնում Հայոց Յեղասպանութեան հարցում արդի թուրք պատմաբանների հակահայ կեղծիքները (էջ 9): Չարմանալին այն է, որ «Մասիս»ի այդ նոյն համարում (էջ 18) Տիրան Քէչիշեանը իր «Եւ Ապրիլ 24» վերնագրով յօդուածում կրկին թերազնահատելով այդ դատավարութիւնը, որակել էր այն որպէս «Փարս»: (Արարատ Դարիբեանի ռուսերէն-հայերէն բառարանում այս բառը նշանակում է անամօթութիւն, խեղդատակութիւն, կատակերգութիւն: Տե՛ս, Երեւան, 1968, էջ 1315):

Անձամբ ես թէ իմ գրքում եւ թէ յետագայում Հայոց Յեղասպանութեան վերաբերող բոլոր յօդուածներում բազմիցս փաստել եմ, որ 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած Երիտթուրքերի կուսակցութեան եւ կառավարութեան պարագլուխների դատավարութեան արձանագրութիւններում բերուած թրքական փաստաթղթերը, այդ թւում ծածկագիր հեռագրերը, նամակները, ականատեսի վկայութիւնները լիովին հաստատում են, որ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, այլ եղել են կանխամտածուած եւ իրականացուել են՝ բացարձակապէս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յատուկ կենտրոնի հրահանգներով ու զաղտնի հրամաններով:

Իմ մասնագիտութեան բերումով ես միշտ ներկայ եմ եղել հանրաճանաչ ցեղասպանագէտ Փրոֆ.

Վահագն Տատրեանի Լոս Անճելըսում կազմակերպած դասախօսութիւններին, ուր ամէն անգամ նա եւս մեծ կարեւորութիւն է տուել 1919-1920 թթ. Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատեանի արձանագրութիւնների մէջ բերուած փաստերին եւ վկայութիւններին:

Այս տարի Յունուար 24-ին Փրոֆ. Վահագն Տատրեանը Լոնտոնում «Հայոց Յեղասպանութեան ճանաչումի յանձնախմբի» կազմակերպած պատմագիտական սեմինարում, իր դասախօսութեան ընթացքում կրկին արժեքաւորել է Կ. Պոլսի 1919-1920 թթ. թրջական ռազմական արտակարգ ատեանի արձանագրութիւններում բերուած փաստերը հետեւեալ խօսքերով.

«Անդրադառնալով թրջական պատերազմական ատեանին գործընթացին, դասախօսը ներկաներուն ուշադրութեան յանձնեց հետեւեալ կէտերը. Վկաներուն մեծ մասը ոչ թէ վերապրող հայ զոհերն էին, այլ մահմետական թուրք քաղաքացիներ, պետական աւազանիին բազմաթիւ անդամներ, նահանգային բարձրաստիճան կառավարիչներ, իթթի-հատ կուսակցութեան շատ մը ղեկավար տարրեր, զանազան աստիճանի զինուորական հրամանատարներ եւ սպաներ, ինչպէս Գ. Բանակի ընդհանուր համամատար Զօր. Մեհմէտ Վէհիպ փաշան: Բայց հակառակ ասոր՝ դատարանին դատաւճիռները մեծ մասամբ հիմնուած էին ոչ թէ այս վկայութիւններուն վրայ, այլ՝ նախաքննական հետապնդումներու ընթացքին ձեռք ձգուած Օսմանեան պաշտօնական վաւերագիրներու վրայ, ճիշդ այնպէս, ինչպէս որ պատահեցաւ Նիւրնպէրկի մէջ: Եւ որպէսզի այդ վաւերագիրներուն հետ կապուած փաստարկումները անբասիր ինչպէս նաեւ անվիճելի ըլլան, դատախազութիւնը պահանջած էր որ դատարանին ներկայացուելիք մէն մի փաստաթուղթ Օսմանեան կայսրութեան ներքին գործոց նախարարութեան պատկան մասնագէտներ քննարկեն զանոնք եւ ստուգելէ ետք ատոնց վաւերականութիւնը, պաշտօնական կնիքով մը հաստատեն այդ պարագան»:

«Նոր Կեանք» շաբաթաթերթ, Մայիս 2, 2002 թ. էջ 9-ը: Տե՛ս Կարպիս Եսայեանի «Փրոֆ. Վահագն Տատրեանի ելոյթները Լոնտոնի մէջ» խորագրով գրութիւնը):

Իսկ վերջերս Ապրիլի 19-ին Փասատինայի Հայ Կեդրոնի մէջ կազմակերպուած Հայոց Յեղասպանութեան 87-ամեակին նուիրուած դասախօսութեան ընթացքին կրկին անդրադառնալով այդ մասին նա նշեց.

«20-րդ դարուն սկիզբը տեղի ունեցած Յեղասպանութեան պրպտումը վիթխարի գործ մըն է ու ես կեդրոնացած եմ թրջական պատերազմական ատեանին, Օսմանեան խորհրդարանի մէջ եղած վիճաբանութիւններուն եւ երեսփոխանական ժողովի արխիւներուն վրայ:

«Այս բոլոր տուեալները ցոյց կու տան, թէ Հայկական Յեղասպանութիւնը կանխամտածուած ոճիւր մըն էր, տեղահանութեան գլխաւոր դրդապատճառը բնաջնջել էր»:

(Տե՛ս «Ասպարէզ» օրաթերթ, Ապրիլ 26, 2002 թ. էջ 6-7):

Կարծում եմ, որ այսքանն էլ բաւական է, իհարկէ; հասկացողի համար:

Եւ այսպէս Տիրան Քէշիշեանը վերոյիշեալ Ռազմական Արտակարգ Ատեանի գործունէութիւնը «բեմականացուած» եւ «Փարս» բառերով թերագնահատելուց յետոյ, իր այդ նոյն յօդուածում գրում է հետեւեալը.

«Սակայն զարհուրելին այն է, որ դատական որոշման մէջ հայ ժողովրդի նկատմամբ կատարուած ոճրագործութեանը չի տրուել անհրաժեշտ քաղաքական հիմնաւորումը, այն չի որակուել որպէս մարդկութեան դէմ իրագործուած յանցագործութիւն, առաւել եւս, որ իրենց քաղաքացիները հանդիսացող եւ անմեղ զոհեր դարձած միլիոնաւոր հայերի կորստի վերաբերեալ կարեկացանքի, ափսոսանքի կամ վշտակցութեան եւ ոչ մի արտայայտութիւն կամ յայտարարութիւն չի արձանագրուած ոչ դատական ատեանի, ոչ էլ յետագայում կառավարութեան կողմից»:

(Տե՛ս «Մասիս» շաբաթաթերթը, Ապրիլ 27, 2002 թ. էջ 7):

Հենց սկզբից նշենք, որ «Զարհուրելի» բառը բոլորովին տեղին չէ այստեղ: Նախ Տիրան Քէշիշեանը պէտք է հասկանար, որ սա քաղաքացիական դատարան չէր, այլ «Ռազմական արտակարգ Ատեան» ստեղծուած պատերազմի աւարտից յետոյ, որն իր բնոյթով եւ կառուցուածքով բոլորովին

տարբերում էր սովորական դատարաններից: Բացի այդ, դատավարութիւնն ընթանում էր այնպիսի ժամանակ եւ մթնոլորտում, երբ նոր էր աւարտուել Համալիարհային Պատերազմը, եւ երկրում տիրում էր խառնաշփոթ քաոսային վիճակ:

Այո՛, Հայոց Մեծ Եղեռնի գլխաւոր յանցագործները հասցրել էին փախուստի դիմել, այնուհանդերձ նրանց համախոհները, հետեւորդները դեռեւս վխտում էին թուրքիայում: Այդ օրերին իթթիհատականները զանազան նենգ որոգայթներ էն լարում խանգարելու համար դատավարութեան բնականոն ընթացքը: Յատկապէս նրանք ջանում էին ազդել ռազմական Ատեանի անդամների վրայ թեթեւացնելու համար մեղադրեալների յանցանքը: Կ. Պոլսում լոյս էին տեսնում կեղծ հրապարակումներ, որոնց հեղինակները փորձում էին ապացուցել, որ հայերն են իբրեւ բռնութիւն գործադրել թուրքերի նկատմամբ: (Այս բոլորը մանրամասն նշուած է իմ գրքում):

Ահա այսպիսի բարդ իրադրութիւնից ելնելով է, որ Ռազմական Արտակարգ Ատեանի նախագահ՝ զօրավար Մուսթաֆա Նազըմ փաշան, 1919 թ. Ապրիլի 28-ի առաջին նիստում, մեղադրական եզրակացութիւնը ընթերցուելուց առաջ յայտարարեց.

«Փաստաբան էֆէնտիններ, ռազմական ատեաններում, աւելի ճիշդ՝ ռազմական արտակարգ ատեաններում մեղադրեալների պաշտպանութիւնը դիւրացնելու կամ անհրաժեշտութեան դէպքում նրանց օժանդակելու համար օրէնքը երբեւէ չի ստիպել եւ ընդհանրապէս անհրաժեշտ էլ չի եղել դատավարութեան ընթացքում դատապաշտպանների ներկայութիւնը: Այնպէս որ, այս դատավարութեան բացարձակ արդար եւ անշահախնդիր ընթացքը վկայակոչելու համար ռազմական ատեանը թոյլատրեց, որ այն ընթանայ դռնբաց: Այնուհանդերձ, ստիպուած ենք ձեզ զգուշացնելու, որ այս թոյլտուութիւնը չչարաշահէք եւ մինչեւ հարցաքննութեան աւարտը հակառակ օրէնքի որեւէ միջամտութիւն չկատարէք եւ բացարձակ լուռ մնալով՝ ունկնդրէք»:

(Տես Աւետիս Փափազեան, Հայերի Յեղասպանութիւնը ըստ Երիտթուրքերի դատավարութեան

փաստաթղթերի, Երեւան, 1989, էջ 36):

Վերոյիշեալ եւ այլ փաստերը ցոյց են տալիս, որ անտեղի է նսեմացնել եւ թերազնահատել այս արդար դատավարութիւնը, քանի որ պատերազմի աւարտից յետոյ Երիտթուրքերի պարագլուխների դատավարութիւնը իսկապէս որ խոշոր երեւոյթ էր արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած հալածանքներին ու Յեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացայայտելու տեսանկիւնից:

Այնպէս որ Տիրան Քէշիշեանի ակնարկած կարեկցանքն էլ, ափսոսանքն էլ, վշտակցութիւնն էլ առկայ են դատավարութեան փաստաթղթերում եւ դեռ շատ աւելիով...:

«Քաղաքական հիմնաւորումը», աւելի ճիշդ՝ Հայոց Մեծ Եղեռնի ճանաչումն ու ընդունումը պիտի կատարուէր թուրքիայի յաջորդ կառավարութիւնների եւ խորհրդարանների կողմից Ռազմական Արտակարգ Ատեանի արձանագրութիւններում բերուած անվիճելի փաստերի հիման վրայ, որը ցաւօք սրտի ուրացուած եւ ձգձգուած է մինչեւ այսօր:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Դժբախտաբար Տիրան Քէշիշեանի մատնանշած «Զարհուրելի» որակումով եղել են, կան եւ շարունակուած են կատարուել անարդարացի տգեղ երեւոյթներ: Այսպէս.

1. Զարհուրելին այն է, որ ահա 87 տարի թուրքիայում թուրք ժողովրդից զաղտնի են պահուած Կ. Պոլսի վերոյիշեալ դատավարութեան արձանագրութիւնները, որովհետեւ այնտեղ բերուած թրքական փաստաթղթերը լիովին հաստատում են, որ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները եղել են հայ ժողովրդի կանխամտածուած բնաջնջում:

2. Զարհուրելին այն է, որ Տիրան Քէշիշեանը առանց հասկանալու Կ. Պոլսի դատավարութեան իմաստն ու նշանակութիւնը, անընդհատ նսեմացնում եւ թերազնահատում է այն: Այդպիսով ջուր է լեցնում թրքական կեղծիքների ջրաղացին:

Մինչդեռ թրքական փաստաթղթերի կարեւորութիւնը նրանում է, որ դրանք իրենցն են եւ լիովին աւաստի են ու անվիճելի: Այս կապակցութեամբ արժէ յիշել նաեւ Գերմանիայի Ֆրանկֆուրդ քաղաքում գործող «ընդդէմ Յեղասպանութեան կազմակերպութեան» նախագահ՝ Թուրք մտաւորական Ալի Էրթեմի նամակից հետեւեալ տողերը.

«Ափսոս, որ Թուրք լինելով հանդերձ, շատ ուշ հասկացայ իրականութիւնը: «Իթիհատ վէ թերաք»-ից մինչեւ այսօր, թրքական բոլոր կառավարութիւնները խեղաթիւրեցին պատմական ճշմարտութիւնը, սուտ խօսեցին: Թուրքիայի Հանրապետութեան ղեկավարները երբեք չցանկացան եւ հիմա էլ չեն ցանկանում, որ իրենց հայրենակիցները իմանան ճշմարտութիւնը»: (Տէս Աւետիս Փափազեան, Հայերի Յեղասպանութիւնը Թուրք քաղաքական գործիչների յուշագրութիւններում, Երեւան, 2001, էջ 138):

3. Անընդհատ խօսւում է Թուրքիայի արիւնների բացման մասին, որոնց բոլոր նիւթերը մինչեւ 1928 թուականը շարադրուած են օսմաներէնով (արաբատառ թրքերէնով): Զարհուրելին այն է, որ օսմանագէտների մի խումբ ստեղծելու իմ ահագանգներին ոչ մի կազմակերպութիւն չարձագանգեց: Ո՞վ է կարդալու այդ փաստաթղթերը ինձնից յետոյ:

4. Տիրան Քէշիշեանի վերոյիշեալ յօդուածի բովանդակութիւնից պարզ երեւում է, որ օգտուել է իմ աշխատութիւնից, բայց ոչ մի յղում չի կատարել այդ մասին: Գիտական բարեխղճութիւնը պահանջում է նշել օգտագործուած գրքի հեղինակի անունը, վերնագիրը, հրատարակութեան վայրը, տարեթիւր եւ էջը:

Ասածս վերաբերում է նաեւ իր յօդուածի վերջում բերուած Անատոլ Ֆրանսի արտասանած ճառին: Այդ ճառի թարգմանութիւնը մանրամասն ծանօթագրութիւններով ընդգրկուած է Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագրով փաստաթղթերի ժողովածուում (Երեւան, 1991, էջ 527, 732), ուր

ճշգրիտ նշում է, որ այն արտասանուել է Հայաստանին նուիրուած երեկոյին, որը տեղի է ունեցել 1916 թ. Ապրիլի 9-ին, Փարիզի Սորպոնի համալսարանի մեծ դահլիճում:

Մի կարեւոր դիտողութիւն եւս Տիրան Քէշիշեանի այս վերջին յօդուածի մասին: Բնականաբար Անաթոլ Ֆրանսի այդ ճառը կարեւոր է եւ միշտ արդիական: Այդ մասին ես ոչ մի առարկութիւն չունեմ:

1994 թ. երբ լրացաւ Անաթոլ Ֆրանսի ծննդեան 150 յոբելեանական տարեդարձը, ես մի յօդուած էի գրել «Երախտագիտութեան խօսք Անաթոլ Ֆրանսի Յիշատակին» խորագրով, ուր մանրամասն անդրադառնալով նրա կենսագրութեան, կեանքին, գրական եւ մարդասիրական գործունէութեանը, վերջում բերել էի վերոյիշեալ ճառը (տէս «Ասպարէզ» օրաթերթ, Յունիս 29, 1994 թ.):

Տարօրինակը այն է, որ Տիրան Քէշիշեանը փոխանակ մանրամասն խօսի Անաթոլ Ֆրանսի մասին, այսպէս ասած իր նախաբանում ակնարկութիւններ է անում Կ. Պոլսի դատավարութեան շուրջ եւ միանգամից բերում նրա ճառը:

Այնպէս որ Տիրան Քէշիշեանի յօդուածում նկատուում է նիւթի բովանդակութեան ներդաշնակութեան կապի բացակայութիւնը:



# Մեծ եղեռնի 87-րդ տարելիցը

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԱՊՐԻԼ 2001 - ԱՊՐԻԼ 2002

Լրացաւ Հայոց Մեծ Եղեռնի 87-րդ տարելիցը: 87 տարի առաջ տեղի ունեցաւ 20-րդ դարի առաջին ահաւոր ցեղասպանութիւնը արեւմտահայութեան նկատմամբ:

Մեծ Եղեռնի փաստը այսօր էլ բուն թափով շարունակուած է մնալ համաշխարհային պատմագրութեան, միջազգային հասարակայնութեան եւ առանձին պետութիւնների ուշադրութեան կենտրոնում:

2001 թուականը եւս բնորոշուեց տարբեր պետութիւնների խորհրդարանների կողմից հայերի ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման փաստերով:

Անցեալ տարուայ կարեւոր իրադարձութիւններից էր այն, որ Ֆրանսիայի խորհրդարանը, Յունուար 18-ին, միաձայն ճանաչեց եւ օրհնքի ուժ տուեց 2000 թ. Նոյեմբեր 18-ին ընդունուած հայոց ցեղասպանութեան վերաբերող բանաձեւին: Այդպիսով, Ֆրանսիան դարձաւ առաջին երկիրը, որ ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ օրհնք ընդունեց:

Իսկ այս տարուան սկզբներին, Եւրոխորհրդարանը կրկին անգամ վերահաստատեց թուրքիայի կողմից հայոց ցեղասպանութեան ճանաչման պահանջը, ամրապնդելով Հայոց ցեղասպանութեան վերաբերող 1987 թ. Յունիս 18-ի ընդունուած որոշումը:

Անցած մէկ տարուայ ընթացքում, մի շարք երկրների ղեկավարներ պաշտօնական այցով երեւանում գտնուելիս, իրենց գլխաւորած պատուիրակութեամբ այցելեցին Միծեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրը եւ ծաղկեպսակներ դնելով յարգեցին 1915 թ. անմեղ զոհերի յիշատակը: Հակառակ թուրքական կառավարութեան եւ պատմագրութեան ուրացում-

ներին, ցեղասպանութեան թանգարանի յուշամատենում կատարած իրենց գրութիւններով, մէկ անգամ եւս հաստատեցին Հայոց ցեղասպանութեան փաստը:

Բնականաբար խիստ կարեւոր իրադարձութիւն էր նաեւ Հւումի Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի այցելութիւնը Միծեռնակաբերդի Մեծ Եղեռնի յուշահամալիրը: Նորին Սրբութիւնը կարմիր վարդ դրեց անմար կրակի մօտ, աղօթք չդէց առ Աստուած՝ անմեղ զոհերի հոգիների հանդարտութեան համար:

Այս օրերին եւս, լինի Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքի հայ գաղթօճախներում, տեղի են ունենում Հայոց ցեղասպանութեան նուիրուած ողբելոյնի հանդիսութիւններ, որոնք կրկին անգամ յայտարարում են ի լուր աշխարհի, որ հայ ժողովուրդը չի մոռացել իր դատը եւ շարունակելու է պայքարը մինչեւ որ համայն աշխարհը եւ թուրքիան ընդունեն եւ ճանաչեն ցեղասպանութեան փաստը:

Ստորեւ բերուած ժամանակագրութիւնը որոշակի գաղափար եւ պատկերացում է տալիս մէկ տարուայ ընթացքում հայերի ցեղասպանութեան շուրջ ծաւալուած աշխատանքների, առանձին իրադարձութիւնների եւ ձեռնարկների մասին:

#### 2001 Թ. ԱՊՐԻԼ 1

Գեմոկրատական կուսակցութեան Գալիֆորնիայի կառույցը, իր տարեկան համագումարի ընթացքում, որդեգրեց հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու մի բանաձեւ, պահանջելով ԱՄՆ-ի կողմից նոյնպէս ճանաչել այն:

#### 2001 Թ. ԱՊՐԻԼ 6

Անթիլիասի մայրավանքում, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան նուիրուած համագումար, Հարաւային Աֆրիկայի Անգլիքան եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների մասնակցութեամբ:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 12

ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան աւելի քան 100 գոնկրէսականներ, յատուկ նամակով դիմեցին նախագահ Ճորճ Պուշին, որպէսզի յարգէ հայերի ցեղասպանութիւնը իբրեւ այդպիսին բնորոշելու իր նախընտրական խոստումը:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 17

Քալիֆորնիոյ մայրաքաղաք Սաքրամենթոյում նահանգապետ Կրէյ Դեյվիսը ստորագրեց մի հռչակագիր, ուր Ապրիլ 24-ը Քալիֆորնիայում յայտարարուում էր հայոց ցեղասպանութեան ոգեկոչման օր:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 20

ԱՄՆ-ի Միչիկան նահանգի խորհրդարանը Ապրիլ 24-ը հռչակեց Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման օր:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 22

Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակին նուիրուած հայ երիտասարդաց Դաշնակցութեան կողմից կազմակերպուեց հսկում-քայլարշաւ, դէպի Լոս Անջելեսի թուրքական հիւպատոսարանը, ուր տեղի ունեցաւ հաւաք եւ մոմավառութիւն:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 24

Երեւանում, մօտաւորապէս կէս միլիոն հայորդիներ, այցելելով Միծեռնակաբերդ, յարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակին:

— Հոլիվուդի Լիթըլ Արմենիա (Փոքր Հայաստան) թաղամասում, տեղի ունեցաւ 20 հազար հայորդիների քայլարշաւը, նուիրուած՝ հայոց Մեծ Եղեռնի 86-րդ տարելիցին: Այն կազմակերպել էր «Միացեալ Հայ Ուսանողներ»ի Միութիւնը: Բոլորն էլ այդ օրը համատարած կրում էին եղեռնը խորհրդանշող սեւ շապիկներ: Քայլարշաւը կազմակերպուած էր բարձր մակարդակով,

համերաշխ միջնորդուում, արժանանալով օտարների դրական գնահատանքին: Այն յուզումնալից զարմանք պատճառեց շատերին:

— ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան նիստի ընթացքում, երկու կուսակցութիւնների գոնկրէսականներ կոչ ուղղեցին Գոնկրէսին, որպէսզի ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը:

— Ուրուկուայի խորհրդարանը պաշտօնապէս ոգեկոչեց Հայոց ցեղասպանութեան 86-րդ տարելիցը:

— Հոլանդայի Ասսեն քաղաքի Պոսթան դերեզմանատանը բացուեց Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակին նուիրուած խաչքար յուշարձանը:

— Միջազգային հարցերի կալեսեան (Wales, Անգլիա) կենտրոնի խաղաղութեան տաճարում, պաշտօնապէս ոգեկոչուեց Հայոց ցեղասպանութիւնը: Կալեսի Մշակոյթի նախարար Ճենի Ռանտըրընը դատապարտեց թուրքական ուրացումը եւ քննադատեց Լոնտոնի իշխանութիւններին, որ ցարդ չեն ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը:

— Գերմանիայի թուրք երեսփոխան Ջէմ էօզդէմիրը մասնակցեց Քիոյնի հայկական եկեղեցում կայացած արարողութեանը եւ յայտնեց իր ցաւակցութիւնը 1915 թ. Հայոց ցեղասպանութեան գոհերին:

— Տէր Զօրի նահատակաց մատուռի մէջ, մասնակցութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսի, խուռներամ հիւրերի ներկայութեամբ տեղի ունեցաւ 1915-ի գոհերի յիշատակին նուիրուած պատարագարօթք:

Նահանգապետ Ջորջ Պատակին, Ապրիլ 24-ը Նիւ Եօրքի նահանգում յայտարարեց «հայոց գոհերի յիշատակի օր»:

## 2001 թ. ԱՊՐԻԼ 25

Ռուսաստանի Պետդուման մէկ ըսպէ լուութեամբ յարգեց 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակը:

**2001 թ. ԱՊՐԻԼ 26**

ժընեւում, ՄԱԿ-ի Մարդկային Իրաւունքներին Յանձնախումբը, միաձայն որդեգրեց Հայաստանի Հանրապետութեան ներկայացրած «Յեղասպանութեան յանցագործութեան կանխարգիլման եւ պատժումի ուխտի» բանաձեւը:

**2001 թ. ԱՊՐԻԼ 27**

Ստրագպուրկում գումարուած Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում, Հայաստանի պատուիրակութեան նախաձեռնութեամբ, շրջանառութեան մէջ մտաւ Հայոց Յեղասպանութեան դատապարտման մի բանաձեւ:

**2001 թ. ՄԱՅԻՍ 2**

Պաշտօնական այցով Երեւան ժամանած Լիբանանի նախագահ՝ էմիլ Լահուտ, այցելեց Միժեռնակարերդ եւ ծաղկեպակով իր յարգանքը մատուցեց Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակին:

**2001 թ. ՄԱՅԻՍ 8**

Քափիթով Հիլի մէջ, ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկի ընթացքում, նախկին ծերակուտական Պապ Տօլ մատնանչեց Հայերի Յեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը:

**2001 թ. ՄԱՅԻՍ 25**

Մեծեռնակաբերդի յուշապատում ամփոփուեց Հայ ժողովրդի մեծ բարեկամ, իտալացի քաղաքական գործիչ՝ Ջակոմօ Գորինիի հողասփորը: 1911-15 թթ., Իտալիայի Գլխ. հիւպատոսը լինելով Տրապիզոնում, ականատես էր եղել Հայերի բռնի տեղահանութեան եւ կոտորածներին:

**2001 թ. ՅՈՒՆԻՍ 15**

Մեղրիի հրապարակում բացուեց Հնչակեան կուսակցութեան գաղափարախօս, անմահ հերոս՝

Փարամազի (Մատթէոս Սարգիսեան, ծն՝ 1863 թ. Մեղրիում), քարակերտ արձանը:

**2001 թ. ՅՈՒՆԻՍ 17**

Սիրիայի խորհրդարանի պատուիրակութիւնը, Ապուլլ Քատէր Քատուրայի գլխաւորութեամբ, այցելեց Մեծեռնակաբերդի Մեծ Եղեռնի յուշարձանը եւ իր յարգանքի տուրքը մատուցեց Հայոց Յեղասպանութեան զոհերին:

**2001 թ. ՕԳՈՍՏՈՍ 24**

ԱՄՆ-ի Գոնկլըէսի անդամ՝ Էտըմ Շիֆ (Գալիֆորնիա), Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար, այցելեց Միժեռնակաբերդ:

**2001 թ. ՕԳՈՍՏՈՍ 30**

Երեւանում հրատարակուեց ցեղասպանութեան թանգարանի տնօրէն՝ Լավրենդի Բարսեղեանի հեղինակած «Յեղասպանութեան հետեւանքով Հայ ժողովրդի կրած կորուստները» խորագրով գիրքը, ուր նշուած է, որ Մեծ Եղեռնի ընթացքում, 1914-1919 թթ. Հայ ժողովրդի կրած վնասները կազմում են 19-13 միլիառ Ֆրանք՝ 1919 թուականի սակով:

**2001 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 15**

Պաշտօնական այցով Երեւանում գտնուող Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինը, Ամենայն Հայոց Գարեգին Բ-ի հետ այցելեց Միժեռնակաբերդ եւ ծաղկեպակ դրեց Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակը յաւերժացնող յուշակոթողին: Թանգարանի մատենանում արձանադրեց հետեւեալը. «Ռուսաստանը Հայ ժողովրդի դի ցաւն ու ողբերգութիւնը միշտ էլ համարել է նաեւ իրենը: Մենք խոնարհուում ենք Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակի առջեւ»:

**2001 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 26**

Հռոմի Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը, Ամենայն

Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի, Հռոմի Կաթողիկէ եւ Հայ Առաքելական եկեղեցու սպասաւորների, հանրապետութեան բարձրաստիճան այրերի ուղեկցութեամբ այցելեց Միծեռնակաբերդի Մեծ Եղեռնի յուշամալի բր: Նորին Սրբութիւնը կարմիր վարդ դրեց անմար կրակի մօտ, աղօթք յղեց առ Աստուած՝ անմեղ զոհերի հոգիների հանգստութեան համար:

Այս առթիւ, աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրը մեծ յուզումով կը մեկնաբանէր “Ave Maria” (Ողջոյն Քեզ, Մարիամ) երգը:

**2001 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 5**

Հ.Յ.Դ. Կլենտէյլի Հայ Դատի Յանձնախմբի, Ռ-Ա.Կ. Հայ Դատի խորհուրդի եւ Ս.Դ.Հ.Կ Հայ Ամերիկեան Խորհուրդի ներկայացուցիչները, Կլենտէյլի մէջ ստեղծեցին մի Խորհուրդ, քաղաքում Հայոց Յեղասպանութեան զոհերի նուիրում մի յուշակոթող կառուցելու համար:

**2001 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 7**

Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. Պապը սրբերի շարքը դասեց 7 հոգու, այդ թւում՝ Հայ Արքեպիսկոպոս Իգնատիոս Մայրոյեանին, որը զոհուել էր 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնի ընթացքում:

**2001 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 10**

1915 թ. Հայոց Եղեռնին նուիրում «Վերջին մտքի հեքիաթը» գրքի հեղինակ գերմանագիր: գրող, ծագումով հրեայ էրզար Հիլզենրաթին շնորհուեց Հայաստանի գրողների միութեան պատուաւոր անդամի կոչումը: Նրա գրքում նկարագրում են Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայերի ջարդերը եւ 1915 թուականի ցեղասպանութիւնը:

**2001 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 24**

Պաշտօնական այցով Երեւան ժամանած Վրաստանի նախագահ՝ էդուարդ Շեվարդնաշին ծաղկեպսակ դրեց Միծեռնակաբերդի Մեծ Եղեռնի զոհերի յուշարձանին՝ եւ ծառ տնկեց յուշահամալիրի տարածքում:

**2001 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 25**

Եւրոպական Խորհրդարանի լիագումար նիստը, քուէների 149-271 յարաբերութեամբ, մերժեց որդեգրել 45 երեւոյթանների կողմից ներկայացուած բանաձեւը, ուր պահանջոււմ էր Թուրքիայից՝ ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը:

**2001 Թ. ՆՈՅՏԵՄԲԵՐ 1**

Ռումինիայի նախագահ՝ Իոն Իլիեսկուն, այցելելով Միծեռնակաբերդը, Մեծ Եղեռնի զոհերի յուշահամալիրը, ծաղկեպսակ դրեց եւ եղեռնի տնկեց: Թանգարանի յուշամատենում գրեց. «Տուրք՝ Հայ զոհերի յիշատակին եւ Հայ ժողովրդի հերոսութեանը»:

**2001 Թ. ՆՈՅՏԵՄԲԵՐ 9-12**

Թայիեյում (Թայվան), տեղի ունեցաւ միջազգային համագումար, նուիրում կրօնների համադորձակցութեան եւ սրբատեղիների պահպանման հարցին: Համագումարում՝ Արամ Ա. Կաթողիկոսը արծարծեց Հայոց Յեղասպանութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիայի կողմից շարունակուող մշակութային ցեղասպանութեան հարցը:

**2001 Թ. ՆՈՅՏԵՄԲԵՐ 15**

Եւրոպայ այցելութեամբ, Հայաստան գտնւող Լեհաստանի նախագահ՝ Ալ. Քուաշնեվսքին, իր անձնակազմով այցելեց Միծեռնակաբերդ եւ ծաղիկներ զետեղեց Հայոց Եղեռնի զոհերի յիշատակին: Յեղասպանութեան թանգարանի յուշատենում, լեհ դեկավարը՝ արձանագրեց. «Մենք կը միանանք Հայ ժողովրդի ցաւին, որ կը վերաբերի ցեղասպանութեան ողբերգութեան: Վստահ եմք, որ Տիապանաբար թոյլ չենք տալ, որ նման վայրագութիւններ եւ ոճիրներ կրկնուեն որեւէ այլ վայրում»:

**2001 Թ. ՆՈՅՏԵՄԲԵՐ 25**

Ռուանտայի Քիկալի քաղաքում, տեղի ունեցաւ «Կեանք՝ մահից յետոյ» խորագրով ցեղա-

սպանութեան նուիրուած միջազգային մի համա-  
գումար: Հրէական մի կազմակերպութեան ներ-  
կայացուցիչ Եաէլ Տանիէլ նշեց. «Ողջակիզումը եւ  
ցեղասպանութիւնը մեր հետ կը մնան սերունդ-  
ներ ամբողջ: Երբ այդ մասին խօսինք, առաջքը  
կ'առնենք յետագայ կրկնութիւններու»:

**2001 Թ. ՆՈՅՆՄԱՅԻՆ 27**

Փարիզի «Փրիվա» հրատարակչութիւնը լոյս  
ընծայեց «Մարդկութեան Սեւ Գիրքը», որը վե-  
րաբերում է աշխարհում տեղի ունեցած զան-  
գուածային կոտորածների պատմութեանը: Խըմ-  
բագիրն է՝ Երուսաղէմի Ոգեկոչման Հիմնարկի  
տնօրէն՝ Փրոֆ. Իսրայէլ Չառնին: Հայոց Յե-  
ղասպանութեան վերաբերող յօդուածները հեղի-  
նակած են Վահագն Տատրեանը, Իվ Թեռնոնը եւ  
Ռուբէն Ատալեանը:

**2001 Թ. ՆՈՅՆՄԱՅԻՆ 29**

Միջազգային մեծ համբաւ վայելող, ծագու-  
մով յոյն-ամերիկացի երգչուհի՝ Տայմանտա Կա-  
լաս, Եւե-Սի-էլ-էյ- Համալսարանի Ռոյս Հոլի մէջ,  
մեծ համերգ տուեց, որի խորագիրն էր «Հաս-  
տատումներ. կամք եւ կտակ»: Համերգը աւընչ-  
ւում էր 1914-1923 թթ. հայերի, յոյների եւ ասո-  
րիների դէմ գործադրուած ցեղասպանութեան  
հետ:

**2001 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 10**

Զուիցերիայի Ժընեւ նահանգի կառավարու-  
թեան բոլոր անդամները՝ միահամուռ, մի յայ-  
տարարութիւն ստորագրելով, պաշտօնապէս ճա-  
նաչեց Հայոց Յեղասպանութիւնը:

**2001 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 16**

Վենեզուելայի մայրաքաղաք՝ Կարակասի գըլ-  
խաւոր հրապարակներից մէկում, բացումը կա-  
տարուեց Հայոց Յեղասպանութեան նուիրուած  
յուշարձանին, որը յար նման է Միծեռնակա-  
բերդի կոթողին:

**2002 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 9**

Տաւր օր տեւողութեամբ (մինչեւ Յունուար  
19-ը), Փարիզում տեղի ունեցաւ «Հայկական Շա-  
բաթ» միջոցառումը, Ֆրանսիայի կողմից Հայոց  
Յեղասպանութեան ճանաչման առաջին տարե-  
դարձի առթիւ: Այն սկսուեց Փարիզի քաղաքա-  
պետարանի պատմական սրահներում բացուած  
«Հայոց Յեղասպանութիւն. 20-րդ դարի պատ-  
կերներ» ցուցահանդէսով:

**2002 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 20**

Ամերիկացի պատմաբան Ռապըրթ Ճան,  
ԱՄՆ-ի ազգային արխիւում յայտնաբերեց Ա-  
տոլֆ Հիթլերի, Օգոստոս 22, 1939 թ., Օպէրզալց-  
պըրկի մէջ, Երրորդ Բայխի բարձրագոյն հրա-  
մանատարութեան ժողովում կատարած յայտա-  
րարութիւնը: «Մեր ուժը, մեր աբազընթաց յար-  
ձակման մէջ է: Ո՞վ այսօր կը յիշէ Հայոց բը-  
ձա օչն օր-Տ»:

**2002 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 27**

Մանչեստերում, Բրիտանիայի Ներքին Գործե-  
րի նախարարութեան կողմից կազմակերպուած  
Հոլոքոստի յիշատակի օրուայ ժամանակ, առաջին  
անգամ յարգանքի տուրք մատուցուեց նաեւ 1915  
թ. Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակին:  
Յիշատակի արարողութեանը հրաւիրուած են  
եղել բրիտանահայ հասարակական գործիչներ,  
արուեստագէտներ, որոնք ներկայացրել են իրենց  
ընտանիքի անդամների հետ 1915 թ. կատարուած  
ողբերգական դէպքերը:

**2002 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 31  
ՓԵՏՐՈՒԱՐ 1**

Երկու օր յաջորդաբար, Բաթրաից սիւռուող  
«Ալ Ճազիրէ» կայանը «Գաղտնիքներ պատմու-  
թիւնից» յայտագրով, արաբերէն հաղորդաչար  
տուեց Հայոց Յեղասպանութեան մասին, ուր  
փաստացի վկայութիւններից բացի, ցեղասպանու-  
թիւնից վերապրողներ եւս խօսեցին ջարդի մա-  
սին:

**2002 թ. ՓԵՏՐՈՒԱՐ 15**

Հայաստանի Արտաքին-Գործոց նախարարությանը բողոքագիր յղեց Իսրայելի կառավարության Հայաստանի մէջ Իսրայելի դեսպան Տիկ-Ռիվքա Գոհէնի՝ ֆետրուար 8-ին, Հայոց Յեղասպանութեան դէմ կատարած յայտարարութեան առիթով, ուր մասնաւորապէս նշուած էր, որ «Հայաստան անընդունելի կը նկատէ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը հերքելու կամ նեմացնելու որեւէ փորձ, ինչ պատճառաբանութեամբ էլ կատարուած լինի այն»:

**2002 թ. ՓԵՏՐՈՒԱՐ 19**

Լեհաստանի հրէական համայնքի ղեկավար Կոնստանտի Գերերթը, ամենաազդեցիկ թերթում գրած իր յօդուածով, քննադատեց Վրաստանում եւ Հայաստանում, Իսրայելի դեսպան Տիկին Ռիվքա Գոհէնին, Հայոց Յեղասպանութիւնը «ողբերգութիւն» որակելու կապակցութեամբ:

— Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովրդական Միաւորում» պատգամաւորական խմբի անդամների նախաձեռնութեամբ, շրջանառութեան մէջ դրուեց «1915-22 թթ. Թուրքիայի կողմից իրագործուած Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակի պաշտպանման իրաւական երաշխիքների մասին» օրէնքի նախադիժը:

**2002 թ. ՓԵՏՐՈՒԱՐ 28**

Եւրոպական խորհրդարանը, որդեգրելով Փեր կարթոնի (Կանաչներ՝ Շուէտ), պատրաստած տեղեկագիրը, վերահաստատեց Թուրքիայի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման պահանջը: Այն վերահաստատում է Հայոց Յեղասպանութեան վերաբերող 1987 թ. Յունիս 18-ի ընդունած որոշումը:

**2002 թ. ՄԱՐՏ 2**

Մարտ 2-ից մինչեւ 5-ը, ԱՄՆ-ի Նիւ Ճըրսի Նահանգի Նիւարք քաղաքում տեղի ունեցաւ «Հոլոքոսթի եւ եկեղեցիների հարցերով 32-րդ

գիտաժողովը», ուր լսուեց եւ քննարկուեց նաեւ 5 զեկուցումներ՝ Հայոց Յեղասպանութեան մասին:

**2002 թ. ՄԱՐՏ 3**

Հրեայ ակադեմական Փրոֆ. Եաիր Օրոնը իսրայելեան «Հաարէց» օրաթերթի Մարտի 3-ի համարում ստորագրած յօդուածով քննադատեց Իսրայելի իշխանութիւնների կեցուածքը Հայոց Յեղասպանութեան նկատմամբ եւ կրկին բարձրացրեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը:

**2002 թ. ՄԱՐՏ 4**

Երուսաղէմի Ողջակիզման ու Յեղասպանութեան ինտիտուտի տնօրէն եւ ցեղասպանութեան հանրագիտարանի գլխաւոր խմբագիր Փրոֆ. Իսրայել Չառնին, յատուկ նամակ յղեց Իսրայելի Արտաքին Գործերի նախարար Շիմոն Փերեզին եւ Հայաստանում այս երկրի դեսպան Ռիվքա Գոհէնին, քննադատելով Արտգործ նախարարութեանը Հայերի Յեղասպանութեան փաստը ժխտելու համար:

**2002 թ. ՄԱՐՏ 5**

ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան 65 անդամներ ստորագրեցին Ջօ Նոյէնբերգի (Հանրապետական, Միջիկան նահանգից) եւ Ֆրէնք Փայոնի (Դեմոկրատական, Նիւ Ջըրզից) նամակը, նախագահ Պուշին պահանջելով, որ յարգի իր խոստումը եւ ճանաչի Հայոց Յեղասպանութիւնը:

**2002 թ. ՄԱՐՏ 7**

ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի սենատը ընդունեց նահանգի տարածքում Ապրիլ 24-ը Օսմանեան կայսրութիւնում 1915-1923 թթ. իրականացուած Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակի օր ճանաչելու բանաձեւ:

— Հայաստանի եւ Վրաստանի մօտ Իսրայելի դեսպան Տիկին Ռիվքա Գոհէնի Հայերի Յեղասպանութիւնը ժխտող յայտարարութեան ի

բողոք, ժողովրդական ցոյց տեղի ունեցաւ Լոս Անջելեսի իւրայեւեան հիւսարտատարանի շէնքի առջև: Յոյցին մասնակցեցին մօտ 300 հայորդիներ: Այդ ընթացքում, կազմակերպիչները ներկայացնող մի պատուիրակութիւն հիւսարտատարանին յանձնեց բողոքի նամակը:

**2002 թ. ՄԱՐՏ 12**

Իր մահկանացուն կնքեց Կիպրոսի նախկին նախագահ՝ Սիիրոս Քիփրիանուն, որը հայութեան բարեկամ եւ Հայ Դատի համար մարտնչող մեծ անձնաւորութիւն էր: 1965 թ. Կիպրոսի Արտաքին Գործերի նախարարի հանգամանքով, առաջին անգամ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին ներկայացրեց Հայերի Յեղասպանութիւնը:

**2002 թ. ՄԱՐՏ 16**

Աւելի քան 2000 հայորդիներ Հարաւային Գալիֆորնիայի զանազան շրջաններից հանրակառքի կարաւաններով ուղղուեցան դէպի ազգային մեծ հերոս Սողոմոն Թեհլիրեանի յուշարձանը, որը գտնւում է Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը: Հայերի Յեղասպանութեան զըլխաւոր յանցագործ Թալեաթի սպանութիւնից 80 տարի յետոյ, Գալիֆորնիայի հայութիւնը իր յարգանքի տուրքի մատուցեց անմահ վրիժառուին: Ուխտագնացութիւնը կազմակերպւեաւ էր բարձր մակարդակով եւ այն եզակի էր իր տեսակի մէջ:

**2002 թ. ՄԱՐՏ 17**

Ախալքալաքի հայութեան ներկայացուցիչները Վրաստանի Նորհրդարանի նախագահ՝ Տիկ Նինօ Պուրճանացիից պահանջեցին, որ վրացական իշխանութիւնները պաշտօնապէս ճանաչեն Հայոց Յեղասպանութիւնը:

**2002 թ. ՄԱՐՏ 23**

Գալիֆորնիայի նահանգային ծերակուտական ձէք Աքաթ, պաշտօնական այցով Երեւանում

գտնուելու ընթացքում, Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչների ընկերակցութեամբ այցելեց Միծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան յուշահամալիր:

**2002 թ. ԱՊՐԻԼ 1**

ԱՄՆ-ի ծերակոյտի անդամ Պարպարա Պաքսըր հրատարակեց պաշտօնական մի յայտարարութիւն 1915-1923 թթ. Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելու մասին:

**2002 թ. ԱՊՐԻԼ 8**

Արու Դաբիի հեռուստակայանը հեռարձակեց Հայոց Յեղասպանութիւնը արծարծող «Անմեղներ» խորագրով ֆիլմաշարը: Այն ամբողջութեամբ դատապարտում է ցեղասպանութիւնը որակելով այն որպէս մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւն:

**2002 թ. ԱՊՐԻԼ 11**

Արեւմտեան Ամերիկայի մէջ գործող երեք կուսակցութիւնների՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան եւ Բամկալար Ազատական կուսակցութեան ներկայացուցիչները, համատեղ հրասարակեցին մի յայտարարութիւն, Հայոց Յեղասպանութիւնը միջազգային չափանիշով ճանաչելու պահանջով:

**2002 թ. ԱՊՐԻԼ 13**

Փարիզի Ալֆորվիլ թաղամասում գտնուող Հայոց Յեղասպանութեան յուշարձանը սրբապղծումի անարգ յարձակման ենթարկուեց անօթ տարրերի կողմից:

**2002 թ. ԱՊՐԻԼ 15**

162 Գոնկրէսականներ ստորագրեցին նախահաս Պուշին ուղղուած նամակը, որպէսզի յարդէ նախընտրական խոստումը եւ Հայոց Յեղասպան

նութիւնը իրրեւ այդպիսին բնութագրէ իր Ապրիլ 24-ի սատգամի մէջ:

**2002 թ. ԱՊՐԻԼ 16**

Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդը Ապրիլ 24-ը հռչակեց Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման օր, իսկ Ապրիլի 21-ից 26-ը ընկած ժամանակահատուածը՝ «Յիշատակի Շաբաթ»:

**2002 թ. ԱՊՐԻԼ 18**

Գալիֆորնիայի Նահանգային Խորհրդարանը միաձայն ընդունեց մի հռչակագիր, ուր Ապրիլ 24-ը Գալիֆորնիայում յայտարարուած էր Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման օր: Հռչակագրի բովանդակութիւնը կազմուած էր Խորհրդարանի անդամներ Տարիօ Ֆրոմերի եւ Ճօ Սիմիթեանի կողմից:

**2002 թ. ԱՊՐԻԼ 24**

Արեւմտեան Ամերիկայի յարանուանութեանց հոգեւոր պետերը՝ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Վաչէ Արք. Յովսէփեան, Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Մուշեղ Եպս. Մարտիրոսեան, Հ սյ Կաթողիկէ համայնքի հովիւ՝ Գերյ. Հայր Ռաֆայէլ Վրդ. Մինասեան, Միացեալ Աւետարանական Եկեղեցւոյ հովիւ՝ Վեր. Ռան Թովմասեան եւ գաղութի աւելի քան 15 գործօն կազմակերպութիւնների նախաձեռնութեամբ, տեղի պիտի ունենայ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման գլխաւոր ձեռնարկը՝ հոգեհանգիստ-քաղաքական հաւաք, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին մօտ:

Հայոց Յեղասպանութեան 87-րդ տարելիցի առիթով, ոգեկոչման բազմաթիւ ձեռնարկներ, բողոքի ցոյցեր՝ տեղի պիտի ունենան նաեւ Հայաստանում եւ նշխարհի հայահոծ զանազան գաղթօճախներում: Միձեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարանում, պիտի բացուի հռչակաւոր նկարիչ Ժաննեմի Հայոց Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած նկարների ցուցահանդէսը:

Նոր Հայաստան Ծրագրեր

Ա.ՊՐԻԼ 23, 2002, ԺԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 76

**ԳՐԻԳՈՐ ԶՈՒՐԱՊԻ**

**«Քրեական իրավունք»**

թուրքերեն անհայտ գրքի մասին

Հայ գրականության դեմքերից՝ Գրիգոր Զոհրապը ոչ միայն մեծ գրող և հրապարակախոս էր, այլև միջպագային համբավ ստացած իրավաբան:

1908-1915 թթ. որպես թուրքական մեջլիսի հայ պատգամավոր՝ Գրիգոր Զոհրապը մեծ ջանք է գործադրել Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգների ծանր դրությունը բարելավելու խնդրում: Նա անխնայ պայքարել է, որպեսպի կյանքում իրագործվեն 1908թ. հուլիս 24-ին հռչակված սահմանադրության օրենքները: Դժբախտաբար թուրք պաշտոնատար անձինք բոլորովին անտարբեր մնացին սահմանադրության դրույթները գործադրելու խնդրում: Հակառակ Գրիգոր Զոհրապի ներդրած ջանքերին կյանքի, պատվի և ունեցվածքի անձեռնմխելիության վերաբերող օրենքները անբողոքովին անտեսվեցին և մնացին թղթի վրա և բոլորովին չգործադրվեցին կյանքում:

Գրիգոր Զոհրապը իրավաբանական հարցերին նվիրված հրատարակել է 3 աշխատություն, որոնցից մեկը շարադրված է ֆրանսերեն, իսկ երկուսը օսմաներեն (արաբատառ թուրքերեն):

Այս աշխատությունների հատուկ ուսումնասիրությունը առավելի կնպաստեր հասկանալու հեղինակի աշխարհաստիպացքը, քաղաքական և քաղաքացիական բնույթը մենք:

Վերջերս մեր ձեռքն ընկավ վերոհիշյալ օսմաներեն հրատարակված

երկու գրքերից մեկի պատճենավորված օրինակը: Այն մեզ տրամադրեց «Առազատ» ամսագրի պատվակալ խմբագիր՝ Ստեփան Ալաջաջյանը: Գիրքը պահվում է Երևանի Գրականության և Արվեստի թանգարանի Գրիգոր Զոհրապի արխիվում:

Գրքի խորագիրն է «Քրեական իրավունք», հրատարակված 1910 թ. Կ. Պոլսում: Անվանաթերթում գրված է հետևյալը. «Օսմանյան Հանապարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, փաստաբան, Կ. Պոլսի երեսփոխան՝ Գրիգոր Զոհրապ: Գիրքը կազմված է իրավագիտության

ֆակուլտետում կարդացած դասախոսություններից: Կ. Պոլիս, 1325 (1910) »:

Նշենք, որ 272 էջերից կազմված բովանդակությունը բաղկացած է 6 մասերից և 19 գլուխներից: Ստորև առաջին անգամ թարգմանաբար ընթերցողին ենք ներկայացնում այս դասագրքի սկզբում բերված Գրիգոր Զոհրապի «Երկու խոսք», որն ողողված է օսմանյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին: Ընթերցողը կհիշատի, թե ինչպե՞ս Գրիգոր Զոհրապը ջատագովում է սահմանադրության կիրառման գաղափարը օսմանյան կայսրությունում, որովհետև նա շատ լավ գիտակցում էր, որ միմիայն սահմանադրության ճշմարիտ գործադրության դեպքում կբարելավվեր արևմտահայության վիճակը և կիրկվեր ֆիլիկական ոչնչացման փոսնագից:

\* \* \*

«Սահմանադրությունը մեկ տանում է մի նոր ժամանակաշրջան՝ նոր իրավունքների, նոր պարտականու-

թյունների կատարման»: Սակայն այս բոլորը արդյունք կտա այն ճիշտ կիրառելու դեպքում:

բոլորը արդյունք կտա այն ճիշտ կիրառելու դեպքում:

Ամենանորագույն սարքավորում ունեցող հարյուրամյա համեմատման օգտագործելը չի մացողների ձեռքին ոչ մի բանի պիտանի լինել չի կարող:


Ահա այդ ունակությունը ձեռք բերելու համար է, որ դուք շտապել եկել եք այստեղ:

Ահա թե ինչու ես այս ձևով եմ բացատրում այս համալսարանի ուսանողների թվի այդքան շատ լինելը: Դուք չէք եկել իրավագիտության ուսումնառությունը սպորտսի միջոց օգտագործելու նպատակով:

Հասարակության համար դատախազի պաշտոնը ձեռք բերելով սպորտսիտ հոգալու, կամ փաստաբանություն անելով շահավետ դրամ վաստակելու համար չէ, որ եկել եք այստեղ, այլ գուցե և առավել վսեմ գաղափարի իրականացման նվիրումով, այսինքն՝ իրավունքի ու պարտականության իմաստը հասկացող օսմանցու նման եք եկել այստեղ:

Այս ուղղությամբ ձեր հույան ու փափաքը կյանքի կոչելու համար ես ևս, առանց մտածելու իմ ժամանակի սրության և տրամադրվածության մասին, համեմատաբար ելու իմ վրա դրված պարտականությունը: Այսինքն՝ ստանձնեցի ձեզ դասավանդել քրեական իրավունքի և իրավագիտության հետ առնչվող մարդկային կյանքի և պատժելիության թեման:

Այսպիսով ուսուցչի և ուսանողի միակ և բուն նպատակը մեր մեծ հայրենիքին ծառայելու ընթացքում «կեցցե՛ հայրենիքը, կեցցե՛ ն օսմանցիները» պոռալով հանդերձ, մեկ անգամ ևս կրկնենք «կեցցե՛ սահմանադրությունը, կեցցե՛ ն սահմանադրական օրենքները» լուրնզը, քանի որ մեր հայրենիքի և օսմանցիության ապահովությունը կը հարատևի միմիայն մեր սահմանադրության և սահմանադրական օրենքների ճիշտ կիրառումով ...»:



Գրեգոր Զոհրապի պատգամավորական վկայականը: Իր նկարի տակ գրված է, -Istanbul Mebusu Zohrab efendi (Ստամբուլի պատգամավոր Զոհրապ էֆենդի): Մյուս երեսին՝ MecLis-i Mebusan Osmani (Օսմանյան պատգամավորական մեջլիս): Ununcu devreye intihabi, -ընտրված երրորդ նստաշրջանի համար: 1330-1334 (1914-1918):

### ԱՌԱՍՑ ՎԵՐՆԱԳՐԻ

Նոյեմբեր 23, 2001 թվականին շատ պատահական հանդիպեցի իմ վաղեմի ծանոթ հարգարժան հոգևորական Տեր Ստեփան Տեր-Գեվորյանին, իր համեմատաբար երեցկնոջ հետ:

Իրար ջերմագին ողջունելուց հետո նա գոհունակություն հայտնելով այդ հանդիպմանը ասաց.

-Պին. Փափաղյան, այս վերջերս այնքան կուլեի հանդիպել ձեզ հետ, քանի որ մի հարց շատ էր հետաքրքրում ինձ:

- Տեր հայր, ինչպե՞ս, ինչով կարող եմ օգտակար դառնալ:

-Ինձ շատ էր մտառանցում հետևյալ հարցը: Բնականաբար մամուլից ծանոթ եմ ձեր հոդվածներին և հրատարակած գրքերին: Գիտեմ, որ որպես պատմաբան մասնագետ եք նաև օսման-երենի: Արդյո՞ք, որևէ մեկին փոխարինող պատրաստե՞լ եք, որպեսզի շարունակի ձեր գործը: Ձե՛ որ թուրքիայի արխիվներում արաբատառ

թուրքերենով հսկայական նյութ կա ուսումնասիրելու: Տարիներ առաջ լսել էի, որ թուրքիան բացել է իր արխիվները:


Մի պահ պատմնավեպուց հեռու պատմասանեցի. -Տեր հայր դուք Ձեր մատր դրիք վիրավոր վերքիս վրա: Երբ ճակատագրի բերումով 10 տարի առաջ հաստատվեցի Լոս Անջելեսում, առաջին գրությունս մամուլում լույս տեսած այդ մասին էր և կրում էր «Ե՞րբ ունենալու ենք մեր Օթթոս Վուլֆեր» վերնագիրը: Այդ հողվածում առաջ էի քաշել օսմաներենի մասնագետ պատրաստելու հարցը: Եվ պատրաստակամություն էի հայտնել անշահախնդիր օգուակար դառնալ մի քանի հայ երիտասարդների մասնագիտացնելու հարցում: Ավա՛ղ, անցան օրեր, ամիսներ, տարիներ և ոչ մի արձագանք չգտա:

Այդ պահին խոսքի բերումով մատնանշեցի, որ իրոք հայ պատմաբանի համար կարևոր է օսմաներենի խնամքությունը, քանի որ հայկական հարցի կամ եղեռնի հետ առնչվող օսմաներեն հրատարակված գրքերը, երբ այսօր Թուրքիայում վերածում են լատինատառ թուրքերենի և հրատարակում, անպայման աղավաղում կամ կրճատում են մեկ համար կարևորություն ներկայացնող մասերը:

Տուն վերադարձիս ուրախությամբ գրի առա այս դրվագը: Ուրախությամբ եմ ասում, նկատի ունենալով, որ վերջապես մեկը սրտացավ հետաքրքրվեց այդ խիստ կարևոր հարցով:

**ԱՄՍՍԱԳԻՐ #6**

**Մարտ 2002**



«Բեթէլ»

**Բ Ե Թ Է Լ**

**Եկեղեցու և դպրոցի պատմությունը**  
(1922-2001 թթ.)

Ուղղորթաուն, 2001, 418 էջ

**Պատրաստեց՝ Վեր. Պարզեւ Օրջանեան**

Լոս Անճելըսում սպրած տարիներին ամէն անգամ երբ հայ-թրքական յարաբերութիւնների պատմութեան կամ Հայոց Մեծ Եղեռնին վերաբերող մի գիրք էի հրատարակում, գնահատանքի առաջին արձագանգները գալիս էին Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքից, Վեր. Պարզեւ Օրջանեանի կողմից: Այդ մասին նա տեղեկանում էր Լոս Անճելըսում լոյս տեսնող հայկական մամուլից: Բնականաբար նրա քաջալերանքի գրութիւնները ինձ առաւելի լիցքաւորում և ուժ ու եռանդ էին տալիս: Բայց վերջերս ճիշդ հակառակը պատահեց: Վեր. Պարզեւ Օրջանեանից ստացայ գեղեցիկ մակագրութեամբ և բարի մաղթանքներով նրա երկար տարիների աշխատասիրութեան արգասիքը հանդիսացող «Բեթէլ» եկեղեցու և դպրոցի պատմութեան մեծածաւալ գիրքը:

Բնականաբար սկսեցի ընթերցել և ծանօթանալ մինչ այդ ինձ անյայտ, բայց հետաքրքրաշարժ նիւթին: Այն առնչւում էր Հալէպի Հայ Աւետարանական «Բեթէլ» (Աստծոյ Տուն) եկեղեցու և դպրոցի կառուցման և յետագայ գործունէութեան պատմութեանը, իր բոլոր մանրամասնութիւններով և ընդգրկուած հազուագիւտ նկարներով:

1920-1923 թուականներին իրենց բնօրրանից բռնի դաղթած հայութեան թիւը Հալէպում հասաւ մօտ 200,000-ի, որոնցից մի ստուար մասը որպէս բացօթեայ դաղթական բնակութիւն էր հաստատել Համիտէի և Սուլէյմանիէյի ճահճախուտ շրջանում: Ահա այս վայրում էլ կառուցւում է Հայ Աւետարանական եկեղեցւոյ առաջին փայտաշէն աղօթավայրն ու դպրոցը տարաբախտ հայ ժողովրդի մի հատուածի համար:

Այս գրքի սկզբում վեր Պարզեւ Օրջանեանը բերել է գաղթականի (քէմփի) Հայ Աւետարանական եկեղեցուն վերաբերող առաջին ատենագրութիւնը հայտատու թրքերէնով (էջ 3):

Նկատի ունենալով, որ ընթերցողներից շատերը մեր օրերում արդէն չեն տիրապետում թրքերէնին, ուստի ես այն թարգմանեցի հայերէն:

### Հալէպի հայ գաղթականների քէմփում գտնուող Աւետարանական եկեղեցու համառօտ պատմութիւնը

«1922-23 թուականների ընթացքում թրքական կառավարութեան գործադրած դաժանութեան պատճառով, իրենց երկրից բնագաղթի պարտադրուած հայ ժողովուրդը տեղատրուեց Սիրիայի տարբեր վայրերում:

Հալէպ եկած Հայ Աւետարանական համայնքի մեծ մասը քէմփում գտնուելու պատճառով, խիստ անհրաժեշտութիւն էր առաջացել նրանց համար կառուցելու մի աղօթավայր: Ուստի ամերիկացի միսիոներների օժանդակութեամբ եւ հովանաորութեամբ հիմնուեց մի տախտակամած աղօթավայր:

1923 թ. Մարտի սկզբին յիշեալ աղօթավայրի ներսում սկսուեցին տեղի ունենալ կրօնական ծիսակատարութիւններ: Իսկ Մարտի 15-ին բացուեց մէկից մինչեւ չորրորդ դասարանից բաղկացած դպրոցը: Փառք Աստծուն, որ անտէր ժողովրդին միախառնեց այս ձեռով»:

Որոշ ժամանակ անց քէմփի վատ պայմանները այլեւս չեն բաւարարել համայնքի օրըստօրէ աճող պահանջներին, ուստի վարչութիւնը որոշում է կայացրել նոր տարածութիւն գնել վեր Ահարոն Շիրաճեանի նախաձեռնութեամբ: Հայութիւնը աստիճանաբար տեղափոխուում է Հալէպի հիւսիսային մասում գտնուող «Կէօք Մէյտան» կոչուող վայրը: Ահա, այստեղ է, որ 1934 թ. Փետրուարի 7-ին գրւում է «Բեթէլ» եկեղեցու շէնքի անկիւնաքարը եւ սկսում են ամրակուն պատերը: բարձրանալ: Որոշ ժամանակ անց անարտուած եկե-

ղեցում սկսում են կրօնական ծիսակատարութիւնները, իսկ պաշտամունքից յետոյ եկեղեցին վարագոյրների բաժանումով վերածւում էր դպրոցական դասարանների, մինչեւ յարակից դպրոցական շէնքերի կառուցումը:

Ինչպէս նշեցինք, այս մեծածաւալ գիրքը, վեր Պարզեւ Օրջանեանի երկարամեայ տարիների քրտնաջան եւ խորը նուիրումով կատարած աշխատանքի արդասիրքն է: Փաստ է, որ եկեղեցին եւ թէ դպրոցը խիստ կարեւոր դեր են խաղացել Մեծ Եղեռնից մազապուրծ ազատուած հայութեան, յատկապէս որը եւ անտէր երեխաները հաւաքելու, կրթելու եւ հայեցի դաստիարակելու վեհ գործում:

Հեղինակը եւս այս դպրոցի առաջին աշակերտներից մէկն է եղել:

«Այս նորակազմ դպրոցին առաջին աշակերտներէն ըլլալու դժբախտութիւնն ու բարեբախտութիւնը ունեցողներէն մէկը եղած եմ, - գրել է վեր Պարզեւ Օրջանեանը.- դժբախտութիւնը, որովհետեւ դպրոցական կեանքէ աւելի գոմի կամ փարսիսի նմանող կեանք մը ապրած ենք հոն: Խոնձա գետնի վրայ փոռած փսիաթի վրայ ծալլապատիկ նստելով, շրջան մը մեր ծունկերը գործածած ենք որպէս սեղան: Ուրիշ դժբախտութիւն մըն էր ճամբաներուն ձմեռը ճախճախտութեամբ ըլլալը եւ անոր դէմ մեր անպաշտպան ըլլալը: Ծատեր ձմեռուան ցուրտին դպրոց կու գային բոկոտն կամ առաւելագոյնը ներքանը ծածկող եւ պաշտպանող նալիճով մը: Այս դժբախտութեանց զիսաւոր պատճառն էր նախ թորքը, որ մեր ծնողները իրենց երկրէն արմատախիլ ընելէն վերջ, ճամբան անոնց ունեցած հարստութիւնը կողոպտելով աղքատացուց: Անոնք Հալէպ հասան իրենց ունեցածը կողոպտուած ու կը ջանային լոկ ապրուստ մը ճարել, մնացածը իրենց համար երկրորդական էր»:

Հակառակ այս դժուարին պայմաններին դպրոցը վեր Պարզեւ Օրջանեանի մտապատկերի մէջ մնացել է, որպէս քաղցր եւ անմոռանալի մի յուշ:

«Այս մանկութիւն, երանելի օրեր: Թէն մեր կերած հացին խմորը կը շաղուէր արտասուքով եւ կ'աղուէր արտասութի աղովը, սակայն մեզի՝ մանուկներու համար այդ արտասուխառն հացը խիստ անհասկանալի էր եւ համեղ ըլլալ կը թուէր: Անցա՛ն այդ օրերը»:

Գրքի բովանդակութիւնից երեւում է, որ այս դպրոցում են իրենց առաջին քայլերը կատարել եւ յետագայում հոգեւոր եւ հանրային ճանաչուած գործիչներ դարձել մեծ թուով հայորդիներ:

Վեր. Պարգեւ Օրջանեանը իր շնորհակալութեան խօսքում մէկ առ մէկ յիշում եւ իր երախտագիտութիւնն է յայտնում բոլոր բեթէլցիներին, որոնք իրենց կենսագրական նիւթերով, յուշապատումներով, հազուագիւտ նկարներով եւ այլ միջոցներով օգնել եւ օժանդակել են, որպէսզի գիրքը լոյս տեսնի անթերի եւ պատշաճ մակարդակով: Իսկ այս արժէքաւոր գրքի սպագրութեան գործում իրենց նրատարու լուծան են ներդրել Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Նուարդ Մովսէսեանները:

Գրքի սկզբում զետեղուած են չորս գրութիւններ, որոնց հեղինակները գրուատանքի խօսքերով ըստ պատճառի արժեւորել եւ բարձր են գնահատել Վեր. Պարգեւ Օրջանեանի կատարած այս աշխատասիրութիւնը: Իրօք որ գնահատելի աշխատանք է կատարուած: Այն յետագայ սերունդների համար կը ծառայի, որպէս կարեւոր սկզբնաղբիւր, իր փաստագրական բոլոր նիւթերով եւ նկարներով:

Ստորեւ քաղուածաբար բերում ենք հատուածներ, որոնք որոշակի կարծիք եւ գաղափար կը տան այս հրատարակութեան մասին:

«Բեթէլի շուրջ ութսունամեայ պատմութիւնը կը անանի Սփիւռքի մեր միւս եկեղեցիներու պատմութեան, որոնց կեանքը եղաւ դժուարութիւններով լի փշոտ քայց միանգամայն փառաւոր ճանապարհ մը: Անոնք քարը ճեղքող եւ քարի վրայ արմատ անտող ծառերու պէս ծլան եւ գոյատեւեցին»:

Վեր. Դուկտ. Վահան Յ. Թութիկեան  
Նախագահ՝ Հայ Աւետարանական  
Համաշխարհային Խորհուրդին

«Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունենք ձեզի, ձեր այնչափ խնամքով պատրաստուած Բեթէլ Եկեղեցիի պատմութիւնը անկայացնող սքանչելի գիրքով: Որպէս բեթէլցի եւ որպէս հովիւ եղբայր շատ հպարտ եւ երախտապարտ կը զգամ, որ մեր երէց եղբայրը այսպիսի գործ մը ձեռնարկեց, որ ան ճիշդ զուգահայեցաւ Բեթէլ եկեղեցիի 75-ամեայ տարեդարձին, որը անելի կ'արժեւորուի, որովհետեւ ատոր միջոցաւ մեր եկեղեցիի պատմութիւնը իմանալով բոլորս ալ Աստուծոյ փառք կու տանք իր մեծ շնորհքին համար: Վարձքերնիդ կատար, Տէրը օրհնէ ձեզ, առատապէս»:

Վեր. Պարգեւ Աբարդեան

«Թանկագին քարեկամ, Հալէպի Բեթէլ Եկեղեցիին ունեցած է ամենաբարձր թիւով քարոզիչներ: Անոնց կարգին, դուք եղաք միակը, որ յանձն առիք, աշխոյժ այդ հոգեւոր հաստատութեան պատմութիւնը վերականգնող: Աշխատանքը որ դուք բարեհաճոյ եղաք տանիլ, կարեւոր լրացուցիչն է Հալէպի մայր գաղութի՝ պատմութեան: Ապագային, երբ հայրենիքէն բռնի տեղահանուած (Յեղասպանութիւն)՝ պատմութիւնը գրուի, ձեր միատեղած տեղեկութիւնները թանկագին անխանութիւն պիտի հայթայթեն ատոր»:

Տոքթ. Ռոպերթ ճեպեճեան

Վեր. Պարգեւ Օրջանեան, կարելիութեան սահմանին մէջ, ի մի հաւաքած է բոլոր բեթէլցիները՝ հովիւ, սարկաւագ, ժողովական, տնօրէն, ուսուցիչ եւ աշակերտ եւ այնպէս դասաւորած է զանոնք որ ընթերցողը կարծես շարժապատկերի պատատին առջեւ նստած, դիտած ըլլայ «Բեթէլի» ամբողջ 80 տարուայ պատմութիւնը: Անոր էջերը, Ի՛նչ, ի՛նչ յուշեր կ'արթնցնեն, բեթէլցիին մտքին մէջ»:

Փառէն Գազանճեան Սանենց



ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԷՈՐԳ ՊԱՂԾԵԱՆԻ

(Վազգէն Այգունի)

ՊԱՅԾԱՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Նոր Հայաստան» օրաթերթի յարգարժան խմբագիր՝ Պրն. Վահան Վահանեան:

Ձեր օրաթերթում (Դեկտեմբեր 8, 2001 թ.), խորը ցաւով կարդացի, հանգուցեալ Դոկտ. Գէորգ Պաղճեանի բարի անուան շուրջ ոմն մէկի կողմից կատարուած սրբապիղծ արտայայտութեան մասին: Բնականաբար, թէ՛ ձեր եւ թէ՛ Պրն. Նուրհան Ուզունեանի գրութիւններում, ըստ արժանոյն, անարդանքի սիւնին էր դաժմուած այդ ստոր արտայայտութեան հեղինակը:

Ընթերցելուց յետոյ, ընկալ դառը մտորումների մէջ եւ իմ սրտի խորքում նոյնպէս գայլոյթ ու վրդովմունք առաջացաւ, քանի որ մօտից ծանօթ էի Գէորգ Պաղճեանի կատարած գիտա-հետազոտական, դասախօսական բեղուն աշխատանքներին, ինչպէս նաեւ հասարակական մեղուաջան գործունէութեանը:

Իրօք, որ նա մեր ազգային ողբերգութեան ցաւերով տառապող, պատմական Հայաստանի տարածքներին տէր կանգնող եւ մեր կորցրած շարժական ու անշարժ գոյքի նիւթական արժէքների հատուցման համար պայքարող

մի հայրենասէր անձնաւորութիւն էր:

Իր հրապարակախօսական յօդուածներում եւ մենագրութիւններում, Գէորգ Պաղճեանը ամենայն խորութեամբ անդրադարձել է 1915-ի հայերի ցեղասպանութեան իրականացման թուրքիայի քաղաքականութեանը, ինչպէս նաեւ թուրքական պետական գործիչների կողմից հայկական հարցի պատմութեան նենգափոխման խնդիրներին: Միջազգային իրաւական օրէնքների վրայ, նա ասացուցել է հայ ժողովուրդի անքակտելի իրաւունքը, ներկայիս թուրքիայի կազմում գտնուող էթնիկական տարածքի վրայ, ինչպէս նաեւ որպէս տեղահանութիւնից եւ ցեղասպանութիւնից յետոյ այնտեղ մնացած ազգային եւ նիւթական արժէքներին: (1. Le problème arménien: Du négativisme turc à l'activisme arménien: Où est la solution?, Montréal, 1985; 2. La confiscation par le gouvernement turc, des biens arméniens, dits abandonnés, Montréal, 1987):

1991 թ. Օգոստոս 2 թուագրութեամբ, Գէորգ Պաղճեանը մի երկարաշունչ նամակ էր գրել Գանատայում թուրքիայի դեսպան Ալի թուլկանին: (Այն վերջին անգամ լոյս տեսաւ Փրանսերէն, անգլերէն եւ հայերէն լեզուներով, Լոս Անջելեսում, 1998 թ.):

Տուեալ նամակում, Գ. Պաղճեանը մէկ անգամ եւս պատմական փաստարկները հիման վրայ բացայայտում էր ամբողջ պատմութեան ընթացքում Օսմանեան կայսրութեան վարած ջարդարարական քաղաքականութիւնը այլազգի հպատակների նկատմամբ: Մատնանշում էր նաեւ, որ քաներորդ դարի սկզբին, հայերի նկատմամբ կատարուած ցեղասպանութեան զոհ գնացին մէկ ու կէս միլիոնից աւելի հայեր:

Գէորգ Պաղճեանի երկարաշունչ նամակը ամենայն խորութեամբ 1915-23 թթ. Հայոց Մեծ Եղեռնի խտացրած պատմութիւնն է, ուր հեղինակը անհերքելի արխիւային փաստերով եւ ակադեմիկական վկայութեամբ, մի կողմից բացայայ-

տում էր իրականութիւնը, իսկ միւս կողմից ժխտում՝ թուրք դեսպանի անհիմն ու ստապատիր տեսակէտները հայկական հարցի նկատմամբ:

Անցած տարիների իրադարձութիւնները ցոյց տուին որ Գէորգ Պաղճեանի գործադրած քրտնաջան աշխատանքները ի գուր չանցան, այլ իրենց իւրապատուկ ներդրումն ունեցան հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման պայքարի ընդհանուր գործում: Այսպէս, Գանատայի Բէպէք եւ Օնթարիո նահանգները պաշտօնապէս ճանաչեցին եւ դատապարտեցին 1915-23 թթ. հայերի ցեղասպանութիւնը: Իսկ Ապրիլ 23, 1996 թ., Գանատայի Խորհրդարանը, մէկուկէս միլիոն գոհ խլած Ապրիլ 24, 1915-ի հայկական ողբերգութեան 81-րդ ամեակի առթիւ, ի յիշատակ մարդկութեան դէմ կատարուած ոճիրներու իւրաքանչիւր տարուայ Ապրիլ 20-ից 27-ի շաբաթը հռչակեց «Մարդկութեան դէմ ոճիրի յիշատակումի շաբաթ»:

Յայտնի է, որ Գէորգ Պաղճեանը իր գիտական աշխատութիւնների եւ յօդուածների մեծ մասը գրել է Փրանսերէն: Ըստ Երեւոյթին, խորը իմաստ եւ նպատակ է եղել Փրանսերէն գրելու մէջ: Այնքան Փրանսերէն գրեց ու գրեց, որ 1999 թ. Մայիսի 29-ին, Փրանսայի Խորհրդարանը պաշտօնապէս ճանաչեց հայերի ցեղասպանութիւնը:

Այո՛, Գէորգ Պաղճեանը իր կեանքում, ամենայն բարեխղճութեամբ եւ մեծ նուիրումով կատարել է իր պարտքը հայրենիքի հանդէպ՝ իր ուսերին վերցնելով բաւականին ծանր բեռ, եւ աշխատել է ամէն կերպ բացայայտել արդարութիւնն ու ճշմարտութիւնը հայոց Մեծ Եղեռնի խնդրում:

Դեռեւս կարելի է շատ խօսել իր ժողովրդին ծառայութեան նուիրուած մեծ հայրենասէրի մասին, բայց բաւարարուենք այսքանով եւ Գէորգ Պաղճեանի պայծառ յիշատակը միշտ վառ պահած մեր սրտերում, կրկին անգամ բաց նակատով եւ յարգամէտով խոնարհուենք նրա սուրբ շիրիմի առջեւ:

## THE ATROCITIES OF THE ARMENIANS IN TRABZON REGION AND THE TRIAL OF TURKISH CRIMINALS

PROF. AVETIS PAPAZYAN

*The following is the text of the report by Prof. Avetis Papazyan, delivered in Armenian at the 10th conference dedicated to Historic Armenian cities and provinces focused on the communities of the black sea - Pontus Region, on May 5, 2002 at the UCLA International Conference.*

Up to the present days the Turkish historiography and the authorities officially refuse to accept the fact of the genocide of Western Armenians. It's very strange that they even ignore the facts and evidences related by their forefathers about the Armenian atrocities.

There are very important evidences concerning the Armenian Genocide in the Turkish sources, especially in the records of the trials of the Young-Turk government leaders and members of the Central Committee of the "Union and Progress" party, which took place during the years 1919-1920 in Istanbul. All these materials are undisputable and need no argumentation, because they are based upon Turkish documents and eyewitness testimonies.

In all the indictments which were brought in this trial, the extraordinary Court Martial commissions put the main stress upon the details of the massacres of Western Armenians and the plunder of their properties.

The facts testify that the deportations and massacres were premeditated

and carried out absolutely on the initiative of the "Union and Progress" party Central Committee and executed by the bloody hands of the members of the Special Organization (Teshkilat-i Mahsuse).

All these facts had been also confirmed by the verdict of May 22, 1919, of the trial relating to the Trabzon Armenians deportation and massacres.

On the eve of the Istanbul trial the provinces in the Ottoman Empire were divided into ten investigatory districts, appointing for each one prosecutors, examining judges and secretaries. The trial relating to the Trabzon and Samsun Armenians, which took place during, April-May 1919, was one of these ten districts.

Before giving detailed information about this trial, I would like to bring some portions from the testimonies of consuls and other eyewitnesses in Trabzon.

Here is a portion from the report of the American consul in Trabzon, Oscar S. Heyizer, sent to the American Ambassador in Istanbul, Henry Morgenthau, on June 28, 1915;

"I have the honor to enclose herewith for the information of the Embassy a copy of the proclamation which has been posted up in public places by the local authorities notifying the Armenians that within five days from its date, namely, on Thursday, July 1-st, the entire Armenian population of Trebizond and vicinity including men, women and children will be obliged to turn over to the government such property as they cannot take with them and start for the interior, probably for Eldjezireh or Mosul where they will remain until the end of the war. Upon their return after the war their goods will be returned to them.

It is impossible to convey an idea of the consternation and despair the publication of this proclamation has produced upon the people!<sup>1</sup>

The facts of deportations and massacres of Trabzon Armenians has been also confirmed by the Italian consul Giacomo Gorrini, who was at that time in town too. He described his impressions in the Italian newspaper "Il Messagero" on August 25, 1915. Here is a portion from that issue;

"In my district, from the 24th June onwards, the Armenians were all "interned",- that is, ejected by force from their various residences and dispatched under the guard of the gendarmerie to distant, unknown destinations, which for a few will mean the interior Mesopotamia, but for four fifths of them has meant already a death accompanied by unheard-of cruelties...It was a real extermination and slaughter of the

innocents, an unheard-of-thing, a black page stained with the flagrant violation of the most sacred rights of humanity, of Christianity, of nationality"<sup>2</sup>.

Soon the news of mass deportations and atrocious massacres of Armenians in the whole Ottoman Empire spread all over the world by the eyewitnesses and the representatives of the press.

"THE OUTLOOK" an American illustrated weekly journal of current events, under the title of "THE TURKISH ATROCITIES IN ARMENIA" on September 29, 1915, informed the following:

"...Viscount Brice, formerly British Ambassador to the United States, has now made through the Associated Press a powerful plea that America should try to stop the Armenian slaughter. Lord Brice is not one to misstate or exaggerate facts, Among other things, he says; "In Trebizond city, where the Armenians numbered over ten thousand, orders came from Constantinople to seize all Armenians. Troops hunted them, drove them to the shore, took them to sea, throw them overboard, and drowned them all-men, women, and children. This was seen and described by the Italian consul".

In 1914 the commander of the German Military Mission in Turkey was Marshal Liman Von Sanders. His personal interpreter was a German young officer Heinrich Furbucher, who after returning to Germany wrote his impressions about the Armenian atrocities under the title "Armenia 1915". The following portion relates to the Trabzon Armenians;

"They have emptied close to 1000 Armenian houses in Trabzon. The form of mass murdering that they employed had been used during the French revolution and called "Drowning". The men have been loaded in boats and sent deep into the sea. After several hours the boats returned empty. In the same city, local Young-Turk committee members during revelry for their entertainment chose the most beautiful girls from the orphanages"<sup>3</sup>.

A well-known Armenian scholar and active member of the Armenian Revolutionary Federation party Vahan Mirakhoryan, between 1912-1915 was a teacher in the Samsun Armenian school. During deportation he took the harsh road of exile with his countrymen and he has been an eyewitness of Samsun Armenians' hard sufferings. But as an Iranian citizen he hardly broke away from death. Afterwards he described the sufferings of his countrymen with all details and with a deep psychological inspiration in his book, titled "Year 1915, Days of Horrors".

"The last rays of the sun were sparkling upon the bayonets of the gendarmes, who were spread along the Toraman hills. But there was not any sign for investigation yet. The Armenian neighborhood was weeping. As if there was a dead body in every home. However, in the evening the horrible details were spread everywhere. As if the Armenian prisoners have been dropped from the Chaltiburun into the sea. As if every body was massacred under the Chakhally"<sup>4</sup>.

This is the way that begins the de-

scription of the deportation and massacres of the Armenians. Afterwards, when the Russian army advanced in the direction of Trabzon, Vahan Mirakhoryan wrote:

"During those critical days the remnants of the Armenians were in horrible sufferings yet. This was obvious from the informations of the Turks, who as a result of the Russian advances had been coming to Samsun from the interior provinces. The hunting and the massacre the male men had been going on impetuously. The women and children had been expelled continually from one place to another and annihilated by starvation. The others were dying from epidemics"<sup>5</sup>.

Naturally, it's possible to quote other facts too, about the Armenian massacres of the Trabzon region, but so much would be sufficient, and let's to look over the verdict concerning the responsables of the massacres of Trebizond Armenians. It must be pointed out from the beginning that the records and resolutions of the proceedings were issued in small circulation in the supplements of the Turkish official newspaper "Takvim-i Vekai" (in Arabic script).

Now, we have at our disposal only the verdict relating to the proceedings of the Trabzon trial. The records of proceedings must be found in the Turkish archives.

By the way, at the beginning of this verdict there are enough details about the deportations and massacres of Trabzon Armenians and facts about the losses of their abandoned properties.

Besides there are some materials too relating to the Trabzon trial in the records of other trials and indictments.

The trial of the Young Turk government leaders and members of the Central Committee of the Union and Progress party began in Istanbul on April 28, 1919. From the proceedings of the fourth trial it becomes obvious that the orders of deportations and massacres of the Armenians had been given very secretly. For example; During the proceedings of Riza Bey, who was from Trabzon and a member of the Central Committee and the Special Organization (Teshkilat-i Mahsuse), the president of the Extraordinary Court Martial Mustafa Nazim pasha pointed out that the deportations and the massacres of the Armenians began, when the leader of Teshkilat-i Mahsuse Behaeddin Shakir Bey made tours in the provinces and issued some secret directives<sup>6</sup>.

Besides, the following portion from the accusation act of the first trial confirms; "The testimony given by former Deputy of Trabzon, Hafez Mehmed, describes how the Armenians had been placed in the boats on the Black sea and drowned en masse. Even when he had informed Talat Bey of this tragedy, the latter had not taken any action against the governor Djemal Azmi. This circumstance adds even more gravity to the crimes of Talat Bey".

At the end of this accusatory act is written the following;

"On pages 34, 38, and 43 of the investigative loose papers in the testimony of Lutfi Bey, the General Director of the Revenue Section of the Ministry of Finance, regarding the activities

of the Party Responsible Secretary of Trabzon Nayil Bey, as well as the tragedy perpetrated in Trabzon and the people who were responsible for it".

As it was above mentioned, by the order of the Turkish government all Armenians were obliged during a few days to leave their dwellings, the whole movable and immovable properties, and only with the hand bags to take the severe way of exile towards the desert of Mesopotamia.

As soon as the Armenians went away from their residences, Mohammedan immigrants from the other regions of Turkey, by the initiative of the government unashamedly took over the Armenian houses, stores, plundering all their properties.

In those days the Turkish government openly worked to legitimate the plunder of the abandoned properties of the Armenians by some laws and regulations, which never took effect and remained on the paper. Here is a portion from the verdict of May 22, 1919 about the abandoned properties of Trabzon Armenians;

"The chief of the police Nuri efendi was appointed with other officials to regulate the law and order in the town. Besides he had been involved in the commissions of deportation, secret service and in the group of safeguard for the gathered-jewelry. He was assigned to collect and make a list of the abandoned properties of the Armenians, but he didn't undertake any active steps to protect the abandoned properties. Even the storage of the abandoned properties of the Armenians, by his permission, were done with untrustworthy, ill-orga-

nized people, without keeping any records. In this way by his guilt, the abandoned properties were plundered and vanished totally".

The brigands which consisted of criminals, dissolute, corrupt people and gendarmes of the same level, had to accompany the caravans of the Armenian deportees. Besides, these caravans rapidly gathered for deportation, were deprived of any means of protection. Once the Armenian deportees left the town and found themselves in the isolated areas, the men were separated from women. The bands of bandits which comprised the above mentioned criminals, attacked them and plundered their belongings and then in unimaginable atrocious manners, massacred and annihilated all of them. Then they took those defenseless women to other areas, where they were raped and their jewelry and clothings were stolen. Subsequently many of them, after struggling along the deserted roads, died of hunger and thirst during their agonizing journey. The survivors were dispatched to distant regions via the Erzindjan road. Under the pretext of their protection, some of the women and children who had remained in Trabzon were placed in hospitals and homes run by dervishes, subsequently, under the pretext of transporting them via sea routes to other regions, they were placed on ships, one group after another, and once on the open sea threw them overboard and drowned them all..".

The following portion from the beginning of the Trabzon verdict openly

confirms the plan of annihilating of all Armenians.

In the verdict of Trabzon trial it was perfectly proved that the massacres of Armenians were aforethought and for the implemented severe guilts the court Martial under items 170-171 of the criminal code pronounced death penalties to the governor of Trabzon Djemal Azmi Bey, and Party Responsible Secretary of Trabzon Nayil Bey, both were condemned by default.

Mehmed Ali Bey, Director of Taxation, who was present at the proceedings was condemned to 10 years of severe exile. The others were condemned to 1-2 years in jail.

It's very strange and illogical, that only Djemal Azmi and Nayil beys were condemned to capital punishment and the others received slight punishments.

Judges, of course not in all cases, demonstrated necessary consistency. Many of them, being connected with the young Turks were often inclined not to delve deep into the facts, and not to adopt strict restrictions. If there did not arise any doubt in condemning to death the defendants brought to trial by default, unwarranted forbearance was shown in inflicting punishment upon those present.

In those days the Ittihadists set many fraud snares in order to disturb the proceedings and alleviate the guilt of defendants. The same has been committed in the verdict of Trabzon. For example;

The guilt of the chief of Trabzon Police Nuri Bey was unpardonable of-

fense, but he was convicted to a term in prison of one year.

However, the verdict relating to the Trabzon Armenians deportations and massacres were partly carried out by the Armenian vengeful young men Aram Yerganyan and Arshavir Shirakyan. On April 17, 1922 they shot Djemal Azmi the governor of Trabzon, and Behaeddin Shakir the leader of Teshkilat-i Maheuse in Berlin.

Here we have talked only about the deportations and massacres of the Armenians of the Trabzon region. In reality, it was planned to exterminate completely the Armenian population of the Ottoman Empire. During the Last session of the Trabzon trial it was mentioned that "...The methodically and strictly organized massacres and plundering were not planned in Trabzon, but outside its boundaries<sup>10</sup>".

Unfortunately Turkey, after all these years refuses to acknowledge these terrible facts. In reality the entire world has realized how the bloody Sultan Abdul Hamid and his successors, the Young-Turks, committed a policy of genocide to resolve the Armenian Question and

how they took advantage of World War I as an opportunity to exterminate completely the Armenian population in the Ottoman Empire.

**NOTES**

1. *The Armenian Genocide, Compiled and Edited by Libarid Azadian, Armen Donoyan, 1987; Los Angeles, p.25-27.*
2. *Ibid., p.126-127.*
3. *Heinrich Firbucher, Armenia 1915, Yerevan, 1995, trans. by Krikor Djanigyan, p.43-44.*
4. *Vahan Mirakhoryan, Year 1915, Days of Horrors, Venice, 1949, p.141*
5. *Ibid., P.411. (in Armenian).*
6. *Takvim-i Vekayi, 8 Mayis, 1335 (1919) #3549.*
7. *Avetis Papazyan, The Genocide of Armenians according to the Documents of the Trial of the Young Turks, Yerevan, 1989, p.44. (in Armenian)*
8. *Ibid., p.47.*
9. *Ibid., p. 169.*
10. *Ibid., p. 168.*

NOR GYANK, VOL. XXIV, No. 25, JUNE 6, 2002

**ՄԵՐՉԱԻՈՐ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐ**

(Հատ. 20, Երեւան, 2001, էջ 350)

Օրերս Երեւանում լոյս տեսաւ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ» խորագրով մատենաչարի 20-րդ յօդուեանական հատորը:

Գիտական բարձր մակարդակով հագեցած այս գրքում ընդգրկուած են ինստիտուտի տարեց եւ երիտասարդ արեւելագէտների աշխատութիւնները: Աշխարհագրական-տարածքային առումով նրանք ընդգրկում են Արարական Արեւելքը, Իրանը, Թուրքիան, Քրիստոնեայ Արեւելքը եւ հին Արեւելքը: Թեմատիկ առումով ժողովածուի յօդուածաշարում արծարծուած են հին շրջանի, միջին դարերի, նոր եւ նորագոյն պատմութեան, քաղաքականութեան, միջազգային եւ տարածաշրջանային յարաբերութիւնների, գրականութեան, արուեստի, լեզուաբանութեան եւ յարակից այլ արդիական հարցեր:

Յօդուածները հիմնականում շարդրուած են հայերէն, իսկ մի քանիսը՝ ռուսերէն: Իւրաքանչիւր յօդուածի վերջում տրուած են նաեւ անդերէն ամփոփումները, որպէսզի օտար ընթերցողը գնդափար կազմի բովանդակութեան եւ ընդհանրապէս առաջ քաշուած հարցերին:

Նշենք, որ 1989 թուականից ընդհատուել էր այս մատենաչարի հրատարակումը, երկրի քաղաքական եւ սոցիալ-տնտեսական որոշակի դժուար

րութիւնների հետեւանքով: Ծնորհիւ հայ բարերարների հովանաւորութեան այն սկսեց կրկին հրատարակուել 1996 թուականից սկսած: Գոհունակութեամբ պիտի մատնանշենք, որ այս մատենաչարի վերջին 18-19-20-րդ հատորները հրատարակուել են «Արմէն եւ Բերսարէ Ճերեճեան» հիմնադրամի նախագահ Արսէն Ճերեճեանի նիւթական օգնութեան շնորհիւ:

Այսօր էլ հայրենասիրական խորը նուիրումով նա շարունակում է իր անշահասխնդիր դրամական օգնութիւնը: Այդ եւ վկայում հիմնադրամի մեկնաստութեամբ հրատարակուած բազմաթիւ գրքերը, ժողովածուները, մատենաչարները, գիտաժողովների կազմակերպումը, ինչպէս նաեւ երիտասարդ արեւելագէտների խրախուսումը:

Իսկ Արեւելագիտութեան Ինստիտուտի ձեռք բերած յաջողութիւնների բնագաւառում իր ծանրակշիռ լուծման ունի ինստիտուտի տնօրէն Դոկտ. Փրոֆ. Նիկողայ Յովհաննիսեանը: Նրա գործադրած մեղուածան աշխատանքի շնորհիւ է, որ այսօր Արեւելագիտութեան Ինստիտուտը միջազգային չափանիշով վերելք է ապրում: Իզուր չէ, որ 2000 թ. Սեպտեմբերի 2-ին ինստիտուտը դարձաւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքոյ գործող Արեւելագիտական եւ Ասիական Ուսումնասիրութիւնների Միջազգային Միութեան անդամ:

## ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆԻՆ

Յարգելի Վահան Վահանեան,

իմ ամենաջերմ ողջոյնն ու ամենաբարի մաղթանքները՝ «Նոր Հայաստան» օրաթերթի հրատարակութեան 10-ամեակի, ինչպէս նաեւ այդ կապակցութեամբ, օրերս լոյս ընծայուած «Խմբագրի Օրատետրէն Փրցուած էջեր» խորագրով, ձեր ուշագրաւ գրքի առթիւ:

Անցած 10 տարիների ընթացքում, «Նոր Հայաստան»ը դարձաւ Լոս Անջելեսի հայահոծ համայնքի ամենասիրուած թերթերից մէկը:

Յարգելով ազատ խօսքի արտայայտման սկզբունքը, ձեր օրաթերթում պատշաճ մակարդակով գետնդուռ եւ քաղաքական, պատմական, մշակութային եւ այլ գնազան հրապարակասական յօդուածներ:

Հետաքրքրութեամբ կարդում եմք նաեւ պարբերաբար հրատարակուող հայանպաստ բովանդակութեամբ եւ հայրենասիրական շունչով սոգորուած գրքերը:

Բնականաբար, կենցաղային տեղեկատրուութեան տեսանկիւնից, ընթերցողի համար խիստ կարեւոր են նաեւ բազմաբնոյթ ծանուցումների, յայտարարութիւնների եւ գովազդների առկայութիւնը:

Այս բոլորով հանդերձ հարկ է նշել, որ լրագրողի գործը դժուար է, յոգնաբեկ, եւ պահանջում է քրտնաջան աշխատանք եւ գոհողութիւն, որը դուք կատարում էք սիրով եւ հայրենասիրական խորը նուիրումով:

Այս մասին դուք եւս անկեղծօրէն խոստովանել էք ձեր նորընծայ գրքի վերջում, որ 10 տարիների ընթացքում, ճակտի քրտինքով ու վազվզուքով կանգուն էք պահել ու պիտի պահէք «Նոր Հայաստան»ը:

Այս ուրախ եւ յիշարժան յոբելեանի առթիւ, կրկին անգամ իմ ողջոյնները յղելով, սրտանց շնորհաւորում եմ ձեզ, ինչպէս նաեւ ձեր անխոնջ անձնակազմին եւ աշխատակիցներին, բարեմաղթելով՝ քաջաուղղութիւն, յարատեւութիւն եւ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ:

ՓՐՈՅ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

**Նոր Հայաստան Օրաթերթ**

ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 4, 2002, ՓԱ. ՏԱՐԻ, ԹԻԻ 83

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամանօրյա մաղթանքներ \_\_\_\_\_ էջ 1
2. Թուրք գրականագետ Հալիդե Էդիբը Կոմիտաս վարդապետի մասին \_\_\_\_\_ 5
3. Մեծ Եղեռն ու Ցեղասպանությունը միևնույն իմաստն ունեն \_\_\_\_\_ 16
4. Գրախոսություն. Կիլիզա. Հայկական Քիլիս \_\_\_\_\_ 22
5. Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Փրոֆ. Նիկողայ Հովհաննիսյանին \_\_\_\_\_ 27
6. Հայրենիքի կարոտով ապրող բանաստեղծը \_\_\_\_\_ 28
7. Բաց նամակ Նոր Հայաստան օրաթերթին \_\_\_\_\_ 33
8. Մեր ժողովրդի պատմության կարևոր էջերը մոռացությունից փրկելու վեհ գործին նվիրյալ փրոֆ. Ալիշան Բայրամյան \_\_\_\_\_ 36
9. ճշմարտությունը հայոց ցեղասպանության մասին \_\_\_\_\_ 40
10. Երբ հայն է ջուր լցնում թուրք ուրացողներին ջրաղացին \_\_\_\_\_ 46
11. Մեծ Եղեռնի 87-րդ տարելիցը. ժամանակագրություն \_\_\_\_\_ 54
12. Գրիգոր Զոհրապի Քրեական իրավունք թուրքերեն անհայտ գրքի մասին \_\_\_\_\_ 69
13. Բեթել . Եկեղեցու և դպրոցի պատմությունը \_\_\_\_\_ 73.
14. Նամականի. Գևորգ Պաղճյանի պայծառ հիշատակին \_\_\_\_\_ 74
15. Տրապիզոնի հայություն կոտորածը և թուրք ոմրագործների դատավարությունը \_\_\_\_\_ 81
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդները \_\_\_\_\_ 87  
նրա համ. 20 \_\_\_\_\_
17. Նոր Հայաստան օրաթերթի խմբագիր Վահան Վահանյանին \_\_\_\_\_ 88